Քաղաքական գործընթացներում՝ օրենսդրական նախագծերի մշակումից մինչև արտաքին ու ներքին քաղաքական որոշումների կայացում, շատ կարևոր է մեծածավալ տեղեկատվական հոսքերի կառավարումը, որոնք իրենցից ներկայացնում են հասարակական կարծիքի, ներքին և արտաքին քաղաքական, սոցիալ-տնտեսական փոխհարաբերությունների ու գործոնների խրթին թնջուկ, և հնարավոր չէ կատարել միայն առանձին իմպերատիվների ուսումնասիրություն ու ըստ այդմ հասնել ճշգրիտ եզրահանգումների, կամ գտնել երկու և ավելի իմպերատիվների կոռելացիաներ ու դրանք հիմք ընդունելով կայացնել արդյունավետ քաղաքական որոշումներ: Այդ ամենը հսկայական ջանքեր, ժամանակ և ռեսուրսներ է պահանջում: Խնդիրը նրանում է, որ լույսի արագությամբ տարածվող տեղեկատվական իրականությունում այդպիսի վերլուծությունները, հատկապես այն դեպքում, երբ խոսքը մեծածավալ տվյալների մասին է, կարիք ունեն անհապաղ տեսակավորման, պահպանման, մոդելավորման և վերլուծության, ինչը հնարավոր չէ, ավելին, այլևս արդյունավետ չէ կատարել վիճակագրական, սոցիոլոգիական և տեղեկատվական-վերլուծական դասական մեթոդներով:

Որպեսզի հասկանանք, թե մեծ տվյալները երբ և ինչպես կարող են հանդես գալ որպես սոցիոլոգիական և վիճակագրական հետազոտությունների հարմար մեթոդ, անհրաժեշտ է ավելի շատ իմանալ մեծ տվյալների բնորոշ հատկանիշների մասին:

- ***Ծավալ.*** այս բնութագրիչը վերաբերում է հսկայական թվով տվյալներին, որոնք ենթակա են վերլուծության:Տվյալների մեծ ծավալները կապված են տվյալների հավաքագրման անընդհատ աճող թվաքանակով գործիքակազմի (օրինակ՝ սոցիալական ցանցերի ռեսուրսներ, բջջային հավելվածներ, սենսորային սարքեր), ինչպես նաև վերջին շրջանում կատարելագործված տեղեկատվության պահպանման համար նախատեսված կրիչների և համակարգչային ցանցերի միջոցով տվյալների պահպանման և փոխանցման մեծացող հնարավորության հետ:
- ***Արագություն.*** այս հատկանիշը վերաբերում է ինչպես արագությանը, որով կարող են ի հայտ գալ տվյալների հավաքագրման դեպքերը, այնպես էլ ճընշմանը, որն առաջանում է իրական ժամանակում տվյալների մեծ հոսքերի հետ աշխատելիս: Սոցիալական տեղեկատվության հավաքագրման միջոցներում նոր տեղեկությունը տվյալների բազայում կարող է ավելանալ տարբեր արագությամբ՝ ժամում մեկից մինչև մի քանի տասնյակ հազարավոր դրվագներով:
- ***Բազմազանություն.*** խոսքը գնում է տեղեկատվության հավաքագրման ձևաչափերի բազմազանության մասին: Բացի կառուցվածքավորված տվյալների բա-

[1] Մասնավորապես ԱՄՆ վերջին երկու նախագահների՝ Բ. Օբամայի և Դ. Թրամփի նախընտրական քարոզարշավների նախագծման ժամանակ

զաներից, գոյություն ունեն տվյալների չկառուցվածքավորված հոսքեր՝ փաստաթղթերի, նկարների, էլեկտրոնային նամակների, տեսանյութերի, սարքերի և այլ տեղեկատվության աղբյուրների միջև կապերի տեսքով, ինչը ստեղծում է դիտարկումների անհամասեռ բազմություն: Այդպիսի բազմազանության հետևանքն այն է, որ դրանց կառուցվածքավորումը մեծ ջանքեր է պահանջում, այդ իսկ պատճառով այդ խնդիրը հիմնարար է դառնում մեծ տվյալների հետ աշխատելու ժամանակ:

Ամերիկյան Oracle կորպորացիան մեծ տվյալները բնութագրում է «4V»-երով[2], ըստ որի վերոնշյալ հիմնարար երեք բնութագրիչներին ավելանում է նաև չորրորդ բնութագրիչը՝ ***արժեքը***՝ տվյալներն ունեն ներքին արժեք, որն անհրաժեշտ է հայտնաբերել: Գոյություն ունեն տվյալներից արժեք ստեղծելու քանակական և հետազոտական մի շարք մեթոդներ: Ներկայումս տեխնոլոգիական առաջընթացի հետևանքով տվյալների պահպանման և հաշվարկի գինն էականորեն նվազել է՝ այն պայմանավորված է տվյալների առատությամբ, որոնց հենքի վրա հնարավոր է դառնում կատարել ընտրանք սխալի բավականին փոքր տոկոսով և ճշգրտության բավականին մեծ հավանականությամբ: Այնուամենայնիվ, տվյալներից արժեքավոր տեղեկատվության ստացումը պահանջում է խելացի և խորաթափանց վերլուծողներ, բիզնես-օգտատերեր և ղեկավարներ: Մեծ տվյալների ներկայիս խընդիրը մարդկային գործոնն է՝ մասնագետները պետք է սովորեն կատարել ճիշտ հարցադրումներ, բացահայտել օրինաչափություններ, կատարել հիմնավորված ենթադրություններ և վարքի կանխատեսումներ [**11**]:

Մեծ տվյալների հիմնական չորս բնութագրիչներին այլ հետազոտողներ ավելացրել են նաև ***փոփոխականությունը*** (ժամանակի մեջ տվյալների հաջորդականության բացակայությունը), ***հուսալիությունը*** (տվյալներին անվերապահորեն վստահելու հնարավորությունը) և ***համալիր բնույթը*** (տվյալների բազմաթիվ աղբյուրները համադրելու անհրաժեշտությունը) [**2**]:

Որպեսզի քաղաքական որոշումներն առավելագույնս արդյունավետ լինեն, համակողմանի ուսումնասիրվեն քաղաքական գործընթացների շահագրգիռ բոլոր կողմերի նախապատվություններն ու շահերը, և հնարավոր լինի կանխատեսել այս կամ այն որոշման հետևանքները, ըստ այդմ մշակել ելքերի այլընտրանքներ կամ ճգնաժամային իրավիճակի կառավարման գործուն տարբերակներ, քաղաքական գործիչները պետք է ունենան օբյեկտիվ փաստերի վրա հիմնված իրավիճակների հստակ պատկեր, որը տեսականորեն կարելի է դուրս բերել մեծ տվյալների ալգորիթմներով:

Մեծ տվյալները ենթադրում են ավելին, քան պարզապես տեղեկատվության հսկայական ծավալների վերլուծություն: Խնդիրն այն չէ, որ կազմակերպությունները ստեղծում են հսկայական քանակությամբ տվյալներ, խնդիրը նրանում է, որ մեծ մասը ներկայացվում է այնպիսի ձևաչափով, որը լիովին չի համապատասխանում տվյալների բազայի ավանդական կառուցվածքային ձևաչափին: Օրինակ՝ էլեկտրոնային ամսագրերը, տեսանյութերը, տեքստային փաստաթղթերը, մեքենայական ծածկագրերը, աշխարհագրական տվյալները, կամ օրինակ՝ սոցիալական ցանցերում ստեղծով կոնտենտն իրենց կառուցվածքային ձևաչափերով խիստ տարբեր են, հետևաբար դժվարություններ են առաջանում դրանք իրար հետ համադրելու և վերլուծելու ժամանակ:

Մեկ այլ խնդիր է, որ այդ տվյալները պահվում են լայնածավալ էլեկտրոնային պահեստներում, երբեմն նույնիսկ կազմակերպություններից դուրս, ոմանք էլ առհասարակ չեն պահեստավորվում, ինչն էլ բերում է կարևոր ինֆորմացիոն հոսքերի կորստի, իսկ այնպիսի մեծ տվյալները, որոնք պահվում են մեգակորպորացիաների սերվերներում, իրենց ամբողջ ծավալով հասանելի չեն տարբեր շահերի խմբերին: Այսպիսով, երբ խոսքը վերաբերում է քաղաքական ինստիտուտներին, ապա մեծ տվյալների ձեռքբերումը ստեղծում է բանակցությունների մի նոր ձևաչափ ու մշակույթ գործող իշխանական ուժերի և խոշոր կորպորացիաների միջև: Ինչևէ, անգամ 2020 թ.-ին հարցը նրանում չէ, թե ինչպես մուտքի հնարավորություն ձեռք բերել դեպի մեծ տվյալների շտեմարաններ, այլ այն, թե ինչպես դրանց հետ աշխատել: Այսօր անգամ կորպորացիաները կարող են մուտք ունենալ իրենց հսկայական թվային տվյալների շտեմարաններ և չունենալ անհրաժեշտ գործիքներ այս տվյալների միջև իմաստավորված կապեր հաստատելու, համապատասխան գործուն ալգորիթմեր մշակելու և դրանց հիման վրա նշանակալից հետևություններ անելու համար: Սրան գումարվում է այն փաստը, որ այժմ տվյալներն ավելի ու ավելի հաճախ են թարմացվում, և ստեղծվում է մի իրավիճակ, որի ընթացքում տեղեկատվության վերլուծության ավանդական մեթոդները չեն կարող պահպանել անընդհատ թարմացվող տվյալների հսկայական ծավալներ, ինչը, ի վերջո, ճանապարհ է ստեղծում մեծ տվյալների տեխնոլոգիաների զարգացման համար:

Որոշ ժամանակ անց, կախված այն բանից, թե ինչ տեմպերով կընթանան տեխնոլոգիական

[2] 4V՝ Volume-ծավալ, Velocity-արագություն, Variety-բազմազանություն, Value-արժեք (“Oracle” Enterprise)

զարգացումները, կստեղծվի այնպիսի իրականություն, երբ բոլոր ինստիտուտների և համակարգերի կառավարման հիմքում ընկնելու են մեծ տվյալների վերլուծությունները. սրան ընդամենը ժամանակ է պետք, որպեսզի ձևավորվեն կումուլյատիվ տվյալերի բազաներ և դրանք համակարգելու համար մշակվի ընդհանուր մեթոդաբանություն, ստեղծվի վերլուծության գործիքակազմ, որն ի դեպ, արդեն իրականացվում է և հնարավորինս կիրառվում օրինակ՝ բիզնես կանխատեսումներում, մարքեթինգային պլանավորման, պետական կառավարման համակարգերի մոդելավորման մեջ և այլուր: Այդ գործիքակազմն իր ընդհանուր մեթոդաբանությամբ հիմք է ծառայում նաև քաղաքական կանխատեսումներում և քաղտեխնոլոգիաներում:

Ըստ էության, մեծ տվյալների հայեցակարգը ենթադրում է հսկայական ծավալի և բազմապիսի տեղեկատվության հետ աշխատանք, որը թարմացվում է շատ հաճախ և տեղակայված է տարբեր աղբյուրներում: Ըստ «Forrester» խորհրդատվական ընկերության հակիրճ ձևակերպման՝ «մեծ տվյալները միավորում են տեխնիկան և տեխնոլոգիաները, որոնք տրվյալներից իմաստ են քաղում ծայրահեղ գործնականության սահմաններում»:

Մեծ տվյալների տեխնոլոգիաների ներուժը հիմնված է օգտատերերի այսպես կոչված «թվային հետքերի» մշակման և օգտագործման վրա, որի հիման վրա էլ շահագրգիռ անձանց համար մատչելի է դառնում քաղաքացիների թվային պրոֆիլների ձևավորման հնարավորությունը [**1**]: Թվային աշխարհում ամեն օր մարդիկ թողնում են զգալի քանակությամբ էլեկտրոնային հետքեր: Հենց այդպիսի թվային պրոֆիլների վերլուծության վրա է հիմնվում կառավարման սուբյեկտների քաղաքական շահերի իրագործումը: Սա իր հետ բերում է ինչպես հասարակական կարծիքի քաղաքական մանիպուլյատիվ հնարքների կիրառման վտանգներ [**6**], այնպես էլ լայն հնարավորություններ է բացում քաղաքական կարևոր որոշումների կայացման հարցում:

Քաղաքական գործընթացներում այսօր մեծ տեղ են զբաղեցնում թվային մեդիա աղբյուրները և սոցիալական ցանցերը: Այժմ թե՛ գերտերությունների, թե՛ երրորդ աշխարհի քաղաքական գործիչներն իրենց գործունեության հանրայնացման լավագույն վայրը համարում են համացանցը, իսկ ավելի նեղ իմաստով՝ սոցիալական ցանցերը: Դրանք դարձել են քաղաքական գործիչների համար համաշխարհային մասշտաբով իրենց կարծիքը, դիրքորոշումը, որոշումը և քայլերը մեծաթիվ մարդկանց և կառույցներին հասցնելու գերարագ և արդյունավետ մեթոդ, որն էլ իր հերթին բերում է նույն արագությամբ հետադարձ արձագանքի, և քաղաքական գործընթացների ու որոշումների կայացման արագությունը ուղիղ համեմատական է դառնում որոշումների հանրայնացմանը: Այսպես օրինակ՝ Դոնալդ Թրամփի 1 թվիթը դառնում է համաշխարհային մասշտաբի մեդիա առիթ և ներգործում այս կամ այն իրավիճակում առանձին ինստիտուտների, շահերի խմբերի վրա, ստեղծում որոշակի՝ հաճախ նախապես պլանավորված քաղաքական ֆոն: 2018 թ.-ին ՀՀ-ում հեղափոխության ժամանակահատվածում ավելի քան նկատելի էր սոցիալական ցանցերի կիրառման րոպեական հասցեականությունը և դրա արդյունավետությունը քաղաքացիների մոբիլիզացման, մանիպուլացիոն սխեմաների կիրառման և քաղաքական իրավիճակների փոփոխման համատեքստում: Այդ միջոցներով կառավարման շարունակականությունը նկատվում է մինչ օրս «կառավարություն-քաղաքացի» երկխոսության ձևաչափում, որն էլ, իհարկե, ունի իր սահմանափակումները և դժվարությունները: Բնականաբար ընտրված անկառավարելի տեղեկատվական հոսքերի օգտագործումը կարող է բերել հակառակ էֆեկտի, երբ քաղաքական լուրջ որոշումները հանդիպում են հասարակական առճակատման, բացասական վերաբերմունքի և առաջացնում լրացուցիչ խնդրահարույց իրավիճակներ քաղաքական, այդ թվում իշխանական ուժերի համար:

Վերադառնալով մեծ տվյալներին, հարկ է նկատել, որ դրանց մշակման արագությունը թույլ է տալիս իրավիճակային կանխատեսումներ կատարել բավականին մեծ ճշգրտությամբ, իսկ այդ դեպքում բնականաբար հնարավոր կլինի նախապես վերլուծել հասարակության կամ շահագրգիռ կողմերի վերաբերմունքը, դիրքորոշումը և առճակատման իրատեսությունը, ինչի արդյունքում էլ հնարավոր կլինի մշակել այլընտանքային քաղաքական մոդելներ, ճգնաժամային իրավիճակի կառավարման գործուն սխեմաներ և ապագայի համար առաջարկել քաղաքական լուծումներ:

Քաղաքականության, այդ թվում ՀՀ քաղաքական համակարգում մեծ տվյալների կիրառման արդյունավետության մասին խոսելուց զատ, պետք է ընդգծել նաև դրանց սահմանափակումները: Այսպես օրինակ՝

- Մեծ տվյալները նախագծված են մեծամասշտաբ տեղեկատվության մշակման համար, մինչդեռ ՀՀ-ում դեռ չենք կարող փաստել, որ կան հավաքագրված մեծ տվյալների գործուն շտեմարաններ, որոնցից կարելի է դուրս բերել քաղաքական ենթատեքստերը և ենթարկել երկրաժամկետ խորքային ու բովանդակային ուսումնասիրության, բացառությամբ

սոցիալական մեդիա հարթակների վերլուծության:

- Մեծ տվյալները նախատեսված են ավելի արագ ստացված եւ փոփոխվող տեղեկատվությունը վերամշակելու համար, ինչը նշանակում է խորքային հետազոտություններ և ինտերակտիվություն: Որոշ դեպքերում, արդյունքը ստեղծվում է ավելի արագ, քան բեռնըվում է վեբ-էջը: Օրինակ՝ սոցիալական ցանցերում որևէ քաղաքական գործչի գրառման տակ հայտնվող մեկնաբանությունների հոսքը բավականին անկառավարելի է դառնում, հատկապես հասարակական խնդրահարուց հարցերի վերաբերյալ թեմաներով հրապարակումներում, և մինչ այս կամ այն որոշման վերաբերյալ կարծիքի համընդհանուր ուսումնասիրությունը և դրա արդյունքում հասարակական տրամադրությունների պարզաբանումը, հասարակությունն արդեն հայտնում է իր վերաբերմունքը, և արդեն իսկ պետք է հաշվի նստել դրանց հետևանքների հետ, իսկ կանխատեսումն արդեն ժամանակավրեպ է: Նման ճգնաժամային իրավիճակի բախվեցին ՀՀ իշխանությունները 2020 թ.-ին նոր տիպի կորոնավիրուսային համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրության պայմաններում, երբ ցանկացած կայացվող որոշման հանրայնացումից առաջ արդեն իսկ կային «կանխատեսված» և շրջանառվող տեսակետներ, և ենթադրյալ կայացվելիք որոշումների նկատմամբ կանխավ ձևավորված դիրքորոշումներ, իսկ յուրաքանչյուր որոշման ու հանրային հայտարարության տակ թվային մեդիա հարթակներում մեկնաբանությունների տարափի կառավարումն ուղղակի անհնարին էր՝ յուրաքանչյուր նոր որոշում հանդիպում էր սուր քննադատության և անկառավարելի կիբեռ-բուլինգի թե՛ իրական, թե՛ կեղծ օգտատերերի հաշիվների կողմից:
- Մեծ տվյալները նախատեսված են ոչ կառուցվածքային տվյալների մշակման համար, որոնց օգտագործման եղանակները սկսում ենք յուրացնել այն բանից հետո, երբ կարողանանք կազմակերպել դրանց հավաքագրումն ու պահպանումը, և անհրաժեշտ են ալգորիթմներ, ինչպես նաև երկխոսության հնարավորություն՝ միտումների որոնումը հեշտացնելու համար:
- Մեծ տվյալների հետ աշխատելիս արդյունքը ստացվում է տվյալները զտելու գործընթացում հաջորդական մոդելավորմամբ. նախ՝ առաջ է քաշվում վարկած, կառուցվում է վիճակագրական, տեսողական կամ իմաստաբանական մոդել, որի հիման վրա հաստատվում է վարկածի ճշմարիտ լինելը, որից հետո առաջ է քաշվում մյուս վարկածը: Այս գործընթացը հետազոտողից պահանջում է կա՛մ մեկնաբանել տեսողական իմաստային փոփոխականները, կա՛մ կատարել գիտելիքների վրա հիմնված ինտերակտիվ հարցումներ, կա՛մ մշակել «մեքենայական ուսուցման» ադապտիվ ալգորիթմներ, որոնք ի վիճակի են ստանալ ցանկալի արդյունք: Այնուամենայնիվ, նման ալգորիթմի կյանքի տևողությունը կարող է լինել բավականին կարճ, որը հնարավոր է և չարդարացնի իր վրա ներդրվող ռեսուրսները ու ծախսերը:

Մեծ տվյալների վերլուծության տարբեր մեթոդներ են մշակվել, որոնցից կարելի է դուրս բերել քաղաքական գործընթացների համար առավել արդյունավետները: Սակայն հարկ է քաղաքական գործընթացները տիպաբանել և ըստ այդմ հասկանալ, թե որ գործընթացի դեպքում ինչպիսի վերլուծություն է նպատակահարմար կիրառել: Այսպես օրինակ, եթե ընտրությունները դիտարկենք որպես առանձին քաղաքական գործընթաց, ապա վերջինիս համար կիրառելի կլինի մեծ տվյալների վերլուծության մի մեթոդը (օրինակ՝ «Կլասիֆիկացիա»՝ դասակարգման մեթոդը, որը թույլ է տալիս կանխատեսել ընտրողների վարքը, այս կամ այն քաղաքական գործչի օգտին քվեարկելու վերաբերյալ որոշում կայացնելը և այլն), իսկ քաղաքական գործչի վարկանիշի համար՝ մեկ այլ մեթոդ (օրինակ՝ A/B testing- Ա/Բ թեստավորում, որտեղ վերահսկիչ ընտրանքային համախմբությունը հաջորդականորեն համեմատվում է մյուսների հետ, որով հնարավոր է դառնում դուրս բերել հաջողությունների համար փոփոխականների օպտիմալ կոմբինացիան, օրինակ՝ առաջադրվող քաղաքական գործչի հանդեպ ընտրողի վերաբերմունքը: Պետք է նաև փաստել, որ նմանատիպ վերլուծությունների համար անհրաժեշտ է հավաքագրել և պահպանել առնվազն մի քանի տարիների տվյալներ, որի արդյունքում կկարողանանք իրականացնել հսկայական քանակությամբ իտերացիաներ՝ կրկնություններ, և այդպիսով ստանալ վիճակագրական հուսալի արդյունք:

Առաջիկայում մեծ տվյալների վերլուծության զարգացման պատմության նոր շրջանը կբերի տվյալների մշակման երկաստիճան մոդելի: Առաջին մակարդակը կլինի «ավանդական» «Big Data» վերլուծությունը, երբ տվյալների մեծ հավաքակազմը իրական ժամանակում չի վերլուծվում: Նոր՝ երկրորդ մակարդակը հնարավորություն կտա իրական

ժամանակում համեմատաբար մեծ քանակությամբ տվյալների վերլուծություն կատարել, հիմնականում «հիշողության վերլուծության»՝ in-memory, տեխնոլոգիաների շնորհիվ: Սա, թերևս, մեծ հեռանկարներ կբացի քաղաքական ինստիտուտների համար որոշումների կայացման գործընթացում, երբ պարբերաբար կիրառվող քաղտեխնոլոգիաները և դրանց հետևանքները թվայնացվելով կմուտքագրվեն արհեստական բանականության հիշողության մեջ և ի վիճակի կլինեն մաթեմատիկական ճշգրտությամբ դուրս բերել օրինաչափություններ և կատարել իրատեսական կանխատեսումներ:

Քաղաքական գործընթացների ձախողումների հիմնական պատճառը եղել է պատմությունից և հին փորձից դասեր չքաղելը և կումույլատիվ գիտելիքին ուշադրության չարժանացնելը՝ կախված քաղաքական ուժերի նեղ ներքին և արտաքին շահերի ու բախումների հետ, բայց արդի տեխնոլոգիական նորամուծությունները տեղեկատվության մշակման և վերլուծության համատեքստում մեծապես օգտակար կլինեն խուսափելու քաղաքական ճգնաժամերից:

Այսօր մեծ տվյալների կիրառումը շատ երկրների պետական կառավարման համակարգում հաստատված փաստ է: Այսպես օրինակ՝ ՀՀ պետական գերատեսչությունների մեծ մասն արդեն կուտակել է բավականին մեծ քանակությամբ տվյալներ և այժմ կարող է օգտագործել այդ ներուժը որոշումների որակը բարելավելու համար: Վերջին տարիներին ՀՀ-ում անվտանգության բարելավման համար իրականացվել են մի շարք ենթակառուցվածքային նախագծեր, որոնք հիմնականում կապված են տեսախցիկների տեղադրման հետ: Այնուամենայնիվ, տեսախցիկներից ստացված տեղեկությունները տվյալների միայն մեկ ալիք են: Դրանք հաճախ անհրաժեշտ է լինում կապել այլ աղբյուրներից ստացված տվյալների հետ:

Համացանցի օգտատերերի վարքագծի, նախասիրությունների և սուբյեկտիվ բնութագրիչների վերաբերյալ թվային տեղեկատվության ստեղծված ծավալներն, իհարկե, թույլ են տալիս խոսել մեծ տվյալների տեխնոլոգիաների հզոր ներուժի մասին, և դրանց խորն ընկալման անհրաժեշտություն է առաջանում գիտնականների և մասնագետների կողմից՝ հասարակական-քաղաքական գործընթացների բովանդակության և առանձնահատկությունների, դրանց օպտիմալացման հնարավորությունների և արդյունավետության բարձրացման նպատակով: Այնուամենայնիվ, թե որքանով են մեծ տվյալների տեխնոլոգիաները կարողանում ստեղծել ճշգրիտ սոցիալ-քաղաքական զարգացման կառուցողական ներուժ, որոնք են այն մարտահրավերներն ու սպառնալիքները, որոնք ծագում են այն ժամանակ, երբ այդ տեխնոլոգիաները գործարկվում են քաղաքական կառավարման և զանգվածային գիտակցության վրա ազդեցության գործընթացներում, այս հարցերը մնում են բաց և պահանջում մասնագետների կողմից դրա մանրամասն ուսումնասիրություն՝ հատկապես հաշվի առնելով օգտատերերի տվյալների հավաքագրման և օգտագործման գործընթացների ոչ թափանցիկությունը և անձնական տվյալների խոցելիության հարցերը [**3**]: Որքան էլ մեծ տվյալներն ընդհանրացված լինեն և չմասնավորեցվեն, այնուամենայնիվ դրանց կիրառումը քաղտեխնոլոգիաներում իր մեջ պարունակում է սպառնալիքների և մարտահրավերների մի ամբողջ համալիր, որոնց դիտարկումն այսօր արդեն բավականին հրատապ խնդիր է և համակողմանի վերլուծության կարիք ունի:

Եվ այսպես, մեծ տվյալների օգտագործման հիմնական հիմնախնդիրներից է թվային անհավասարության խնդիրը. հասարակական-քաղաքական գործընթացների տարաբնույթ մասնակիցներն այսօր տվյալների նկատմամբ ունեն անհավասար մուտքի հնարավորություններ, ավելին, դրանց օգտագործման անհավասար գիտելիքներ և իրավասություններ: Հավաքագրված տվյալների մեծ մասը հանրային տիրույթից դուրս է, և քաղաքական կառավարման գործընթացներում միայն որոշ դերակատարների է հասանելի, մեծամասամբ իշխող քաղաքական ուժերին, քանի որ նրանք են, որ մուտքի հնարավորություն ունեն դեպի պետականորեն հավաքագրվող տվյալներ: Քնականաբար գործող իշխանությունները, որոնք անկաշկանդ մուտքի հնարավորություն ունեն դեպի մեծ տվյալների շտեմարաններ (լինեն դրանք առողջապահական, ֆինանսական, անվտանգության, կրթական, և այլն) նրանք ի սկզբանե անհավասար պայմաններում են մյուս քաղաքական ուժերի նկատմամբ և ի վիճակի են այդ միջոցներով երկարաժամկետ հեռանկարներում անընդհատ ապահովել սեփական կառավարման «լեգիտիմությունը»՝ կիրառելով ամենատարբեր մանիպուլյատիվ մեթոդներ, սև PR և սև քաղտեխնոլոգիաներ մրցակից ուժերի հանդեպ: Սա գործող իշխանություններին տալիս է նաև տոտալ վերահսկողության լայն հնարավորություններ հասարակության բոլոր խմբերի նկատմամբ առանձին վերցրած և հասարակական-քաղաքական գործընթացների նկատմամբ ընդհանուր առմամբ: Իհարկե կարճաժամկետ հեռանկարներում դեռ ակտուալ է մեծ տվյալների հետ գրագետ աշխատելու կարողությունների մշակումը, սակայն այն չի ուշանա և ավելի երկարաժամկետ հեռանկարում

վերը նշված տոտալ կառավարումը բոլոր հարթություններում խիստ իրատեսական ապագա է:

Թվային անհավասարությունը ծնում է նոր հիերարխիկ թվային «դասակարգեր»՝

1. Տվյալների պասիվ ստեղծողներ (այսինքն՝ նրանք, ովքեր պարզապես ստեղծում են թվային տեղեկատվություն, թվային հետքեր): Սրանք սովորական համացանցային օգտատերերն են՝ «թվային սպառողները», որոնք հետագայում այլ տվյալների «դասերի» ներկայացուցիչների կողմից դառնում են մեծ տվյալների վրա հիմնված տեղեկատվության և հաղորդակցության ազդեցության օբյեկտ:

2. Թվային տվյալների հավաքման հնարավորություններ և իրավասություն ունեցող դերակատարներ (հետագայում նրանք դառնում են «թվային ակտիվների» սեփականատերեր՝ հավաքագրված տվյալների ծավալները բաշխելով իրենց սեփական շահերի հայեցողությամբ):

3. Մեծ տվյալների վերլուծության և թվային զանգվածների հասանելիության իրավասություն ունեցող դերակատարներ (ի վիճակի են օգտագործել մեծ տվյալների կանխատեսող ներուժը, ինչպես նաև ձևավորել մանիպուլյատիվ և քարոզչական ազդեցության նախագծեր ու մոդելներ՝ առաջին «տվյալների դասի» ներկայացուցիչների վրա ներազդելու նպատակով): Իրականում, այս մակարդակում է, որ մեծ տվյալների ծավալները վերածվում են կառուցվածքային «խելացի»՝ smart տվյալների:

4. «Տվյալների վերահսկող դասակարգ», որն, այսպես ասած, էլիտար խումբ է և կարող է իրեն թույլ տալ վերահսկել մնացած «տվյալների դասերը» իր շահերից ելնելով:

Ակնհայտ է, որ մեծ տվյալներին հասանելիությունը և օգտագործման հնարավորությունները տարբեր են «տվյալների դասակարգերի» համար, ինչը թույլ է տալիս խոսել նոր մարտահրավերների առաջացման մասին՝ համաշխարհային հասարակության թվային անհավասարության ձևավորման առումով:

Յուվալ Նոյ Հարարին, իր ֆուտուրիստական կանխատեսումներում անդրադառնում է մեծ տվյալների ալգորիթմներին, որոնք ի վիճակի են ծնելու թվային բռնապետություններ, որոնց պարագայում ամբողջ իշխանությունը կհայտնվի փոքրաթիվ էլիտայի ձեռքին, իսկ մարդկանց մեծամասնությունը կտառապի ոչ թե շահագործումից, այլ որն ավելի վատ է՝ իրենց անպիտանությունից: Թվային բռնապետություններն, իհարկե, միակ վտանգը չեն՝ լիբերալ արժեքների կողքին, ազատության հետ մեկտեղ կարևորվում է հավասարությունը: Լիբերալիզմը միշտ կարևորել է քաղաքական հավասարությունը, բայց աստիճանաբար եկել է նաև տնտեսական հավասարության կարևորության հարցին: Բանը նրանում է, որ առանց սոցիալական ապահովման համակարգի և տնտեսական նվազագույն հավասարության, ազատությունն անիմաստ է դառնում: Մեծ տվյալների ալգորիթմները ոչ միայն ի վիճակի են վերացնել ազատությունը, այլև միևնույն ժամանակ ծնել անհավանական անհավասարության մակարդակով հասարակություն: Փոքրաթիվ փոքրամասնությունը մենաշնորհային է դարձնում հարստությունն ու իշխանությունը, իսկ մարդկանց մեծամասնությունը պարզապես անպիտան է դառնում [**5**]:

Թվային անհավասարությունը, դրա հետ կապված նոր դասակարգերը ծնում են բռնապետության նոր մոդելը՝ «Դատակրատիան»:

Ինչպես գրում է Թաֆթսի համալսարանի Ֆլեթչերի դպրոցի «Գլոբալ բիզնեսի» ֆակուլտետի դեկան Բասկար Չակրավորտին՝ «Բարի գալուստ դատակրատիայի աշխարհ»: «Մինչ դեմոտրատիան ուշացած հարվածներ է հասցնում, վերելք է ապրում անտեսանելի այլընտրանքային ռեժիմը՝ դատակրատիան: Դուք մասնակից քաղաքացի եք անգամ չհմանալով այդ մասին, և այստեղ հասնելու համար կարիք չկար միանալու քարավանին կամ հատելու սանդղակի սահմանի պատը, ընդամենը ձեզ հարկավոր էր համացանցի միջոցով միանալ աշխարհի բնակչության կեսին՝ թողնելով թվային հետքեր»:

Դատակրատիայում անհատն իր և յուրաքանչյուր այլ քաղաքացու թվային հետքերի վերլուծության միջոցով կառավարվող սոցիետալ կազմակերպության մի մասն է: Չակրավորտիի ալեգորիկ անվանարկմամբ Ֆեյսբուքիստանի բնակչությունը հաշվարկվում է ոչ թե ամսական 2,2 միլիարդ օգտատերերով, այլև միևնույն ժամանակ այն տվյալների փոխանակման գործարքների մի ամբողջ ցանց է ստեղծել տասնյակ այլ գործընկերների հետ՝ սկսած ստվերային կառույցներից, այնպիսիք, ինչպիսիք են Cambridge Analytica-ի քաղաքական խորհրդատուները, վերջացրած ամենախոշոր տեխնոլոգիական ընկերություններից մեկով՝ Յանդեքսով, որը փոխկապակցված է ինչպես Կրեմլի, այնպես էլ ամերիկյան ամենահայտնի ընկերությունների հետ՝ Amazon, Netflix, Spotify, Yahoo և այլն:

Այդ գործարքները համապատասխան ընկերություններին ապահովում են օգտատերերի տվյալներին ավելի լայն հասանելիություն, իրենք էլ իրենց հերթին ավելի շատ օգտատերեր են ուղղորդում դեպի Ֆեյսբուք: Ապատեղեկատվական արշավները, որոնք ժողովրդավարության հիմքերը խարխլելու նպատակ են հետապնդում, այժմ կարող են տարածվել ավելի արագ, լայնորեն և ամրապնդվել այս հսկա

ցանցով: Չակրավորտիի դիտարկմամբ տվյալների ամբողջ քաղաքականությունը գլոբալ է [**7**]:

Փաստորեն, նման «Դատակրատիայի» ներկայացուցիչները սեփական «նպատակներին հասնելու համար» իրենց հայեցողությամբ կարողանում են օգտագործել երկրորդ «տըվյալների դասի» ներկայացուցիչների ունեցած մատչելի տվյալները երրորդ «տվյալների դասի» ներկայացուցիչների օգնությամբ, որոնք կարող են վերածել այդ տվյալները «խելացի տվյալների», որի հիման վրա հետագայում մշակվում են առաջին «տվյալների դասի» ներկայացուցիչների վրա ազդեցության մեխանիզմները:

Ի լրումն թվային անհավասարության, որը կապված է մեծ տվյալների անհավասար բաշխման, մատչելիության և հնարավորությունների հետ, պետք է առանձնացնել լիովին վերահսկվող թվային տարածության ձևավորման սպառնալիքը, որում օգտատիրոջ ցանկացած գործունեություն դառնում է վերլուծության առարկա և մեծ տվյալների անբաժանելի մաս, որի հիման վրա դուրս է բերվում տվյալ օգտատիրոջ լոյալության աստիճանը գործող քաղաքական ռեժիմի հանդեպ: Այսօր, զգալիորեն աճել են լիովին վերահսկելի թվային տարածություն ստեղծելու տեխնոլոգիական հնարավորությունները: Համացանցում քաղաքացիների վարքագիծը, օգտատերերի արձագանքը հրապարակումներին, տեղեկատվության նախապատվությունները դառնում են թվային տվյալների բաղկացուցիչ մաս, որոնք կարող են արդյունավետ օգտագործվել ցանկացած անձի նկատմամբ տոտալ վերահսկողություն իրականացնելու համար: Եվ այս պրակտիկան ոչ միայն չի դադարեցվելու հետագայում, այլև զգալիորեն ընդլայնվելու է, իսկ դրա շրջանակներում կարող են հանդես գալ, ոչ միայն պետական կառավարման համակարգերը, այլև խոշոր կորպորացիաները: Արդյունքում, օգտատերերի անձնական սարքերը (համակարգիչ, պլանշետ, հեռախոս) սկսում են կատարել օգտատիրոջ համար ոչ թե զուտ ինստրումենտալ գործառույթ, այլև դառնում են թվային տվյալների ձևավորման աղբյուր և փոխանցվում երրորդ կողմին առանց օգտատիրոջ գիտության կամ համաձայնության: Եվ որքան էլ ծրագրերը, կայքերը և տվյալների հավաքագրման առանձին թվային միջոցները կոնֆիդենցիալության քաղաքականության երկարաշունչ տեքստեր գրեն, մեկ է՝ օգտատերը տվյալ թվային ծառայությունից օգտվելու համար իր անձնական տվյալներին հասանելիության ակնթարթային համաձայնություն է տալիս ընդամենը մեկ հպումով: Անձնական «խելացի» սարքերը դառնում են օգտատիրոջ, նրա գործունեության և նախասիրությունների վերաբերյալ տեղեկատվությանը հետևելու, վերահսկելու և տվյալները գեներացնելու գործիք: Այս ամենը թվացյալ «կամընտրական» գործընթաց է, սակայն գործնականորեն, այն պարտադրված է օգտատերերին, որն էլ սպառնում է ձևավորել ապագայի թվային ստրկության նոր հասարակարգ: Օգտատերերն այսօր էլ գիտեն, որ անընդհատ վերահսկողության տակ են և արդեն իսկ համակերպվել են այդ իրավիճակի հետ, սակայն դեռևս չի զգացվում տոտալ վերահսկողության ողջ բեռը, քանի դեռ քաղաքացիները չեն փորձել արտահայտել իրենց հակասող կարծիքները որևէ երևույթի նկատմամբ, որը կարող է սպառնալ «ավելի բարձր թվային դասերի» շահերին և ծրագրերին:

Այսպես օրինակ, իր ելույթներից մեկում Google-ի նախկին տնօրեն Է. Շմիդտը մեջ է բերում հետևյալ օրինակը. «Մեզ պետք չէ, որ ձեր համակարգչում սեղմեք բոլոր ստեղները: Մենք գիտենք, թե որտեղ եք դուք և որտեղ եք եղել: Մենք կարող ենք ընդհանուր առմամբ պարզել, թե ինչ եք մտածում: Մենք գիտենք այն ամենը, ինչ դուք անում եք, և կառավարությունը կարող է հետևել ձեզ: Մենք կիմանանք, թե որտեղ եք գտնվում դուք 50 մ շառավղով, և մենք այդ հեռավորությունը կկրճատենք ընդհուպ մինչև մի քանի սանտիմետրի» [**12**]: (Սա այն է, ինչին աշխարհի բնակչությունը 2020 թ.-ին ականատես եղավ նոր տիպի կորոնավիրուսային համավարակի արդյունքում հայտարարված արտակարգ դրության պայմաններում ամենատարբեր երկրներում՝ խիստ մեկուսացման պայմաններ, գեոլոկացիոն սահմանափակումներ, տեղաշարժ ըստ թույլտվության, հեռախոսազանգերի և կոմունիկացիաների «օրինական» վերահսկողություն և «ըստ անհրաժեշտության» սահմանափակում, տեղեկատվության տոտալ վերահսկողություն, ընդհուպ մինչև պատժի կիրառում հակառակ կարծիք հայտնելու և կառավարությունների կողմից ընդունված նորմային հակասող «կեղծ» տեղեկատվություն տարածելու համար և այլն[3]:

[3] Հատկանշական է չինական ոճի համացանցային վերահսկողության մոդելը, որը մեծամասշտաբ կիրառում ստացավ 2019 թ.-ի նոր կորոնավիրուսային համավարակի ճգնաժամային կառավարման համակարգում՝ տալով քաղաքացիների անձնական տվյալների նկատմամբ անսահման վերահսկողության հնարավորություններ: Ինչ վերաբերում է համացանցային գրաքննությանը, ապա այն Չինաստանում մշակվել է դեռ նախորդ դարի 90-ականներին, իսկ 2020 մարտի վերջին Financial Times պարբերականի հաղորդմամբ Չինաստանը Միջազգային հեռահաղորդակցման միությանը (International Telecommunication Union, ITU) ներկայացրեց Huawei ընկերության և չինական հեռահաղորդակցության օպերատորների մշակած նոր համացանցային արձանագրությունը՝ "New IP" անունով, որը փոխարինելու է եկել հին "TCP/IP"-ին: Այն իր

Ի դեպ, այս տեսակի հսկողությունը կարող է իրականացվել «փափուկ» մանիպուլյատիվ ռեժիմով, ինչը ենթադրում է յուրաքանչյուր անձի համար անհատական տեղեկատվության և հաղորդակցության հոսքեր կառուցելու հնարավորությունների օգտագործում: Ըստ Բ. Բարբերի, «նորագույն տեխնոլոգիաները կարող են դառնալ բռնապետության վտանգավոր ուղեկից... գոյություն չունի ավելի վտանգավոր բռնակալության ձև, քան դրա անտեսանելի և փափուկ տեսակը, բռնակալություն, որի դեպքում ենթակաները դառնում են իրենց իսկ զոհաբերության հանցակից, և որի դեպքում ստրկացումը ոչ թե մտադրությունների, այլ հանգամանքների արդյունքն է»:

Թվային պրոֆիլների օգտագործմամբ՝ զգալիորեն ավելանում են օգտատերերի վրա մանիպուլյացիայի և «հաշվողական քարոզչության» [**8**] ազդեցության հնարավորությունները: 2015 թվականից ի վեր ի հայտ է եկել առավել ավտոմատացված հաշվողական քարոզչություն բոտերի տեսքով, որոնք կիրառում են արհեստական բանականության բարդ կառուցվածքային սխեմաներ, որոնցով վերանում է մարդկանց կողմից պրոֆիլների կառավարման անհրաժեշտությունը: Ալգորիթմները ոչ միայն կարդում են նորությունները, այլև արդեն իսկ ի վիճակի են գրել դրանք: Քաղաքական գործիչներն ու քաղտեխնոլոգներն այս հնարավորություններն իհարկե բաց չեն թողնում: Միևնույն ժամանակ, օգտատերն ինքն է վերացարկվում տեղեկատվության որոնման անհրաժեշտությունից, քանի որ նա ստանում է իրականության պատրաստի և հարմարեցված բացատրական մոդելներ, որոնք կազմում են իր սուբյեկտիվ իրականության թվային շրջանակը: Այսօր մեծ տվյալների ալգորիթմներն այնպես են կառուցված, որ կախված այն բանից, թե օգտատերը թվային տարածությունում ինչ որոնումներ է կատարել, ինչ ինտերակցիաներ է ունեցել և ինչպիսի վարքագիծ է դրսևորել, համակարգերը նրան առաջարկում են նույնական մոդելներ, որոնք ամենայն հավանականությամբ նա պատրաստ է ընկալել, սպառել, կիրառել և ըստ այդմ գործել: Այս երևույթը զգալի էր 2018 թվականին ՀՀ-ում տեղի ունեցած հեղափոխության ժամանակաշրջանում, երբ քաղաքական մարգինալ խմբերը, ցուցաբերելով անգամ աննշան ակտիվություն սոցիալական թվային տիրույթում, սկսում էին փոխել իրենց դիրքորոշումն ու վերաբերմունքը, այդ թվում հարմարեցնել իրենց վարքագիծը սոցիալական տիրույթի իրենց հետ կոմունիկացվող այլ օգտատերերի (հաճախ կարծիքի առաջնորդների) սպասումներին, անընդհատ մատակարարվող նմանատիպ տեղեկատվական հոսքերի ազդեցության տակ:

Թվային կեղծ տեղեկատվական օրակարգը ևս լուրջ հիմնախնդիր է: Ինչպես նշում է Ֆ Չակրավորտին «Մի գուցե 2018 թ-ին կեղծ պատերազմը կեղծ լուրերի դեմ աշխատող տարբերակ էր, բայց 2019-ին պետք է ավելի խելացի գտնվել» [**7**]: Օրենսդրական դաշտի մասնագետները հստակ չգիտեն, թե ինչպես են աշխատում թվային տվյալները, և ինչպիսի օրենսդրություն է պետք մշակել դրանց հետ կապված: 2018 թ.-ին Ֆեյսբուքը ձևավորել էր «պատերազմի սենյակ»[4] կեղծ լուրերի ստուգման և ապատեղեկատվական արշավների մոնիտորինգի համար, իսկ օրինակ՝ 2020 թ-ին այդ թվում հայկական ֆեյսբուքյան տիրույթում հայտվեցին «ինֆոչեքեր»՝ տեղեկատվության ստուգման հարթակներ, որոնք «պայքարում» են կեղծ տեղեկատվական օրակարգերի դեմ՝ տալով «իրական» փաստերի «ապացույցներ»: Կախված այն բանից, թե այդ հարթակներն ում շահերն են պաշտպանում, մենք ունենում են «կեղծ» և «իրական» փաստերի էլ ավելի աղճատված պատկեր: Այդ ժամանակ շարքային օգտատերերին օգնության են գալիս զգացմունքներն ու հույզերը, թե որ ուժերին են ավելի շատ համակրում, և որ տեղեկատվությունը կընկալեն որպես «հավաստի», որը՝ «կեղծ»: Իսկ հույզերի կառավարումն արդեն իսկ հասանելի է ալգորիթմներին: Արհեստական բանականությունը, հիմնվելով մեծ տվյալների վերլուծությունների և մեքենայական ուսուցման վրա, սկսում է գերազանցել մարդկանց այնպիսի հմտություններում, ինչպիսին է օրինակ՝ հույզերի ճանաչումը: Առաջիկա տասնամյակում մենք դժվար թե բախվենք ռոբոտների ապստամբությանը, սակայն չի բացառվում, որ ստիպված ենք լինելու գործ ունենալ բոտերի բազմության հետ, որոնք հարազատ մորից լավ և առավել արդյունավետորեն են կարողանում ազդել մեր հույզերի վրա, և օգտագործում են

ստեղծողների խոսքերով ունի շատ առավելություններ: Սակայն չափորոշիչն իշխանությունների առջև բացում է համացանցային գրաքննության ավելի մեծ հնարավորություններ:

[4] 2018թ.-ին ԱՄՆ-ի և Բրազիլիայի միջնաժամկետ նախագահական, Եվրոպարլամենտի ընտրություններին ընդառաջ Ֆեյսբուքը ստեղծել էր “war room”՝ «պատերազմի սենյակ»՝ ապատեղեկատվական արշավների մոնիտորինգի համար, ինչպես հաղորդում էին “The New York Times”, “The Guardian” և այլ հայտնի պարբերականները: Մյուս հարթակները ևս քայլեր էին ձեռնարկում ընտրությունների ժամանակ մանիպուլյատորներից առաջ ընկնելու համար: Google-ի ալգորիթմն, օրինակ՝ քաղաքական իրադարձությունները և դրանց հետ կապված ազդանշանները հարմարեցնում էր ավելի հեղինակավոր բովանդակությանը: Twitter-ը տեղեկատվական գրագիտությունը խթանելու համար համագործակցում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ:

այդ հատկությունը, որպեսզի մեզ որևէ բան վաճառեն՝ ավտոմեքենա, քաղաքական գործչի կամ ամբողջական մի գաղափարախոսություն: Բոտերը կճանաչեն մեր թաքնված տագնապներն ու ցանկությունները, իսկ հետո կօգտագործեն դրանք մեր իսկ դեմ: Վերջին տարիներին աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցած ընտրությունների և հանրաքվեների օրինակով մենք արդեն տեսել ենք, թե դա ինչպիսի տեսք ունի, երբ հակերները սովորում են մանիպուլացնել առանձին ընտրողներին՝ վերլուծելով նրանց մասին տեղեկատվությունն ու օգտագործելով նրանց նախապաշարմունքները [**5**]:

Այսպիսով, ինչպես անհատ օգտատերերի, այնպես էլ ըստ տարբեր չափանիշների սեգմենտավորված խմբերի տվյալների թվային ծավալները կարող են ակտիվորեն օգտագործվել (և արդեն իսկ օգտագործվում են) կենսագործունեության տարբեր ասպեկտների վրա ազդեցության նպատակով, այդ իմաստով հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտը բացառություն չի կազմում:

Մեծ տվյալների շահադիտական օգտագործումը «չորրորդ՝ էլիտար թվային դասակարգի» կողմից կարող է շատ ու շատ այլ մարտահրավերներ ու սպառնալիքներ պարունակել երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականության հարցերում՝ մասնավորապես առաջ են գալիս օգտատերերի անձնական տվյալները «իրենց շահերին ծառայեցնելու» և օգտատերերի անձնական կյանքի անձեռնմխելիության և գաղտնիության ապահովման էթիկական կողմի հետ կապված մի շարք խնդիրներ, իսկ ավելի գլոբալ առումով թիրախային երկրների սոցիալ-քաղաքական գործընթացներին միջամտելու, ահաբեկչական խմբավորումների, ինչպես նաև հակամարտության երկրների կողմից դրանք շահագործելու լուրջ վտանգներ: Այստեղ առաջանում է կիբեռանվտանգության հայեցակարգի մշակման և գործարկման օրակարգի անհրաժեշտություն:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ այսօր հասարակական-քաղաքական զարգացման ոլորտում առկա են մեծաթիվ մարտահրավերներ և սպառնալիքներ, ընդհուպ մինչև 21-րդ դարի առաջին քառորդին բնորոշ քաղաքական համակարգի լիովին վերաձևափոխում՝ կապված մեծ տվյալների տեխնոլոգիաների ներդրման և կիրառման հետ: Սակայն տեխնոլոգիան ըստ էության միշտ չեզոք է, և դրա կիրառման բնույթը կախված է այն բանից, թե ում ձեռքում կհայտնվի այն և ինչպես կգործարկվի: Անկասկած, գոյություն ունեն մեծ տվյալների գործիքային այնպիսի հնարավորություններ, որպեսզի ապահովեն ժամանակակից պետությունների կառուցողական և արդյունավետ հասարակական-քաղաքական զարգացումներ, մինչդեռ վերջինիս համար անհրաժեշտ է իշխանությունների կողմից ցուցաբերվող քաղաքական կամք և պետության զարգացման տեսլականի հասկանալի և համընդհանուր ընդունելի մոդել: Այդ ամենի համար արդեն այսօր սոցիալական ոլորտի պատասխանատուները, հասարակագետները, քաղաքագետները պետք է ուշադրություն դարձնեն ապագայի մարտահրավերներին ու հնարավոր դժվարություններին, որոնք կապված են ամենօրյա քաղաքական պրակտիկայում «խելացի» տեխնոլոգիաների ներդրման և մեծ տվյալների կիրառման հետ: Թվային նոր դարաշրջանում խիստ կարևոր է հասկանալ, թե ինչպես են աշխատում, և թե ինչպես կարելի է կիրառել թվային մեծ տվյալների ալգորիթմները՝ քաղաքական իրադարձությունների կանխատեսման հավաստիության, ռիսկերի կառավարման և ապագայի մոդելավորման հեռանկարներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Володенков С. В.** “Технологии big data в современных политических процессах: цифровые вызовы и угрозы”. Вестник Томского государственного университета. Философия. Социология. Политология. 2018. № 44, С. 205-212 http://journals.tsu.ru/uploads/import/1738/files/44_205.pdf [Volodenkov, S. V. “Tekhnologii big data v sovremennikh politicheskih processakh: cifrovie vizovi i ugrozi”] [in russian]
2. **Джапек Л., Крейтер Ф., Берг Мю. и др.** “Отчет AAPOR о больших данных”. 12 февраля 2015/ Американская ассоциация исследователей общественного мнения; пер. с англ. Д. Рогозина, А. Ипатовой, Е. Вьюговской; предисловие Д. Рогозина. М., 2015. [Japek, L. Kreyter, F., Berg Mu. “Otchet AAPOR o bolshikh dannikh”] [in russian]
3. **Карчагин Е. В.** “Справедливость в информационной области: этический аспект Big Data”. Вестник Волгоградского государственного университета. Серия 7. 2016. № 1. С. 50—58. [Karchagin, E. V. “Spravedlivost v informacionnoy oblasti: eticheskiy aspect Big Data”. Vestnik Volgogradskogo gosudarstvennogo universiteta. Seria 7. 2016] [in russian]
4. **Соловей В. Д.** “Цифровая мифология и избирательная кампания Дональда Трампа”. Полис. Политические исследования. 2017. №5, С. 122-132. [Solovey, V. D. “Cifrovaya mifologiya i izbiratelnaya kampania Donalda Trampa”. Polis. Politicheskie issledovaniya. 2017. №5]
5. **Харари Ю. Н.,** “21 урок для XXI века”. “Синдбад” 2018. [электронная версия] https://avidreaders.ru/book/21-urok-dlya-xxi-veka.html [Harari Yu. N. “21 urokov XXI veka” Sindbad 2018] [in russian]
6. **Bolsover G., Howard P.** “Computational Propaganda and Political Big Data: Moving Toward a More Critical Research Agenda”. Big Data. 2017. 5(4). pp. 273–276. DOI: 10.1089/big.2017.29024.cpr.

7. **Chakravorti B.** "The Big Question For 2019: Can Democracy Be Saved From Datacracy?" 2019 https://www.forbes.com/sites/bhaskarchakravorti/2018/12/19/the-big-question-for-2019-can-democracy-be-saved-from-datacracy/#46ee643d35d8
8. **Gourley S.** "Get ready for the robot propaganda machine". 2015. http://www.wired.co.uk/article/robot-propaganda
9. IDC research sponsored by EMC2 "The Digital Universe in 2020: Big Data, Bigger Digital Shadows, and Biggest Growth in the Far East". December 2012 "Big Data 2020" https://www.emc.com/leadership/digital-universe/2012iview/big-data-2020.htm
10. McKinsey Global Institute "Big data: The next frontier for innovation, competition, and productivity" May 1, 2011 | Report https://www.mckinsey.com/business-functions/mckinsey-digital/our-insights/big-data-the-next-frontier-for-innovation#
11. Oracle Information Architecture: "An Architect's Guide to Big Data By ASQLBarista"- May 25, 2012 https://oracle-big-data.blogspot.com/2012/05/oracle-information-architecture.html
12. **Watson P. J., Jones A.** "Google-Berg: Global Elite Transforms Itself For Technocratic Revolution". 2013 http://www.infowars.com/google-berg-global-elitetransforms-itself-for-technocratic-revolution/

Сдана/Հանձնվել է՝ 12.09.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 14.09.2020
Принята/Ընդունվել է՝ 15.09.2020

Освобождение от уголовной ответственности за преступления в сфере экономической деятельности как отдельное направление совершенствования института деятельного раскаяния

Саргсян А. А.
Российско-Армянский университет, кафедра уголовного права и уголовно-процессуального права (Ереван, Армения)
adelina-sargsyan@mail.ru

Ключевые слова: *деятельное раскаяние, возмещение ущерба, экономическая деятельность, поощрение, волонтерство*

Տնտեսական գործունեության ոլորտում հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից ազատելը որպես գործուն զղջալու ինստիտուտի կատարելագործման առանձին ուղղություն

Սարգսյան Ա. Ա.
Հայ-Ռուսական համալսարան, Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոն (Երևան, Հայաստան)
adelina-sargsyan@mail.ru

Ամփոփում: Այս ուսումնասիրությունը նվիրված է տնտեսական գործունեության ոլորտում հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից ազատվելու օրենսդրական կարգավորման խնդիրներին: ՌԴ Քրական օրենսգրքի 76.1 հոդվածը, հանդիսանալով քրեական օրենսդրության նորույթ, որն արտացոլում է փոխզիջման գաղափարը և մարդասիրության սկզբունքի իրագործումը, միևնույն ժամանակ զուրկ չէ թերություններից և հաճախ բազմաթիվ խնդիրներ է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում: Հեղինակը դրական արտասահմանյան փորձի հիման վրա առաջարկում է ՌԴ ՔՕ 76.1 հոդվածի նոր տեսական մոդել, առաջ է քաշում նման հնարավորության նախատեսման անհրաժեշտություն նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության մեջ, ինչն ընդհանուր առմամբ կնպաստի գործուն զղջալու ինստիտուտի հետապնդած նպատակների և խնդիրների առավել արդյունավետ իրականացմանը:
Վճռորոշ բառեր՝ գործուն զղջալ, վնասի հատուցում, տնտեսական գործունեություն, խրախուսանք, կամավորություն:

Exemption from criminal liability for crimes in the sphere of economic activity as a separate direction for improving the Institute of active repentance

Sargsyan A. A.
Russian-Armenian University, Department of Criminal Law and Criminal Procedure Law (Yerevan, Armenia)
adelina-sargsyan@mail.ru

Abctract: This research is devoted to the problems of legislative regulation of exemption from criminal liability in cases of crimes in the sphere of economic activity. Article 76.1 of the criminal code of the Russian Federation, being a novel of criminal legislation that reflects the idea of compromise and the implementation of the principle of humanism, at the same time is not without disadvantages and often causes many problems in law enforcement practice. The author on the basis of positive international experience, proposes a new theoretical model of the article. 76.1 of the criminal code of the Russian Federation, puts forward the need to provide for a similar possibility in the criminal legislation of the Republic of Armenia, which in General will contribute to the most effective implementation of the goals and objectives pursued by the Institute of active repentance.
Keywords: active repentance; compensation for damages; economic activity; encouragement; voluntariness

Освобождение от уголовной ответственности по делам о преступлениях в сфере экономической деятельности, предусмотренное ст. 76.1 УК РФ, выступает специальным, усеченным ви-

дом деятельного раскаяния и перспективным направлением развития института деятельного раскаяния. В рассматриваемой статье закреплена неполная совокупность условий позитивного посткриминального поведения, закрепленной в данной статье. В.В. Власенко отмечает, что "усеченность" (т.е. наличие лишь некоторых признаков деятельного раскаяния) рассматриваемого вида освобождения от уголовной ответственности в связи с деятельным раскаянием заключается в том, что в ч. 1 ст. 76.1 УК РФ присутствуют только два условия освобождения от уголовной ответственности, присущие общему понятию деятельного раскаяния: совершение лицом впервые преступлений, предусмотренных ст. ст. 198 - 199.1 УК РФ; возмещение ущерба, причиненного бюджетной системе Российской Федерации [**1**, с. 23]. В целом усеченность с учетом целей, преследуемых законодателем при внесении данной нормы и специфики рассматриваемых составов преступлений, оправдана, однако, если мы относим данный вид освобождения от уголовной ответственности к одному из специальных подвидов деятельного раскаяния, то, за этим непременно должно следовать обладание им некоторыми другими признаками, отражающими свободное, а не вынужденное положительное постпреступное волеизъявление лица.

Уголовно-правовые ограничения, установленные государством с целью нормального осуществления экономической деятельности, имеют важное значение. Однако только лишь уголовно-правовое воздействия приведет к необоснованному росту криминальной составляющей экономической преступности. В связи с этим, становится очевидным, что одной из важнейших мер уголовно-правового характера, оказывающих влияние на состояние экономики государства, является освобождение от уголовной ответственности [**2,** с. 3].

Предусмотрение в уголовном кодексе специальных оснований освобождения от уголовной ответственности по делам о преступлениях в сфере экономической деятельности безусловно следует рассматривать в качестве положительной тенденции с вектором на гуманизацию уголовного законодательства.

Как отмечает А.В. Кузнецов «специальное основание освобождения от уголовной ответственности по делам о преступлениях экономической направленности, предусмотренное примечанием 3 к ст. 178 УК РФ («Ограничение конкуренции»), предъявляет условия для освобождения, схожие по своей характеристике с условиями ч. 1 ст. 75 УК РФ, несмотря на различие в лексическом описании одних и тех же явлений [**2**, с. 47]. Следует отметить, что норма, предусмотренная ч. 2 ст. 75 УК РФ является отсылочной и ее необходимо применять в совокупности с примечанием к ст. 178 УК РФ. То же самое относится и к иным специальным видам освобождения от уголовной ответственности, среди которых ст. 184, 198, 199, 199.1, 199.3, 199.4, 200.1, 200.3 УК РФ.

Таким образом, отмеченные выше примечания выступают своеобразными формами деятельного раскаяния и в то же время специальными основаниями освобождения от уголовной ответственности по делам о преступлениях в сфере экономической деятельности. Тем не менее, необходимо указать на наличие некоторых признаков данных оснований освобождения от уголовной ответственности, отличающих их от деятельного раскаяние в его «общем» виде, регламентированном ч.1 ст. 75 УК РФ. В первую очередь необходимо указать отсутствие признака совершения преступления впервые в примечаниях к статьям 178,184, 200.1 и 200.3 УК РФ. Также следует отметить, что действие данных норм распространяется не только на преступления небольшой и средней тяжести, но и на тяжкие преступления.

Особый интерес представляют собой примечания к статьям, предусматривающим ответственность за совершение налоговых преступлений. В Российской Федерации освобождение от уголовной ответственности за данные преступления регламентируется также ч. 1 и ч. 2 ст. 76.1 УК РФ. В Уголовном кодексе Республики Армения отсутствует отдельная общая норма, предусматривающая освобождение от уголовной ответственности за совершение преступлений экономической направленности, однако он содержит примечания к соответствующим статья Особенной части УК, не лишенные недостатков и нуждающиеся в доработке в целях приведения их в соответствие с природой деятельного раскаяния.

Согласно примечанию к ст. 198 УК РФ «Лицо, впервые совершившее преступление, предусмотренное настоящей статьей, освобождается от уголовной ответственности, если оно полностью уплатило суммы недоимки и соответствующих пеней, а также сумму штрафа в размере, определяемом в соответствии с Налоговым кодексом Российской Федерации».

Уголовный кодекс Республики Армения также предусматривает возможность освобождения от уголовной ответственности за неуплату налогов при условии, если лицо, совершившее предусмотренные деяния, возмещает вред, причиненный преступлением, и начисленные пени и штрафы.

Недостаток, существующий в действующем уголовном кодексе РА относительно требования совершения преступления впервые нашел свое восполнение в примечании к ст. 274 проекта нового УК РА, согласно которому «Лицо, впервые совершившее преступление, предусмотренное настоящей статьей, освобождается от наказания, если полностью уплатило неуплаченные налоги, пошлины или иные обязательные платежи и пени, установленные за их неуплату, и ранее по указанному основанию не освобождалось от уголовной ответственности».

В целом следует отметить аналогичный подход российского и армянского законодателя к исследуемому специальному виду освобождения от уголовной ответственности, однако, представляется целесообразным отметить некоторые общие недостатки, нуждающиеся в устранении. Учитывая то обстоятельство, что налогоплательщики в большинстве случаев прибегают к институту деятельного раскаяния только лишь при возникновении реальной угрозы разоблачения неуплаты налогов вследствие предстоящей проверки, считаем необходимым дополнить соответствующие примечания к статьям Особенной части УК о налоговых преступлениях дополнительными условиями, такими как добровольное сообщение о совершенном преступлении.

С точки зрения расширения круга экономических преступлений заслуживает внимания подход немецкого законодателя к вопросу об освобождении от уголовной ответственности, закрепленный в ст. 261 (Отмывание денег; укрывательство незаконно полученных имущественных выгод) УК. Так, согласно абзацу 9 ст. 261 «'Не наказывается согласно абз. 1-5 тот, кто добровольно сообщает о деянии в компетентный орган, или кто добровольно дает повод для такого сообщения, если к этому моменту деяние не раскрыто полностью или хотя бы частично, а лицо деяния уже знало это или при разумной оценке положения дел должно было принимать это в расчет» [**3**].

Учитывая положительный опыт законодательной регламентации данного основания освобождения от уголовной ответственности в ФРГ, и то обстоятельство, что виновное лицо только после факта обнаружения преступления изъявляет желание возместить ущерб, предлагаем закрепить в примечаниях требование о «явке с повинной» и добровольном сообщении о совершенном им преступлении до того, как соответствующим органам станет известно об этом. Так, немецкое законодательство ограничивает подобную явку во времени. Например, в случаях, если уполномоченное должностное лицо налогового органа вручило виновному постановление о возбуждении уголовного дела или же если факт уклонения от уплаты налогов уже известен соответствующим орган и виновный располагает данной информацией, то в данном случае невозможно применение поощрительной нормы.

В Уголовном законодательстве ФРГ преследуется цельпредотвратить явку с повинной со стороны виновных лиц, осознающих реальную угрозу раскрытия совершенного им преступления в ходе предстоящей выездной проверки.

Освобождение от уголовной ответственности при мошенничестве не предусмотрено в российском уголовном законодательстве в примечаниях к статьям Особенной части УК, однако оно нашло свое отражение в ч. 2 ст. 76.1. В Уголовном кодексе Республики Армения отсутствуют подобные основания освобождения от уголовной ответственности за мошенничество.

В качестве одного из направлений совершенствования нормы об освобождении от уголовной ответственности следует рассмотреть вопрос о неоконченном преступлении. Так, многие экономические преступления, предусмотренные в ст. 76.1 УК РФ, могут быть не доведены до конца. Относительно покушения на преступления следует отметить, что почти все преступления, предусмотренные в ст. 76.1 УК РФ, могут быть совершены в таком виде. Проблема состоит в том, что в тяжких экономических преступлениях при приготовлении отсутствует причинение ущерба, а, следовательно, и возмещение ущерба.

Վենետիկի հանձնաժողովի կողմից հրատարակված իրավունքի գերակայության տարրերի վերահսկողական ցանկի համաձայն՝ հասկացությունը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ՝ սկսած օրենքների ընդունման թափանցիկ գործընթացից, իրավական նորմերի հստակությունից, վերջացրած պետության կողմից մարդու իրավունքների միջազգային իրավունքի ոլորտում առանցքային կոնվենցիաների պահպանմամբ [**6**]:

Վերոնշյալ ցանկը սահմանում է նաև մի շարք չափանիշներ արտակարգ իրավիճակներում իրավունքի գերակայության սկզբունքի պահպանման գնահատման համար:

- Կան արդյոք հատուկ ազգային դրույթներ, որոնք կիրառելի են արտակարգ իրավիճակների համար: Նման իրավիճակներում արդյոք մարդու իրավունքներից շեղումներ հնարավոր են: Ինչ հանգամանքներ կամ չափանիշներ են անհրաժեշտ բացառության կիրառման համար
- Արդյոք ազգային իրավունքն արգելում է շեղումներ կատարել որոշ իրավունքներից նույնիսկ արտակարգ իրավիճակներում: Արդյոք շեղումները համաչափ են :
- Որն է արտակարգ իրավիճակի որոշման կարգը: Կա արդյոք խորհրդարանական վերահսկողություն և դատական վերանայում արտակարգ իրավիճակի և համապատասխան շեղման գոյության և տևողության վերաբերյալ:

Շատ երկրներում բացակայում են վերոնշյալ չափանիշների պահպանումը, ինչպես նաև արտակարգ դրություն մտցնելու կարգը, ժամկետները և պայմանները սահմանող իրավական դրույթները: Վերջինս չի սահմանափակում պետություններին՝ առանց արտա-

կարգ դրության ռեժիմի, կարանտինի կոշտ մոդելի ներդրումը: Վերջինս հակասում է իրավունքի գերակայության սկզբունքին և կարող է հանգեցնել գործադիր իշխանության կողմից բոլոր լիազորությունների յուրացմանը: Հարկ է նշել, որ համատարած զանգվածային կարանտինները նոր երևույթ են, որն ուղղակիորեն նախատեսված չէ միջազգային բժշկասանիտարական կանոններով: Հետևաբար, կարանտինի հետ կապված մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հնարավոր դատական որոշումները զգալիորեն կարող են տարբերվել՝ կախված սահմանափակումներից, կոնկրետ անձի կյանքի վրա դրանց ազդեցությունից և հիվանդացության համատեքստից:

Պանդեմիան և դրա դեմ պայքարի աննախադեպ միջոցները ցույց են տալիս բազմաթիվ իրավական անկատարություններ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակով: Դա և հատուկ իրավական ռեժիմից դուրս արտակարգ դրության դե-ֆակտո ներդրման հնարավորությունն է, և պանդեմիայի ժամանակ իշխանության բռնազավթման դեպքում պետության վրա ազդեցության միջազգային մեխանիզմների բացակայությունը, և անորոշ ժամանակով կարանտինում իր պետության սահմաններից դուրս "խրված" անձանց իրավական կարգավիճակը որոշելիս դժվարությունները: Հետագայում այդ փորձը կարող է օգտագործվել պետությունների կողմից համաճարակի ժամանակ իրավունքի գերակայության, ժողովրդավարության և մարդու իրավունքների պահպանման ավելի մանրամասն կանոնների մշակման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Абашидзе А. Х.** «Сохранит ли международное право активную регулирующую функцию в глобализирующемся мире?», Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 4-16.
2. **Бекяшев К. А.** «Необходимо ли внесение серьезных изменений в существующую систему норм международного права?» Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 17-47.
3. **Капустин А. Я.** «Право международных организаций: перспективы развития в XXI веке»/ Будущее международного права: сборник статей. М.: Проспект, 2017. С. 139-150
4. **Батычко В. Т.,** «Международное право, Конспект лекций. Таганрог: ТТИ ЮФУ, 2011»
5. **Von Bondandy, A., Villarel, P.** (2020). International Law on Pandemic Response: A First Stocktaking in Light of the Coronavirus Crisis. MPHIL Research Paper Series No 2020/7
6. https://www.prostranstvo.media/prava-cheloveka-v-jekstremalnoj-situacii-kak-koronavirus-ispytyvaet-na-prochnost-demokratiju/
7. https://news.mail.ru/politics/36410978/?frommail=1

Сдана/Հանձնվել է՝ 01.09.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 03.09.2020
Принята/Ընդունվել է՝ 04.09.2020

Материнская смертность как проблема международного права прав человека

Петросян В. А.
Российско-Армянскй (Славянский) университет (Ереван, Армения)
veronika05petrosyan@gmail.com

Ключевые слова: *права человека, материнская смертность, репродуктивные права, право на охрану материнства, право на здоровье, дискриминация*

Մայրական մահացությունը՝ որպես մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնախնդիր

Պետրոսյան Վ. Ա.
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան (Երևան, Հայաստան)
veronika05petrosyan@gmail.com

Ամփոփում: Սույն գիտական հոդվածը նվիրված է մայրական մահացության ուսումնասիրությանը՝ որպես մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնախնդիր: Մայրական մահացության և հիվանդացության ծավալներն ամբողջ աշխարհում արտացոլում են խտրականության և անհավասարության իրավիճակը, որոնց կանայք ենթարկվում են իրենց ողջ կյանքի ընթացքում՝ շղթայված օրենքներով, քաղաքականությամբ և վնասակար սոցիալական նորմերով: Մայրական մահացության և հիվանդացության հանգեցնող մարդու իրավունքների ոլորտում առկա խնդիրները իրական են աշխարհի բոլոր տարածաշրջաններում և ազդում են զարգացման բոլոր մակարդակներում գտնվող երկրների վրա:
Վճռորոշ բառեր՝ մարդու իրավունքներ, մայրական մահացություն, վերարտադրողական իրավունքներ, մայրության պահպանության իրավունք, առողջության իրավունք, խտրականություն

Maternal mortality as an issue of international human rights law

Petrosyan V. A.
PhD student in Russian-Armenian (Slavonic) university (Yerevan, Armenia)
veronika05petrosyan@gmail.com

Abstract: This scientific article is devoted to the study of maternal mortality as an issue of international human rights law. The scale of maternal mortality and morbidity worldwide reflects a situation of discrimination and inequality that women experience throughout their lives, fixed by laws, policies and harmful social norms. Human rights issues that lead to maternal mortality and morbidity are a reality in all regions of the world and affect countries at all levels of development.
Keywords: human rights, maternal mortality, reproductive rights, right to maternity protection, right to health, discrimination

Каждая женщина имеет право на безопасное и уважительное материнское здоровье. Стандарты прав человека, касающиеся безопасной беременности, родов и уважительного материнского ухода, коренятся в правах человека на жизнь, здоровье, равенство и недискриминацию. Правительства должны обеспечить эти права путем создания благоприятных условий, которые будут способствовать здоровью женщин, здоровой беременности и безопасным родам. Основные права женщин нарушаются, когда беременные и роженицы подвергаются предотвратимым страданиям, включая смерть, болезни, травмы, дискриминацию и отказ в информации и телесной автономии.

Эффект от переосмысления материнского здоровья как части репродуктивного здоровья можно увидеть в десятилетнем обзоре инициативы по безопасному материнству, проведенном еще в далеком 1997 году. Оказалось, что десять лет усилий по организации дородового ухода и обучению акушерок сделали относительно мало для того, чтобы остановить материнскую смерть. Скорее, исследования показали, что женщины умирали от кровотечения, токсикоза, затруднённых родов и последствий небезопасного аборта. Эти выводы привели к коллективному чувству разочарования по сравнению с усилиями предыдущего десятилетия и сильному расхождению во мнениях относительно того, какие меры должны стать приоритетными. Джеймс Вулфенсон, пре-

зидент Всемирного банка, в своем выступлении на конференции подчеркнул тонкость проблемы материнской смертности: «Безопасное материнство – это право человека ... если система позволяет женщине умереть, значит, она потерпела неудачу» [**1**]. Он сосредоточил свое внимание на системных неудачах сектора здравоохранения в отношении женщин. То, что он назвал эти смерти провалом в области прав человека, было объединяющим моментом, который глубоко резонировал с рамками репродуктивных прав.

Предотвращение материнской смертности и заболеваемости, а также обеспечение безопасного, уважительного ухода стали коллективным глобальным приоритетом. Этот формирующийся консенсус в отношении важности охраны материнского здоровья проистекает из признания того, что многие неблагоприятные последствия для здоровья матери не являются неизбежными, а являются результатом законов, политики и институциональных практик, которые могут быть изменены [**2**]. Требования правительств к женщинам брать на себя большую «личную ответственность» за свое здоровье не являются эффективным решением проблем предотвратимой материнской смертности и болезней. Кроме того, права на охрану материнства основываются на ряде основополагающих прав человека, содержащихся в международных договорах и консенсусных документах.

Международная система прав человека определяет основные права, которые принадлежат всем людям, и возлагает на правительства ответственность за обеспечение того, чтобы эти права могли быть реализованы. Права человека включают в себя сексуальные и репродуктивные права, которые необходимы для самоопределения и автономии индивида. Кроме того, правозащитные органы признали, что обеспечение безопасной беременности и родов имеет важное значение для обеспечения достоинства женщин и осуществления их прав человека [**3**]. Таким образом, обеспечение надлежащего репродуктивного и материнского здоровья считается одним из основных государственных обязательств [**4**].

Некоторые из основных международных договоров по правам человека устанавливают, что правительства обязаны защищать права, которые предотвращают ненужную смерть женщин во время беременности и родов. Договорные органы Организации Объединенных Наций (далее - ООН), которые следят за прогрессом правительств и соблюдением этих договоров, уточняют эту обязанность. Систематические неспособности правительств защитить материнское здоровье могут нарушать ряд основных прав женщин, включая право на жизнь, здоровье, равенство, информацию, образование, пользование благами научного прогресса, свободу от дискриминации, свободу от жестокого и бесчеловечного обращения, а также право решать вопрос о количестве детей и интервалах между ними. Эти права не стоят особняком, а взаимозависимы и переплетены. Мы проиллюстрируем международные правовые стандарты в отношении некоторых из этих прав и покажем, как их защита необходима для обеспечения материнского здоровья.

Репродуктивные права включают в себя, прежде всего, основополагающее право человека на жизнь [**5**]. Право на жизнь не должно толковаться узко. Поскольку правительство обязано защищать людей от произвольных и предотвратимых смертей, включая предотвратимые смерти, связанные с беременностью [**6**], оно должно принимать активные меры для устранения как причин, так и распространенности материнской смертности [**7**].

Как установлено в статье 6 Международного пакта о гражданских и политических правах: «право на жизнь есть неотъемлемое право каждого человека. Это право охраняется законом. Никто не может быть произвольно лишен жизни» [**8**]. Защита этого права означает, что правительства должны не только предотвращать произвольные убийства, но и принимать позитивные меры по обеспечению права на жизнь, включая принятие мер по предотвращению ненужной материнской смерти [**9**].

Два договорных органа - Комитет по ликвидации дискриминации в отношении женщин (далее - КЛДЖ) и Комитет по правам человека (далее - КПЧ) - рассматривают материнскую смертность как нарушение права женщин на жизнь. Следующие замечания КПЧ иллюстрируют позитивные меры, которые государства должны принять для обеспечения этого права: «Для того чтобы гарантировать право на жизнь, государству-участнику следует активизировать свои усилия в этой области, в частности, в обеспечении доступности медицинских услуг, включая неотложную акушерскую помощь. Государству-участнику следует обеспечить надлежащую подготовку своих медицинских работников. Государство должно помогать женщинам избегать нежелательной беременности, в том числе путем укрепления своих программ планирования семьи и полового воспитания, а также обеспечивать, чтобы их не заставляли делать подпольные аборты, которые ставят под угрозу их жизнь. В частности, следует обратить внимание на воздейст-

вие ограничительного закона об абортах на здоровье женщин» [**10**].

Из всех показателей здоровья наибольший разрыв между развитыми и развивающимися странами отмечается в показателях материнской смертности. Способность женщин осуществлять свое право на жизнь зависит от их способности осуществлять другие права, включая право на здоровье.

Статья 12 Международного пакта об экономических, социальных и культурных правах гарантирует каждому человеку «наивысший достижимый уровень физического и психического здоровья» [**11**]. В последние годы международные правозащитные органы расширили свои взгляды касательно права на здоровье, особенно в том, что касается репродуктивного здоровья женщин. Комиссия ООН по правам человека заявила, что «сексуальное и репродуктивное здоровье являются неотъемлемыми элементами права каждого человека на наивысший достижимый уровень физического и психического здоровья» [**12**].

Право человека на здоровье состоит из четырех основных элементов: правительства должны обеспечить **наличие** медицинских учреждений, товаров и услуг в достаточном количестве на всей территории государства, **доступных** для всех, **приемлемых** с этической и культурной точек зрения и хорошего **качества [13]**. Признавая, что правительства находятся в ином положении в отношении системы здравоохранения, законодательство в области прав человека определяет право на здоровье не как право быть здоровым, а скорее как право на наивысший достижимый уровень здоровья. Приватизированные системы здравоохранения не освобождают правительство от его обязательств в отношении права на здоровье. Даже когда правительства передают услуги здравоохранения на аутсорсинг частному сектору, они сохраняют за собой обязанность регулировать и контролировать предоставление медицинских товаров, информации и услуг для обеспечения соблюдения права на здоровье. Кроме того, право на здоровье основывается на принципе равенства. Это означает, что правительства должны обеспечить справедливое распределение товаров и услуг в области репродуктивного здоровья, таких как распределение ресурсов здравоохранения среди наиболее социально незащищенных групп населения.

Масштабы материнской смертности отражают не только состояние здоровья женщин - они высвечивают систематическое неравенство и дискриминацию, с которыми женщины сталкиваются ежедневно в самых разных условиях. Как отметила Всемирная организация здравоохранения (далее - ВОЗ), «материнская смертность является показателем неравенства и неравноправия между мужчинами и женщинами, а ее масштабы - признаком места женщин в обществе и их доступа к социальным услугам, услугам в области здравоохранения и питания, а также к экономическим возможностям» [**14**].

Договорные органы ООН установили, что неспособность женщин получить доступ к услугам в области репродуктивного здоровья, включая неотложную акушерскую помощь, является нарушением права женщин на равенство. По мнению КПЧ, такое отсутствие доступа «подрывает способность женщин на равной основе участвовать во всех аспектах социальной, экономической и общественной жизни» [**15**]. Комитет по экономическим, социальным и культурным правам считает, что отсутствие доступа женщин к услугам в области репродуктивного здоровья является дискриминационным, поскольку оно препятствует женщинам в полной мере пользоваться своими экономическими, социальными и культурными правами наравне с мужчинами [**16**].

Ребекка Кук - почетный профессор юридического факультета, медицинского факультета и Объединенного центра биоэтики Университета Торонто, а также содиректор международной программы по праву репродуктивного и сексуального здоровья, прокомментировала: «Право на недискриминацию требует одинакового отношения к одним и тем же интересам, например, обеспечение равного доступа всех рас к медицинскому обслуживанию. Однако данное правомочие также предполагает рассмотрение существенно различных интересов так, чтобы должным образом учитывать эти различия. Поэтому право на недискриминацию по половому признаку означает, что общество должно разумно учитывать такие биологические различия как беременность и деторождение» [**17**].

Приведенные выше примеры указывают лишь на некоторые из многочисленных способов, которыми международное право прав человека защищает права женщин на безопасную беременность и деторождение. По словам Мэри Робинсон, бывшего верховного комиссара ООН по правам человека, «материнская смертность - это огромная проблема прав человека» [**18**]. Однако, по большому счету, данная проблема не была рассмотрена как таковая.

Международные механизмы могут повысить подотчетность там, где национальные механизмы недоступны, неэффективны или отсутствуют. Например, договорные наблюдательные органы ООН, которые

самостоятельно осуществляют надзор за реализацией международных договоров по правам человека, периодически рассматривают национальные доклады, представляемые государствами – участниками, и выносят соответствующие рекомендации. Некоторые из них также контролируют процедуры рассмотрения жалоб. Рекомендации Комитета по вопросам материнской смертности и доступа к эффективным средствам правовой защиты иллюстрируют, как правозащитный подход может укрепить ответственность за материнскую смертность на национальном уровне. Дело Алины да Сильвы Пиментель имеет существенное значение и может иметь глобальные последствия. Алина Пиментель, афро-бразильянка, умерла в возрасте 28 лет от осложнений, вызванных ее беременностью, после того как медицинский центр в Рио-де-Жанейро не смог обеспечить надлежащий и своевременный доступ к неотложной акушерской помощи. Смерть Пиментел можно было предотвратить, если бы медицинский центр правильно диагностировал и лечил ее от внутриутробной смерти плода. Комитет КЛДЖ признал Бразилию нарушившей статью 12 (2) Конвенции КЛДЖ, и сослался на Общую рекомендацию № 28 (2010), в которой говорится, что «политика государства – участника должна быть ориентирована на конкретные действия и результаты, а также должна надлежащим образом финансироваться», и что в соответствии с их Общей рекомендацией № 24 необходимо мобилизовать максимум имеющихся ресурсов для обеспечения права женщин на безопасное материнство и неотложную акушерскую помощь [**19**]. Поэтому Комитет пришел к выводу, что государство нарушило Конвенцию, несмотря на свои утверждения о том, что оно сделало «квалифицированную акушерскую помощь» приоритетом в своем национальном плане политики в отношении женщин. Комитет также подтвердил, что «государство несет прямую ответственность за действия частных учреждений, когда оно передает свои медицинские услуги на аутсорсинг, и что, кроме того, государство всегда сохраняет обязанность регулировать и контролировать деятельность частных медицинских учреждений» [**19**].

Таким образом, в результате проведённого исследования, были представлены следующие основные положения:

- материнская смертность является одной из серьезных проблем прав человека;
- безопасное материнство как одна из категорий репродуктивных прав, базируется на таких основополагающих правах человека как право на жизнь, здоровье и равенство;
- Каждое государство имеет прямое обязательство по обеспечению необходимых условий для реализации права на охрану материнства.

Исходя из вышеизложенного, государствам следует:

- Создать рабочую силу здравоохранения, обученной стандартам в области прав человека и вовлеченной в выработку решений проблем материнского здоровья;
- Содействовать повышению доступности акушерской помощи и услуг по планированию семьи;
- Реформировать дискриминационные законы и политику, влияющие на здоровье и благополучие женщин;
- Вести борьбу с расовыми предрассудками, стереотипами, стигматизацией, дискриминацией и неуважением в сфере здравоохранения;
- Обеспечивать средства правовой защиты в случае нарушения права на доступ к безопасному и уважительному материнскому здравоохранению;
- Поощрять просвещение в области прав человека и информационно-пропагандистскую работу по вопросам их репродуктивного здоровья и прав.

Список использованной литературы

1. Mindy Jane Roseman, Bearing Human Rights: Maternal Health and the Promise of ICPR//Reproductive Health and Human Rights: The way forward, edited by Laura Reichenbach and Mindy Jane Roseman, University of Pennsylvania Press, 2009.
2. Office of the United Nations High Commissioner for Human Rights et al., Summary Reflection Guide on a Human Rights-Based Approach to Health: Application to Sexual and Reproductive Health, Maternal Health, and Under-5 Child Health 3 (2015)
3. CERD Committee, Concluding Observations: United States of America, para. 15, U.N. Doc. CERD/C/USA/CO/7-9 (Sept. 25, 2014); Human Rights Committee, Concluding Observations: Mali, para. 14, U.N. Doc. CCPR/CO/77/MLI (2003); Mongolia, para. 8(b), U.N. Doc. CCPR/C/79/Add.120 (2000); Peru, para. 20, U.N. Doc. CCPR/CO/70/PER (2000); Trinidad and Tobago, para. 18, U.N. Doc. CCPR/CO/70/TTO (2000); Alyne v. Brazil, CEDAW Committee, Commc'n No. 17/2008, paras. 7.5-7.6, U.N. Doc. CEDAW/C/49/D/17/2008 (2011); CEDAW Committee, Concluding Comments: Belize, para. 56, U.N. Doc. A/54/38/Rev.1 (1999); ESCR Committee, Concluding Observations: Brazil, paras. 28-29, U.N. Doc. E/C.12/BRA/CO/2 (2009);

Dominican Republic, para. 15, U.N. Doc. E/C.12/1/Add.16 (1997); CAT Committee, Concluding Observations: Paraguay, para. 22, U.N. Doc. CAT/C/PRY/CO/4-6 (2011); Peru, para. 15, U.N. Doc. CAT/C/PER/CO/5-6 (2013). See also Human Rights Council, Rep. on Technical Guidance on the Application of a Human Rights-Based Approach to the Implementation of Policies and Programmes to Reduce Preventable Maternal Mortality and Morbidity (20th Sess., 2012), para. 8, U.N. Doc. A/HRC/21/22 (2012).

4. Committee on Economic, Social and Cultural Rights, General Comment No. 14: The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12) (22nd Sess., 2000), in Compilation of General Comments and General Recommendations Adopted by Human Rights Treaty Bodies, at 81, 83, 86-87, and 89, paras. 14, 21, 22, 36 and 44(a), U.N. Doc. HRI/GEN/1/Rev.9 (Vol. I) (2008)
5. Universal Declaration of Human Rights, adopted Dec. 10, 1984, art. 3, G.A. Res. 217A (III), U.N. Doc. A/810 at 71 (1948); International Covenant on Civil and Political Rights, adopted Dec. 16, 1966, art. 6, G.A. Res. 2200A (XXI), U.N. GAOR, 21st Sess., Supp. No. 16, U.N. Doc. A/6316 (1966), 999 U.N.T.S. 171 (entered into force Mar. 23, 1976); Convention on the Rights of the Child, adopted Nov. 20, 1989, art. 6, G.A. Res. 44/25, Annex, U.N. GAOR, 44th Sess., Supp. No. 49, U.N. Doc. A/44/49 (1989) (entered into force Sept. 2, 1990); Convention on the Rights of Persons with Disabilities, adopted Dec. 13, 2006, art. 10, G.A. Res. A/RES/61/106, U.N. GAOR, 61st Sess., U.N. Doc. A/61/611 (entered into force May 3, 2008).
6. Human Rights Committee, General Comment No. 28: Article 3 (The Equality of Rights between Men and Women) (68th Sess., 2000), in Compilation of General Comments and General Recommendations Adopted by Human Rights Treaty Bodies, at 229, para. 10, U.N. Doc. HRI/GEN/1/Rev.9 (Vol. I) (2008)
7. Human Rights Committee, Gen. Comment No. 6, at 177, para. 5; Human Rights Committee, Gen. Comment No. 28, supra note 15, at 229, para. 10; see also Special Rapporteur on Violence against Women, Its Causes and Consequences, Rep. of the Special Rapporteur on Violence against Women, Its Causes and Consequences, Ms. Radhika Coomaraswamy, in Accordance with Commission on Human Rights Resolution 1997/44 – Addendum – Policies and Practices that Impact Women's Reproductive Rights and Contribute to, Cause or Constitute Violence against Women, para. 66, U.N. Doc. E/CN.4/1999/68/Add.4 (Jan. 21, 1999) (noting "[g]overnment failure to take positive measures to ensure access to appropriate health-care services that enable women to safely deliver their infants as well as to safely abort unwanted pregnancies may constitute a violation of a woman's right to life…").
8. International Covenant on Civil and Political Rights//Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966 entry into force 23 March 1976, in accordance with Article 49
9. Equality of Rights Between Men and Women, General Comment No. 28, U.N. Human Rights Comm., 68th Sess., 10, U.N. Doc. CCPR/C/21/Rev.1/Add.10 (2000)
10. Concluding Observations of the Human Rights Committee: Mali, 77th Sess., ¶ 14, U.N. Doc CCPR/CO/77/MLI (2003).
11. International Covenant on Economic, Social and Cultural Rights// Adopted and opened for signature, ratification and accession by General Assembly resolution 2200A (XXI) of 16 December 1966 entry into force 3 January 1976, in accordance with article 27
12. The Right of Everyone to the Enjoyment of the Highest Attainable Standard of Physical and Mental Health, Commission on Human Rights Resolution: 2004/27, U.N. Office of the High Commissioner for Human Rights, 52nd Mtg., at 3.
13. Committee on Economic, Social and Cultural Rights/ General Comment No General Comment No. 14: The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12) (22nd Sess., 2000), in Compilation of General Comments and General Recommendations Adopted by Human Rights Treaty Bodies, at 81, 83, 86-87, and 89, paras. 14, 21, 22, 36 and 44(a), U.N. Doc. HRI/GEN/1/Rev.9 (Vol. I) (2008).
14. World Health Organization (WHO) et al., Maternal Mortality in 2005: Estimates Developed by WHO, UNICEF, UNFPA and The World Bank 1 (2005); WHO et al., Reduction of Maternal Mortality: A Joint WHO/UNFPA/UNICEF/World Bank Statement 13-14 (1999)
15. Center for Reproductive Rights, Bringing Rights to Bear: Preventing Maternal Mortality and Ensuring Safe Pregnancy (2008) at 9.
16. Center for Reproductive Rights, Bringing Rights to Bear: Preventing Maternal Mortality and Ensuring Safe Pregnancy (2008) at 11
17. Rebecca J. Cook et al., Advancing Safe Motherhood through Human Rights 3 (World Health Organization 2001); Thoraya Ahmed Obaid, No Woman Should Die Giving Life, Lancet, Oct. 13-19, 2007, at 1287.
18. Women Deliver Invitation, http://www.who.int/pmnch/events/ maryrobinson_eng
19. Alyne da Silva Pimentel v. Brazil (Communication No. 17/2008)

Сдана/Հանձնվել է՝ 26.08.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 29.08.2020
Принята/Ընդունվել է՝ 31.08.2020

Նախնական քննության գաղտնիքը՝ որպես օրենքով պահպանվող գաղտնիքի պաշտպանության քրեադատավարական միջոց

Սուքիասյան Վ. Հ.
ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական, ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ (Երևան, Հայաստան)
varazdatsukiasyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *նախնական քննության գաղտնիք, օրենքով պահպանվող գաղտնիք, դատավարական միջոց, պատասխանատվություն*

Тайна предварительного следствия как уголовно-процессуальное средство защиты охраняемой законом тайны

Сукиасян В. О.
Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА, аспирант кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ (Ереван, Армения)
varazdatsukiasyan@gmail.com

Аннотация: В статье рассмотрены проблемы применения ст. 201 УПК РА в качестве процессуального средства обеспечения охраны информации в уголовном процессе. Обосновано несовершенство положений ст. 201 УПК РА, регулирующих порядок предупреждения следователем или дознавателем участников уголовного судопроизводства о недопустимости разглашения данных предварительного расследования.
Ключевые слова: тайна предварительного следствия, охраняемая законом тайна, процессуальное средство, ответственность

Secrecy of the preliminary investigation as a criminal procedural remedy for legally protected secrets

Sukiasyan V. H.
Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court, PhD Student at the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU Institute of Law and Politics (Yerevan, Armenia)
varazdatsukiasyan@gmail.com

Abstract: The article deals with the problems of applying Art. 201 of the RA Criminal Procedure Code as a procedural means of ensuring the protection of information in criminal proceedings. The imperfection of the provisions of Art. 201 of the RA Criminal Procedure Code, regulating the procedure for warning by an investigator or an inquirer to participants in criminal proceedings about the inadmissibility of disclosing the data of the preliminary investigation.
Keywords: secret of preliminary investigation, secret protected by law, procedural means, responsibility

Ընդհանուր առմամբ, բազմաթիվ պետություններում քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված նախնական քննության գաղտնիքի գոյության համար առանձնացվում են երեք հիմնական նպատակներ՝

- քննության շահերի ապահովումը [**17**, էջ 235],
- մեղադրյալի անմեղության կանխավարկածի ապահովումը [**16**, էջ 559],
- տվյալ գործով հաջորդող դատական քննության ընթացքում դատարանի մոտ նախնական կարծիք ձևավորելու կանխում [**8**, էջ 559]:

Քրեադատավարական գործունեության իրականացման ընթացքում ի հայտ է գալիս տեղեկատվություն, որը պահպանվում է օրենքով և ենթակա է պաշտպանության քրեադատավարական և քրեաիրավական պաշտպանության միջոցների գործադրմամբ:

Քրեական գործում կարող են պարունակվել օրենքով պահպանվող տարբեր տեսակի գաղտնիքներ, որոնց հրապարակումը կարելի է դիտարկել որպես անձանց իրավունքների նկատմամբ ոտնձգություն, հանրորեն վտանգավոր արարք [**15**, էջ 134]: Բացի այդ, նշված տեղեկությունների հրապարակումը կարող է հանգեցնել վկաների և տուժողների ցուցմունքների փոփոխմանը կամ որևէ ապացույցի ոչնչացմանը [**9**, էջ 148]:

Պատահական չէ, որ նախնական քննության տվյալների հրապարակման համար ուսումնասիրված 30 պետությունների (Շվեյցարիա, Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Չեխիա,

Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մոլդովա, Մոնակո, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Ռուսաստան, Սլովակիա, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Մակեդոնիա, Թուրքիա, Ուկրաինա, Միացյալ Թագավորություն) քրեական օրենսգրքերում որպես հանցագործություն նախատեսված է առանց համապատասխան թույլտվության նախնական քննության տվյալների հրապարակումը: Ընդ որում՝ 23 պետություններում հանցագործության սուբյեկտն ընդհանուր է, իսկ Ավստրիայում, Լիտվիայում, Լյուքսեմբուրգում, Մոլդովայում, Ռումինիայում, Իսպանիայում և Ուկրաինայում քրեական պատասխանատվության են ենթակա միայն քրեական դատավարության մասնակիցները: Նշված երկրներից միայն Շվեյցարիայի քրեական օրենսգրքով (293-րդ հոդված) է նախատեսված խրախուսական նորմ, ըստ որի՝ նախնական քննության տվյալները հրապարակած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հրապարակված գաղտնիք կազմող տեղեկություններն ունեն նվազ կարևորություն: Այս խրախուսական նորմի կապակցությամբ Շվեյցարիայի դատական պրակտիկայում [**7**, էջ 244] ձևավորվել է գաղտնիության ձևական տեսությունը (formal conception of secrecy):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը նվիրված է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիությանը կամ քրեադատավարական գիտությանը քաջ հայտնի նախնական քննության գաղտնիքին:

Նշված հոդվածի համաձայն՝

«1. Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ:

2. Անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականերին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին»:

Անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության, նոր 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ օգտագործվում է ոչ թե նախաքննություն և հետաքննություն եզրույթները, այլ մինչդատական քրեական վարույթ եզրույթը (Սահմանադրության 176-րդ և 178-րդ հոդվածներ): Այսինքն, կարելի է արձանագրել, որ ի դեմս մինչդատական քրեական վարույթի գործ ունենք սահմանադրաիրավական հասկացության հետ:

Դրանից բացի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի իմաստով քրեական գործով մինչդատական վարույթի հասկացությունը ներառում է քրեական գործով վարույթը քրեական գործ հարուցելու հարցի լուծման պահից մինչև գործն ըստ էության քննելու համար դատարան ուղարկելը: Այսինքն, մինչդատական քրեական վարույթը ավելի լայն հասկացություն է, քան նախնական քննությունը, քանի որ այն հաջորդում է քրեական գործի հարուցմանը [**5**, էջ 50], և միասին կազմում են քրեական գործով մինչդատական վարույթը: Բանն այն է, որ քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլում նույնպես ի հայտ է գալիս տեղեկատվություն, ընդհուպ մինչև օրենքով պահպանվող գաղտնիքներ, որոնք չպետք է հրապարակվեն մինչդատական վարույթի խնդիրներն ու նպատակները պատշաճ ապահովելու համար: Իսկ գործող օրենսդրության պայմաններում ստացվում է մի իրավիճակ, որ քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլում ստացվող տեղեկատվության վրա չի տարածվում նախնական քննության գաղտնիության պահանջը:

Այս հարցի կապակցությամբ համընկնող է Վ.Ե.Եվսենկոյի կարծիքն առ այն, որ քրեական գործի հարուցման փուլում օրենքով պահպանվող գաղտնիքների տեսակների բազմազանությունից հաճախ առաջանում են հասարակական հարաբերություններ, որոնք շոշափում են քաղաքացիների մասնավոր կյանքի գաղտնիքը, հետևաբար, գաղտնիքի հենց այդ տեսակն էլ խոցելի է և ռիսկային է՝ քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի անհիմն խախտման տեսանկյունից [**11**, էջ 68]:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ նաև՝ Օրենսգրքի նախագիծ) ամրագրվել է ոչ թե նախնական քննության, այլ՝ նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Առաջին հայացքից սա պետք է պայմանավորված լիներ *մինչդատական վարույթ, նախաքննություն, հետաքննություն* եզրույթների տարբերությամբ, սակայն Օրենսգրքի նախագծով՝

-մինչդատական վարույթը վարույթի հանրային մասնակիցների կողմից իրենց իրավասության սահմաններում իրականացվող ընթացակարգ է,

-նախաքննությունը՝ քննիչի կողմից իր իրավասության սահմաններում ենթադրյալ հանցանքի կապակցությամբ իրականացվող գործունեություն,

-հետաքննությունը՝ հետաքննության մարմնի կողմից նախաքննության ընթացքում իրականացվող և դրան օժանդակող գործունեություն, որը ներառում է գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների կատարումը:

Այսինքն, Օրենսգրքի նախագծով նույնպես մինչդատական վարույթի հասկացությունը ավելի լայն է, քան նախաքննության:

Արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունների ուսումնասիրությունը նույնպես ցույց է տալիս, որ այս հարցում իրավական կարգավորումը թերի է: Մասնավորապես, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածը սահմանում է մինչդատական քննության հրապարակման անթույլատրելիությունը, այն պայմաններում, երբ Ուկրաինայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է նաև հետաքննություն, ինչը չի ներառվում մինչդատական քննության սահմաններում: Եզրութաբանական առումով նույնն է իրավիճակը նաև Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներով (201-րդ հոդված):

2017 թվականի փոփոխություններով Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածով հետաքննությունը նույնպես ներառվել է նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության ներքո, սակայն դուրս է մղվել քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլը:

Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածը նախատեսում է քրեական հետապնդման կոնֆիդենցիալությունը՝ դուրս թողնելով հետաքննությանը (Մոլդովայի քրեադատավարական օրենսդրությամբ հետաքննությունն անվանվում է սպայություն):

Նման պայմաններում նպատակահարմար է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածը փոփոխել[1] այն հաշվով, որ նախ, վերնագիրն անվանվի «*մինչդատական քրեական վարույթի տվյալների հրապարակման անթույլատրելիությունը»,* երկրորդ, բովանդակության մեջ *«նախնական քննության տվյալներ»* ձևակերպման փոխարեն ներառվի *«մինչդատական քրեական վարույթի տվյալներ»* ձևակերպումը:

Մինչդատական քրեական վարույթի տվյալների հրապարակման անթույլատրելիության վերաբերյալ հաջորդ խնդիրը կապված է նրա հետ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածում ամրագրված է դրույթ, ըստ որի՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Այսինքն, գործող ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ in concreto նշված չէ, թե նախնական քննության որ տվյալներն են հանդիսանում հրապարակման ոչ ենթակա: Այլ կերպ, ամրագրելով նախնական քննության տվյալների, ըստ էության, գաղտնիության պահանջ, օրենսդիրը չի որոշակիացնում այն տեղեկությունները, որոնք կազմում են նախնական քննության գաղտնիքի բովանդակությունը:

Այս հարցի շուրջ առկա չէ միասնական մոտեցում նաև քրեադատավարական գիտության մեջ: Այսպես, Ի.Լ.Պետրուխինի կարծիքով ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը պարունակում է այն հիմքերը, որոնց դեպքում դատավարությունն իրականացվում է դռնփակ, ուստի անհրաժեշտ է, որ օրենսդիրը նշի նաև նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունները, այլ ոչ թե թողնի վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը [**14**, էջ 205]:

Հակառակ մոտեցման կողմնակիցներն են Ա.Ե.Մասլովը և Ս.Մ.Դարավսկիխը, վերջիններս գտնում են, որ քրեադատավարական օրենսդրությամբ նպատակահարմար չէ սպառիչ կերպով ամրագրել այն տեղեկությունները, որոնք հանդիսանում են նախնական քննության գաղտնիք, քանի որ այդ տեղեկությունները բազմազան են և կոնկրետ դեպքում տարբերվում են [**13**, էջեր 101-104, էջ 42]:

Յու.Պ.Գարմաևի կարծիքով, եթե քրեաիրավական և քրեադատավարական նորմերը չեն բացահայտում, թե ո՞ր տեղեկություններն են հանդիսանում նախաքննական գաղտնիք, ապա այդ դեպքում պետք է նախաքննական գաղտնիք դիտել նախաքննության ցանկացած տվյալ, ընդհուպ մինչև քննչական գործողությունների կատարման փաստը [**10**, էջ 150]:

Փորձելով հայտնել դիրքորոշում նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների սպառիչ ամրագրման կամ հայեցողական իրավական վիճակը պահպանելու վերաբերյալ, հարկ է անդրադառնալ Օրենսգրքի նախագծի կարգավորումներին, ինչպես նաև միջազգային իրավական փորձին:

Օրենսգրքի նախագծի 186-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«2. Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է՝*

1) խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին.

2) դառնալ հանցանքի կատարման պատճառ.

3) վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը.

4) հանգեցնել օրենքով պահպանվող

[1] Նույն փոփոխությունը *mutatis mutandis* կիրառելի է նաև Օրենսգրքի նախագծի 186-րդ հոդվածի նկատմամբ:

գաղտնիքի հրապարակման»:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից բխում է, որ նախագծով, ըստ էության, ամրագրվել է նախաքննության տվյալների հրապարակման արգելքի հիմք-հետևանքները: Այլ կերպ, թվարկվել է ոչ թե գաղտնիք պարունակող տեղեկությունների սպառիչ ցանկ, այլ ենթադրյալ հետևանքները, որոնք կարող են առաջանալ այս կամ այն տեղեկության հրապարակման դեպքում: Ընդ որում՝ տվյալ դեպքում նույնպես իրավակարգավորման հայեցողական մեթոդն է ընտրվել, քանի որ ի վերջո վարույթն իրականացնող մարմինն է գնահատելու այն տեղեկությունը, որի հրապարակման դեպքում կարող են վրա հասնել որոշակի հետևանքները: Նույն իրավակարգավորման մեթոդն է նախատեսված նաև Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածում:

Արտասահմանյան երկրների քրեադատավարական օրենսդրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծամասամբ ընտրված է նախնական քննության գաղտնիքի սահմանման ոչ սպառիչ տարբերակը, այսինքն՝ այն թողնված է վարույթն իրականացնող մարմնի հայեցողությանը: Մասնավորապես, հայեցողական ձևը նախատեսված է՝ Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի, Ղազախստանի, Մոլդովայի, Ուզբեկստանի քրեադատավարական օրենսգրքերով:

Չափազանց լայն հայեցողություն տրամադրելը վարույթն իրականացնող մարմնին՝ որոշելու նախաքննության գաղտնիքի ծավալը՝ կարող է լուրջ սպառնալիք հանդիսանալ իրավական որոշակիության սկզբունքի ապահովմանը:

Մեր կարծիքով, գաղտնիք կազմող տեղեկության պահպանությունը չի կարող իրականացվել վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ յուրաքանչյուր դեպքում տեղեկությունների հայեցողական ծավալ սահմանելով: Ստեղծված իրավիճակում առաջարկում ենք սպառիչ կերպով նշել այն տեղեկությունները, որոնք հանդիսանում են հրապարակման ոչ ենթակա տվյալներ: Մեր այս մոտեցումը հիմնըված է նաև ՀՀ օրենսդրի կողմից ընտրված՝ օրենքով պահպանվող գաղտնիքների իրավակարգավորման եղանակի վրա: Այլ կերպ, ՀՀ օրենսդիրը սահմանելով օրենքով պահպանվող գաղտնիք՝ պարտադիր կերպով թվարկում է այն տեղեկությունները, որոնք ներառվում են դրա մեջ: Վառ օրինակ է «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը, որի 9-րդ հոդվածը սահմանում է պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները, իսկ 10-րդ հոդվածը նշում է այն տեղեկությունները, որոնք պետական և ծառայողական գաղտնիքի շարքին չեն կարող դասվել:

Այն, որ սպառիչ կերպով պետք է սահմանվի նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը, դեռևս չի նշանակում, որ նախնական քննության գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությունը զրկվում է իր ճկունությունից: Օրինակ, իրավական որոշակիության սկզբունքի ապահովման գերակայությունից ելնելով՝ օրենսդիրն սպառիչ կերպով թվել է պետական գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը, որի պահպանության ոլորտն ավելի գերակա դիրքերում է գտնվում պետության համար, քան նախնական քննության գաղտնիքի պահպանումը: Հետևաբար, որևէ խոչընդոտ չկա, որպեսզի որոշակիացվեն և հստակ սահմանվեն նաև նախնական քննության՝ հրապարակման ոչ ենթակա տվյալները:

Հաջորդ խնդիրը, որը վերաբերում է մինչդատական քրեական վարույթի տվյալների հրապարակման անթույլատրելիությանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիան է, որտեղ օրենսդիրը սահմանել է, որ անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, նրանց ներկայացուցիչներին, մասնագետներին, փորձագետներին, թարգմանիչներին, ընթերականերին, պաշտպաններին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

Խնդիրն այն է, որ օրենսդիրը պայման է դրել վարույթն իրականացնող մարմնի առաջ, որ միայն անհրաժեշտ դեպքերում կարող է գրավոր նախազգուշացնել նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: Տվյալ դեպքում հարց է ծագում, թե ինչո՞վ է պայմանավորվում անհրաժեշտությունը և որո՞նք են այդ անհրաժեշտ դեպքերը:

Քրեադատավարական գիտության մեջ կարծիք է արտահայտվել, որ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին նախազգուշացնելը պետք է իրականացվի սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշների հաշվառմամբ: Սուբյեկտիվը վկայում է այն մասին, որ քննության մասնակիցը իրական հնարավորություն ունի հրապարակելու քրեական գործի տվյալները, իսկ օբյեկտիվը՝ երբ առկա է օրենքով պահպանվող հասարակական հարաբերություններին էական վտանգ հասցնելու իրական վտանգ [**12**, էջ 118]:

Ս.Ա.Դիլբանդյանն իրավացիորեն նշել է, որ

բավական տարածված պրակտիկա է պաշտպաններին նախազգուշացնել նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիության մասին: Պետք է նշել, որ նման նախազգուշացումը նաև խոչընդոտ է պաշտպանի կողմից ապացույցների հավաքմանը մասնակցելուն, մասնավորապես նման սահմանափակման պայմաններում պաշտպանը չի կարող դիմել մասնագետի և կարծիք ստանալ իրեն հետաքրքրող հարցերի վերաբերյալ: Վերջինիս կարծիքով փաստաբանը չպետք է ստորագրի աբստրակտ որոշման տակ, այսինքն՝ եթե կոնկրետացված չէ, թե նախաքննության ինչ տվյալների մասին է խոսվում, ինչ ժամկետներում: Փաստաբանը պետք է ստորագրություն տա միայն համապատասխան քննչական և դատավարական գործողություններից իրեն հայտնի դարձած տեղեկությունների մասին, եթե տեղեկությունները այլ աղբյուրներից են ստացվել, ապա դրա համար նա չի կարող զգուշացվել [**1**, էջ 392]:

Ա.Ս.Դիլբանդյանի և Յու.Ս.Ժարիկովի աշխատություններում ընդհանրականն այն է, որ երկու աշխատություններում էլ բարձրացվում է նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության վերաբերյալ քրեադատավարական և քրեաիրավական նորմերի անորոշ լինելու սահմանադրականության հարց:

Կարծում ենք, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է յուրաքանչյուր դեպքում պատճառաբանի դատավարության մասնակցին, թե ինչու է իրեն նախազգուշացնում նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին: Հակառակ դեպքում կստացվի, որ օրինակ՝ դատավարության մասնակիցներին հարցաքննելու ժամանակ նրանց տիպային փաստաթղթերով նախազգուշացնելը կդիտվի օրինաչափություն, որպիսի պայմաններում առարկայազուրկ կդառնա միայն անհրաժեշտ դեպքերում նախազգուշացնելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի դրույթը: Բանն այն է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար: Այսինքն, խոսքը գնում է ընդհանուր սուբյեկտի մասին և ձևական հանցակազմի: Ստացվում է, որ անկախ քրեադատավարական իմաստով նախազգուշացված լինելու հանգամանքից, ինչպես նաև տվյալների հրապարակման՝ հանրորեն վտանգավոր հետևանքներից, անձը ենթակա է պատասխանատվության նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելու համար:

Բացի այդ, նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության քրեադատավարական նորմը նախազգուշացվող դատավարության մասնակիցների ցանկում չի նշում կասկածյալին և մեղադրյալին, սակայն պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ վերջիններս նույնպես հանդիսանում են տվյալ հանցագործության սուբյեկտ: Մեր կարծիքով, նման մոտեցումը ընդունելի չէ ժողովրդավարական հասարակության արժեքների և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ ուղղակիորեն հակասում է մեղադրվող անձի պաշտպանության իրավունքին:

Նախնական քննության գաղտնիքն օրենքով պահպանվող գաղտնիքներից միակն է, որը նաև ստանձնում է օրենքով պահպանվող այլ գաղտնիքների քրեադատավարական պաշտպանության միջոցի դեր: Այս պնդման վառ հիմնավորման դրսևորում է Օրենսգրքի նախագծի 186-րդ հոդվածի դրույթն առ այն, որ նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա, ի թիվս այլնի, կարող է հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման (նույնաբովանդակ դրույթ նախատեսված է Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածով):

Անդրադառնալով նախնական քննության գաղտնիքի վերաբերյալ եվրոպական չափանիշներին՝ հարկ է ընդգծել, որ դրանք տեղ են գտել Եվրոպայի խորհրդի մարմինների խորհրդատվական փաստաթղթերում և Եվրոպական դատարանի վճիռներում: Պետք է ընդգծել, որ նշված փաստաթղթերը մեծամասամբ վերաբերում են նաև լրագրողների իրավունքներին և նրանց կողմից քրեական վարույթի հանգամանքները լուսաբանելու թույլատրելի սահմաններին:

Հետաքննական լրագրության պաշտպանության և խթանման վերաբերյալ ԵԽ հռչակագիրը կոչ է անում անդամ երկրներին պաշտպանել և խթանել հետաքննական լրագրությունը, այդ թվում՝ ապահովելով լրագրողների՝ տեղեկատվության ազատության իրավունքը:

ԵԽ Զանգվածային լրատվամիջոցներով քրեական վարույթի հետ կապված տեղեկատվության տրամադրման վերաբերյալ հռչակագիրը կոչ է անում ԵԽ անդամ պետություններին՝ խրախուսել լրատվամիջոցներում քրեական գործերի վերաբերյալ պատասխանատու հրապարակումները օրենքի և դատական վարույթի վերաբերյալ լրագրողների ուսուցումներին աջակցելու միջոցով, լրատվամիջոցների, մասնագիտացված կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և դատարանների համագործակցությունը

ապահովելու միջոցով: ԵԽ-ն նաև կոչ է անում անդամ պետություններին՝ աջակցել այն նախաձեռնություններին, որոնցով լրատվամիջոցները սահմանում են մասնագիտական էթիկայի չափանիշներ, որոնք կարտացոլեն նաև ՋԼՄ-ների հրապարակումներում քրեական վարույթների նկատմամբ հարգանք ապահովելու սկզբունքները:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը «Լրտեսության կամ պետական գաղտնիք հրապարակելու վերաբերյալ քրեական գործերով արդար դատաքննության մասին» թիվ 1551 (2007) բանաձևում նշել է, որ պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունը, ներառյալ քրեական պատասխանատվության համար հիմք հանդիսացող գաղտնագրման ենթակա տեղեկությունների ցանկերը, պետք է լինեն հստակ ու առաջին հերթին հրապարակային:

Հատկապես կարևոր է ԵԽ Նախարարների կոմիտեի «Լրատվամիջոցներով քրեական վարույթներին վերաբերող տեղեկությունների տրամադրման մասին» Rec(2003)13 հանձնարարականի պահանջների ապահովումը ՀՀ-ում, քանի որ այն ուղղակիորեն վերաբերում է քրեական վարույթի հանրայնության և գաղտնիության ապահովմանը: Հանձնարարականի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս է, հետևաբար ընթացիկ քրեական վարույթին վերաբերող կարծիքները և տեղեկությունները կարող են տրամադրվել կամ տարածվել լրատվամիջոցներով, եթե դա չի խախտում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը:

Նույն հանձնարարականի 8-րդ սկզբունքը նվիրված է շարունակվող քրեական վարույթի ընթացքում անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովմանը: Նշված սկզբունքի համաձայն՝ կասկածյալների, մեղադրյալների կամ դատապարտյալների վերաբերյալ տեղեկության տրամադրման դեպքում պետք է ապահովվի վերջիններիս՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված մասնավոր կյանքի անձեռնմխելիության պաշտպանության իրավունքը: Առանձնակի պաշտպանություն պետք է ապահովվի անչափահասներին և այլ սահմանափակ գործունակությամբ օժտված անձանց:

Հարկ է մեջբերել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումը հանձնարարականների և եվրոպական չափանիշների կիրառման մասով. վերջինիս դիտարկմամբ անմեղության կանխավարկածի պահպանման պահանջի խախտումները լրատվամիջոցներով, այդ թվում՝ այլ հեռուստաընկերություններով կրում են տարածված բնույթ: Սա մտահոգիչ երևույթ է, որի վերացման ուղղությամբ պետք է տարվեն համակարգված ու նպատակային աշխատանքներ [**6**, հղումը]:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության վերաբերյալ թիվ (2002)2 հանձնարարականում նշվում է, որ անդամ պետությունները կարող են սահմանափակել պաշտոնական փաստաթղթերին հասանելիությունը: Այդպիսի սահմանափակումները պետք է նախատեսված լինեն օրենքով, անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և համաչափ պաշտպանելու՝

1. ազգային անվտանգությունը, պաշտպանությունն ու միջազգային հարաբերությունները,
2. հասարակական անվտանգությունը,
3. հանցագործությունների կանխումը, քննությունն ու հետապնդումը,
4. մասնավոր կյանքի գաղտնիությունն ու իրավաչափ մասնավոր շահերը,
5. առևտրային կամ այլ տնտեսական շահերը,
6. դատավարության կողմերի հավասարությունը,
7. բնապահպանությունը,
8. հանրային իշխանությունների կողմից իրականացվող ստուգումները, հսկողությունն ու վերահսկողությունը,
9. պետության տնտեսական, դրամավարկային և փոխարժեքային քաղաքականությունը,
10. հանրային իշխանությունների կողմից կամ դրանց միջև իրականացվող բանակցությունների գաղտնիությունը:

Եվրոպական դատարանը նախաքննության գաղտնիքի վերաբերյալ ունի մի քանի վճիռներ [**2**], որոնցից արժեքավորը Bédat v. Switzerland [**3**] գործով 2016 թվականի մարտի 26-ին կայացված վճիռն է: Հաշվի առնելով դրա կարևորությունը իրավակիրառ պրակտիկայի համար՝ որոշ կետեր մանրամասն կներկայացվեն ստորև:

Ըստ Եվրոպական դատարանի վերոնշյալ վճռի փաստական հանգամանքների՝ լրագրող Բեդային մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հրապարակել է չավարտված քրեական վարույթում գտնվող տվյալներ՝ հարցաքննությունների արձանագրություններ և նամակագրություն (նշված փաստաթղթերում տվյալներ են եղել մեղադրյալի մասնավոր կյանքի վերաբերյալ), որոնք վերջինս ստացել էր քրեական վարույթի մասնակից չհանդիսացող անձից: Ներպետական դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ, որը բողոքարկվել է Շվեյցարիայի դաշնային դատարան և 2008 թվականի ապրիլի 29-ի որոշմամբ դատավճռի դեմ բերված բողոքը մերժվել է:

[186] **Тель-Авивский махоз** (ивр. מחוז תל אביב) – административный округ Израиля. Административный центр – Тель-Авив (ивр. תֵּל־אָבִיב-יָפוֹ, араб.: تـل أبيب). Агломерация, образовавшаяся вокруг округа и соседних городов, называется Гуш-Дан.

[187] **Яффо** или **Яффа** (ивр. יפו, араб. يَافَا, англ. Jaffa) – город-порт в округе Тель-Авив, входит в состав второй по величине агломерации Гуш-Дан.

315.	церковь	Св. Николая Чудотворца	В монастыре Св. Николая Чудотворца, **Там же**	406	
316.	хачкар	Памятный с однострочной надписью на армянском языке	Вмонтирован в стену справа от правого алтаря в церкви Св. Николая Чудотворца, **Там же**		
317.	здание	гостиница для паломников	В монастыре, **Там же**	XVII в.	
318.	хачкар		Вмонтирован в стену под монастырской колокольней, **Там же**		
319.	хачкар	В память о завершении реставрации [**7**, с. 87]	Установлен во дворе монастыря у колонны справа от входа в церковь Св. Николая Чудотворца под предыдущим хачкаром из мрамора, **Там же**	2008	
320.	хачкар		Установлен во дворе монастыря у колонны справа от предыдущего хачкара, **Там же**	2.06.2015	
321.	ворота	монастырские	Выходят на набережную, Entrance to Saint Nicholas Monastery, **Jaffa**		
322.	хачкар	В память о завершении реставрации [**7**, с. 86]	Вмонтирован в стену над монастырскими воротами, **Jaffa**	2008	

323.	хачкар	В память о С. и Л. Мхитарянов [7, с. 86]	Установлен во дворе монастыря Св. Николая Чудотворца, **Jaffa**	2008	
324.	лапидарная надпись	Четырехстрочная на армянском[188] языке	Находита на лицевой стороне ппостамента хачкара, **Там же**		
325.	мемориальная доска	Памятная надпись о превращении монастыря в марте 1799 г. Наполеоном в армейский госпиталь (на армянском[189], иврите, арабском и английском яз.)	Вмонтирована в стену спрева у монастырских ворот, **Там же**		
326.	лапидарная надпись	Строительная памятная 9-строчная на армянском языке	Вмонтирована в стену в порту, Netiv Ha-Mazalot St. at the Yafo Harbor, **Jaffa**	1651	
327.	здание	патриархии	**Jaffa**		
328.	*улица*	Вахтангова	str. Vakhtangov, **Jaffa**		Протяженность: 160 м

Приложение I

ЗДЕСЬ НАЗВАНИЯ МОНАСТЫРЕЙ, ПОСТРОЕННЫХ В ИЕРУСАЛИМЕ АЛУАНЦАМИ, КОТОРЫЕ МЫ ВЗЯЛИ ИЗ ПИСЬМА БЛАЖЕННОГО АНАСТАСА К hАМАЗАСПУ КАМСАРАКАНУ

Монастырь Панда находится к востоку от Елеонской горы. Построил его некий Панон – пустынник из Алуанка. Теперь же там [служителем] священник Петрос из Алуанка.

Монастырь Мрува сорока святых [мучеников отроков] на той же стороне поблизос-ти от предыдущего, который ныне в руках тачиков.

Монастырь Партава – Святой Богородицы, близ башни Давида, ныне его содержит некая женщина по имени Мариам из Шамхора половина же его в руках арабов.

Монастырь Каланкатуйка на той же стороне, ныне его содержит Теодорос [некий] дпир Абул-Кама, тачик-христианин сын Авраамов из города Заришата в гаваре Алиовит; другой же половиной его владеет злонравный и неправедный араб.

Монастырь Арцаха – Святой Богородицы, находящийся к югу от [монастыря] святого Стефана, им ныне полностью владеют тачики.

Монастырь Амараса – Святого Григора, ныне его содержит некая женщина, а другой половиной владеют тачики.

---

[188] Ի ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՅՍ ՍՈՒՐԲՆ ԼԻՉԱ / ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՆ / Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՕՑ ՌՆՇԷ (2008) ՅՈՊՊԷ / ՍՄԲԱՏ ՄԽԻՏԱՐԵԱՆ

[189] ՎԱՆՔ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՆԻԿՈՂԱՅՈՍԻ / Ս.ՆԻԿՈՂԱՅՈՍԻ ՎԱՆՔԸ ՎԱՂՈՒՑ ԱՆՏԻ ԳՈՅՈՒԹՅԻՒՆ ՈՒՆԵՑՈՂ / ԿԱՌՈՒՑՑ ՄԸՆ Է, ԿԱՌՈՒՑՈՒԱԾ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ: / ԱՆ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ Է ԾՈՎՈՒ ՃԱՄԲՈՎ ԺԱՄԱՆՈՂ ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐ-ՆԵՐՈՒ ՈՐՊԷՍ ՀՈԳԵՏՈՒՆ: ՆԱՓՈԼԷՈՆ ՊՈՆԱՓԱՐԹ ՄԱՐՏ ԱՄՍՈՒ / 1799-ԻՆ ԳՐԱՒԵՑ ՅԱՊՊԷ ՔԱՂԱՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԳՈՐԾԱԾԵՑ ՆԱՓՈԼԷՈՆԻ ԲԱՆԱԿԻ ԺԱՆՏԱԽՏՈՎ ՎԱՐԱԿՈՒԱԾ ՉԻՆՈՒՐՈՆԵՐՈՒՆ / ՈՐՊԷՍ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ: ՊՈՆԱՓԱՐԹ ԱՆՁԱՄԲ ԱՅՑԵԼԱԾ Է ԻՐ / ՉԻՆՈՒԷՈՐՆԵՐԸ ԱՅՍ ՎԱՆՔԻՆ ՄԷՋ: ԱՅՍՕՐ, ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԳՈՐ-/ԾԱԾՈՒԻ ՈՐՊԷՍ ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆԷԻՆ ԿՈՂՄԷ:

Еще три других алуанских **монастыря**, которыми силой завладели тачики. Названия их неизвестны.

Еще один монастырь алуанский – ниже **монастыря Аравенеан**, находящегося посередине рынка, которым ныне владеют тачики. Так, из зависти патриархи иерусалимские препятствовали армянам и алуанцам оказывать помощь [своим] монастырям. Ибо там ***находится более ста монастырей*** и заботясь о них, армянские князья уплатили царю Юстиниану семь кентинариев, т. е. семьдесят тысяч золотых дahеканов, и освободили все монастыри от насилия патриархов, но впоследствии из-за нерадивости наших [священников] все они были отчуждены.

Закончилось повествование второй средней [книги] Истории страны Алуанк.

[**34**, Книга Вторая, Глава LII]

Список использованных источников и литературы

1. **Աբրահամյան Ա. Գ.,** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության: – Եր.: Հայաստան հրատարակչություն: Հատոր Ա, 1964: – 490 էջ:
2. [**Աղավնունի, Մկրտիչ**], Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի / Աշխատասիրեց՝ Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի. – Երուսաղէմ: տպ. սրբ. Յակոբեանց, 1929: Ա.ԺՉ հայկ. էջադր., 544 էջ.:
3. [**Աղավնունի, Մկրտիչ**], Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ երկրին մէջ: Ուսումնասիրութիւններ / Աշխատասիր.՝ Մկրտիչ Եպս. Աղաւնունի. – Երուսաղէմ: տպ. սրբոց Յակոբեանց, 1931: Զ-ԻԳ: – 480 էջ:
4. [**Աղավնունի, Մկրտիչ**], Սուրբ երկրին սրբավայրերու աւանդութիւնները / Աշխատասիր.՝ Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի. – Երուսաղէմ: տպ. սրբ. Յակոբեանց, 1936: Ա-ԺԷ հայկ. էջադր.: – 460 էջ:
5. **Անաստաս վարդապետ**, Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ: – Վենետիկ: 1896:
6. **Անաստաս վարդապետ Յերապոլսեցի**, Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ, առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Չորբանեանի, էջ 1271-1279 // «Մատենագիրք Հայոց », Ե. հատոր, Է. Դար: - Անթիլիաս, 2005:
7. **Աշխարհի հայկական հուշարձանները**. Մաս 3: – Եր.: Անտարես, 2013: – 128 էջ:
8. **Արծրունեան Մ.**, Ստորագրութիւն սբ. քաղաքին Երուսաղէմի: - Երուսաղէմ, 1859:
9. **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց: – Կ. Պոլիս, 1729: Լուսատիպ վերահրատարակությունը՝ – Երուսաղէմ, 1993:
10. **Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեան**, Տեղեաց Տնօրինականաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: – Կ. Պոլիս, 1678: – 61 էջ:
11. **Հայ եկեղեցի.** նվիրապետական աթոռներ, թեմեր: – Եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ.: 2001: – 220 էջ:
12. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Իսրայէլ*, էջ 213-219: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: – 732 էջ:
13. **Հովսեփյան Գարեգին**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության: Պրակ Ա-Ե, Տիրացու Հովհաննես, Նկարիչ ԺԸ դարում («Գեղարվեստ» 1917 № 6):
14. **Կիւրճեան Վ.**, Հայ Երուսաղէմը դարերու մեջ, Երուսաղեմ, 1965:
15. **Մամուրի Հ.**, Հայերը Երուսաղէմի մէջ ամենահին ժամանակներէն մինչեւ մեր օրերը Ա.տ, 1963:
16. **Յակոբեան Ալեքսան**, Վասն որ ի Սուրբ Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածք… // http://digilib.aua.am/book/1366/Վասն%20որ%20ի%20Սուրբ%20Երուսաղէմ%20եկեղեցւոյ%20շինուածք
17. **Յովհաննէս Հաննա**, Գիրք Պատմութեան սրբոյ և մեծի քաղաքիս աստուծոյ Երուսաղէմիս եւ սրբոց Տնօրինականաց Տեղեաց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: - Կ. Պոլիս, 1731: – 376 էջ: http://greenstone.flib.sci.am/gsdl/collect/armenian/Books/erusaxem.pdf
18. [**Յովհաննէսեանց, Տ. Աստուածատուր եպ.**] Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի: Բաժանեալ յերկուս հատորս. Հատոր Ա և Բ: Աշխատասիրութեամբ Հաւաքեաց Աստուածատուր եպիսկոպոս Տ. Յովհաննէսեանց Առաքելական ուխտէ Արբոց Յակովբեանց: Ի հայրապետութեան Ս. Էջմիածնի Տ.Տ.Մակարայ Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Հրամանավ ի պատրիարքի Ս. Երուսաղէմի Ամենապատիւ Տ. Ցարութիւն սրբազան առք եպիսկոպոսի եւ ի պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ Տ. Խորենայ սրբազան արք եպիսկոպոսի: Ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց Յակովբեանց: - Յերուսաղէմ: 1890:
19. **Չորբաեան Պ.**, Անաստաս վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի Յուցակի ժամանակի հարցի շուրջ, էջ 27-46: // ՊԲՀ, 2001, թիւ 1:
20. **Սաւալանեանց Տ.**, Պատմութիւն Երուսաղէմի: Հ. 1-2: - Երուսաղէմ, 1931:
21. [**Սիւրմէեան, Արտաւազդ արք.**] Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի : Առաջին հատոր: Կազմեց՝ Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւմէեանն Հայրապետական Լիազօր Պատուիրակ Եւրոպայի Թեմին: – [Վենետիկ]: Մխիթարեան Ս. Ղազար Տպարան, 1948: – 374 էջ:
22. **Սթոուն, Մայքլ Է.** Հինգերորդ դարու հայերեն վիմագրություններ Նազարեթեն: Էջեր 52-62: // Պատմա-բանասիրական հանդես, № 3, 1990:
23. **Տէր-Յովհաննէսեան Ա.**, Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. 1-2, Երուսաղէմ, 1890:
24. **Քրիստոնյա Հայաստան** հանրագիտարան: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2002: – 1076 էջ:
25. **Օրմանեան Արքեպս. Մաղաքիա**, Հայկական Երուսաղէմ: Նկարագիր Աթոռոյ Սրբոց Յակոբեանց: – Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1931: – 207 էջ:
26. **Антіох Стратигъ**. Плѣненіе Іерусалима персами въ 614 г. Грузинскій текстъ. Н. Марръ, пер. И. Тарнавы-Боричевского. – С.-Петрбургъ. Типографія Императорской Академіи Наукъ, 1909. – VI, 82, 70, 66, 8 с.

27. **Аракелян Б. Н.**, Армянская мозаика IV-VII вв. Стр. 17-25. // Լրաբեր Հասարակական Գիտությունների (Вестник общественных наук АН Арм. ССР), № 3, 1971.
28. **Атанджанян Иммануил, Мадоян Геворк**, Армянские Святые Места в Иерусалиме. – Москва. 2003.
29. **Евсевий Кесарийский**. Церковная история. / Ввод, ст., коммент., библиогр. список и указатели И. В. Кривушина. Научное издание. (Серия «Библиотека христианской мысли. Источники»). – СПб.: «Издательство Олега Абышко», 2013. – 544 с.
30. **Кенаан-Кедар Нурит**. Королева-покровительница // «Анив». – Минск; М., 2007. № 1(10). С. 85-89;
31. **Кондаков Н. П.**, Археологическое путешествие по Сирии и Палестине. – СПб., 1904.
32. **Лисовой Н. Н.**, Елеонский Вознесенский русский монастырь. // Православная энциклопедия. Т. 18, стр. 319-324. http://www.pravenc.ru/text/189769.html
33. **Мутафян К.**, Королевы Иерусалима: (Из ст. К. Мутафяна «Армянские прелаты и монархи в Иерусалиме в эпоху Крестовых походов: Легенды и достоверные свидетельства») . Стр. 15-21. // «Анив». – Минск; М., 2007. № 1(10).
34. **Мовсес Каланкатваци**. Истории страны Алауанк (пер. Г. Смбатяна). – Ер.: Изд. Института древних рукописей им. Маштоца «Матенадаран». 1984.
35. [**Моисей Хоренский**] Исторія Арменіи Моисея Хоренскаго. Новый переводъ Н.О. Эмина (съ примѣчаніями и приложеніями). Посмертное изданіе. – Москва. Типографія В. А. Гатцукъ (Д. Чернышевскій), Невятскій бульв., д. Гатцукъ. 1893. – 363 с.
36. **Погосян /Хахбакян/ Г. Г.** Хроника армянских святынь Иерусалима. Часть I. // Газета армян России «Еркрамас». – Краснодар, 30 июня 2016
37. **Погосян /Хахбакян/ Г. Г.** Хроника армянских святынь Иерусалима. Часть II. // Газета армян России «Еркрамас». – Краснодар, 04 июля 2016
38. **Симеон Лехаци**. Путевые заметки. (Памятники письменности Востока). Перевод с армянского, предисловие, примечания и указатели М. О. Дарбинян. – М.: Восточная литература, 1965. – 321 с.
39. **Antreassian A.**, Jerusalem and the Armenians, Jerusalem, 1969
40. **Azarya V.**, The Armenian Quarter of Jerusalem, London, Los Angeles and Berkeley, 1984
41. **Bennett D.**, The Church of the Holy Sepulchre in Jerusalem. April 9, 2009. // http://quillcards.com/blog/index.php/2009/04/09/the-church-of-the-holy-sepulchre-in-jerusalem/
42. **Carswell J.**, Kütahya Tiles and Pottery from the Armenian Cathedral of St. James, Jerusalem. Oxf., 1972. 2 vol.;
43. **Crowdy T.** French Soldier in Egypt 1798–1801: The Army of the Orient. - Oxford. 2003.
44. **Hintlian K.**, History of the Armenians in the Holy Land. – Jerusalem, Armenian Patriarchate Printing Press; 2nd edition. 1989. – 68 p.
45. **Kalemderian P.**, The Armenian Sts. James Cathedral of Jerusalem. Jerusalem, 2007 (на арм. и англ. языках).
46. **Kenaan-Kedar N.**, Armenian Architecture in 12th Cent. Crusader Jerusalem // Assaph. Sect. B: Stud. in Art History. Tel-Aviv, 1998. N 3. P. 77-92.
47. **Melkon**, **Rose John.** Armenians of Jerusalem: Memories of Life in Palestine. – London, New York: The Radcliffe Press, 1993.
48. **Sanjian, Avedis K.** Anastas vardapet's List of Armenian Monasteries in sevent-century Jerusalem. A critical Exemination // «Le Museon». Revue d'Etudes Orientales, LXXXII, 3-4. 1969, pp. 275-279.
49. **Sanoyan D**. Armenian Community in Jerusalem and Palestine in the Period of World War I and the Genocide. pp. 46-56. // «21st Century». № 1 (5), 2009.
50. **Stone, Michael E.** Armenian Inscriptions of the Fifth Century from Nazareth. Pp. 315-322. // «Revue des Études Arméniennes». – Paris. Tome XXII, 1990-1991.
51. **Stone, Michael E., Th. M. van Lint & J. Nazaryjan** Further Armenian Inscriptions from Nazareth. Pp. 321-337. // «Revue des Études Arméniennes». – Paris. Tome XXVI, 1996-1997.
52. **Stone, Michael E.** Holy Land Pilgrimage of Armenians Before the Arab Conquest. Pp. 93-110 // «Revue Biblique». Peeters Publishers. Vol. 93, No. 1 (JANVIER 1986).
53. **Stone, Michael E.** The New Armenian Mosaic from Jerusalem
54. **Stone, Michael E.** The Oldest Armenian Pilgrim Inscription from Jerusalem. // http://www.hum.huji.ac.il/~armenia/newinsc.html
55. **Stone, Michael E., D. Amit, J. Seligman and I. Zilberbod** A New Armenian Inscription from a Byzantine Monastery on Mt. Scopus, Jerusalem // «Israel Exploration Journal» 61 (2011): 230–235.
56. **Stone, Nira** Art and Artifice in Armenian Manuscript Illustration. *Edited by* Michael E. Stone and Asya Bereznyak. / Series: Armenian Texts and Studies, Volume: 2. Publisher: Brill. 2019. - xxiv, 262 pp.
57. Электронные энциклопедии и словари:
    57.1. Wikipedia, Антиох Палестинский // http://ru.wikipedia.org/wiki/Антиох_Палестинский
    57.2. dic.academic.ru, Хосров Парвиз - https://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1182276

Сдана/Հանձնվել է՝ 01.09.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 07.09.2020
Принята/Ընդունվել է՝ 11.09.2020

Պարսկահռոմեական մրցակցության հետևանքները Հայաստանի համար III դ. առաջին կեսին

Մխիթարյան Ա. Վ
ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու «Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ (Գյումրի, Հայաստան)
anzhelamkhitaryan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Հայաստան, Պարսկաստան, Արտավազդ V, աշխարհաքաղաքական վիճակ, դիվանագիտություն

Последствия персидско-римского соперничества для Армении в первой половине третьего века

Мхитарян А. В.
РА МНОКС ГНКО "Лицей Фотон" (Гюмри, Армения)
anzhelamkhitaryan@gmail.com

Аннотация: Армения, находясь в важном геополитическом регионе, считалась ареной столкновения интересов могущественных держав. Оказавшись в сложных ситуациях, под угрозой оказалась государственность страны, иногда приводя к ее потере. Поэтому следует извлечь из этого уроки и выбрать правильную государственную политику и дипломатический путь.
Ключевые слова: Армения, Персия, Артавазд V, геополитическая ситуация, дипломатия

The Aftermath of the Persian-Roman Rivalry for Armenia in the First Half of the Third Century

Mkhitaryan A. V.
RA Ministry of Education, Science, Culture and Sport "Photon College" SNPO (Gyumri, Armenia)
anzhelamkhitaryan@gmail.com

Abstract: Being in a strategically important geopolitical location, Armenia has often been caught in the middle of the political and economic interests of the powerful empires. Complex geopolitical circumstances endangered the statehood of the country, sometimes even resulting to its loss. Therefore, it is necessary to take lessons from history, and follow the right state policies and strategic diplomatic paths.
Key Words: Armenia, Persia, Artavazd V, geopolitical situation, diplomacy

Արդիականություն

Հազարամյակներ շարունակ Հայաստանը և հայ ժողովուրդը գտնվել է աշխարհակալ հզոր տերությունների բախման և հակասությունների էպիկենտրոնում: Դարերի ընթացքում այս տարածաշրջանում միմյանց են բախվել այնպիսի հզոր պետությունների շահեր, ինչպիսիք են Հռոմը, Պարսկաստանը, Պարթևստանը, Ռուսական և Օսմանյան կայսրությունները: Այս բախումները հաճախ տեղի են ունեցել կամ Հայաստանի տարածքում, կամ էլ Հայաստանի ակտիվ մասնակցությամբ:

Հաճախ դրանք ճակատագրական են եղել՝ հանգեցնելով տարածքների, անկախության և պետականության կորստի: Նմանատիպ բարդ դարաշրջաններից է նաև III դարը: Ժամանակաշրջան, երբ միմյանց են բախվում նոր կազմավորված, նվաճողական ահռելի ծրագրեր ունեցող Սասանյան տերությունը և վիթխարի ու հզոր Հռոմեական կայսրությունը: Եվ Հայաստանն ինչպես իր պատմության մի զգալի ժամանակահատվածում հայտնում է երկընտրանքի առաջ՝ մասնակցել բախումներին և վտանգել պետականությունը, թե սպասել հանգուցալուծման և հնարավոր անկանխատեսելի հետևանքներին: Հայաստանն այժմ էլ, գտնվում է նմանատիպ իրավիճակում ինչ III դարում էր, ուստի չափազանց կարևոր է պատմությունից ճիշտ դասեր քաղել:

Նպատակ ու խնդիրներ

Ներկայացնել իրադրությունը Հայաստանում և հարևան երկրներում նշված ժամանակաշրջանում՝ ցույց տալով այն պատճառները, որոնք հանգեցնում են III դ. Հայաստանի անկախության կարճատև կորստին: Խնդիր է դրվում ներկայացնել պարսկահռոմեական հակամարտության պատճառները և Հայաստանի դերը:

Ներկայացվող խնդիրը ներկայացված է Ագաթանգեղոսի [**1**], Խորենացու երկերում [**2**], Դիոն Կասսիոսի [**3**] «Հռոմեական պատմություն» աշխատությունում, Աղոնցի [**4**], Վ. Բայբուրդյանի ուսումնասիրություններում [**5**]:

241 թվականին Արտաշիրը կնքեց իր մահկանացուն, սակայն մինչև այդ նա արդեն հրաժարվել էր գահից և իր տեղը զիջել որդուն՝ Շապուհ Ա արքային (մ. թ. 241-272 թթ.) [**6**, էջ 36-39]: Հենց դա է պատճառը, որ այն ժամանակվա մետաղադրամների վրա Արտաշիր Ա և Շապուհ Ա պատկերները միասին են դրոշմըված: Պերսեպոլիսից ոչ հեռու ընկած Նաղշ-ի Ռուստեմում գտնվող (Քաաբա-է Զարդոշթ խորանարդաձև շինության վրա) քանդակներից մեկում ներկայացված է Շապուհ Ա արքայի թագադրման տեսարանը, որին արքայական պսակ է շնորհում Ահուրամազդան [**7**, էջ 5-8]:

Թեև Արտաշիր Պապականին է պատկանում Սասանյան կայսրությունը հիմնադրելու փառքը, սակայն Շապուհն էր, որ կենտրոնացրեց և ամրապնդեց այդ պետության կառավարման ապարատը, ընդլայնեց երկրի տարածքը և ապահովեց նրա սահմանները: Նա այդ նոր տերությունը պատկերացնում էր որպես բազմազգ պետություն, որտեղ մանիքեականությունը կարող էր միավորող գործոն ծառայել [**8**, էջ 760]: Դա, իհարկե, չիրականացվեց, և զրադաշտականությունը պահպանվեց, իսկ հետագայում էլ ավելի ամրապնդեց իր դիրքերը Հին Պարսկաստանում՝ որպես պետական միակ կրոն Շապուհ Ա-ի օրոք պարսիկները մի քանի բախումներ ունեցան հյուսիսարևմտյան Միջագետքում գտնվող հռոմեական ուժերի հետ՝ սկիզբ դնելով նաև հռոմեապարսկական առճակատման նոր փուլին:

242 թ. Գորդիանոս Գ (238-244 թթ.) կայսրը մեծ բանակով արշավում է դեպի Պարսկաստան: Նա դիմադրության չհանդիպելով հասնում է մինչև Սասանյանների մայրաքաղաք Տիզբոնի մատույցներ, Միսիխես կամ Բեթ-Մաշկենե վայրը: Այստեղ 244 թ-ին փետրվարի 11-ին տեղի է ունենում մեծ ճակատամարտ, որտեղ հռոմեական զորքը մատնվում է խայտառակ պարտության, Գորդիանոս Գ, ինչպես վկայում է Զոնարասը՝ վայր է ընկնում ձիուց, կոտրում է ոտքը և մահանում է դրա ցավից [**9**, էջ 175-177]: Նրա դիակը գերի է ընկնում պարսիկների ձեռքը:

Հռոմեական բանակը կայսր է հռչակում Փիլիպոս Արաբին (244-249 թթ.), որն իր դավանանքով քրիստոնյա էր [**10**, էջ 12]: Նոր կայսրը 244թ. փետրվարի 11-ին խաղաղության դաշինք է կնքում, վճարելով 500 հազար դինար ռազմատուգանք (2750 կգ ոսկի): Այդ գնով նա կարողացել է վերադարձնել պարսիկների մոտ գերի ընկած հռոմեացիներին և ըստ երևույթին նաև կայսեր դիակը: Գորդիանոս Գ կայսրը թաղվել է Զայիթա վայրում, Եփրատի ափին և նրա գերեզմանի վրա կառուցվել է դամբարան: Այս փայլուն հաղթանակը նշանավորելու համար Շապուհ Ա-ն ճակատամարտի վայր Միսիխես քաղաքը անվանել է «Պերոզ Շապուհ», որը նշանակում է «Հաղթական Շապուհ»:

Այլ կերպ են լուսաբանում հռոմեական պատմիչները «Պերոզ Շապուհի» ճակատամարտը և Գորդիանոս Գ մահը վերագրում են Փիլիպոս Արաբին, որը ցանկացել էր զավթել գահը: Անշուշտ նախապատվությունը պետք է տալ պարսկական աղբյուրներին, չնայած այնտեղ ևս կան չափազանցություններ: Օրինակ այնտեղ ասվում է, որ Փիլիպոս Արաբը դարձավ հարկատու պարսիկներին, ինչը հավաստի չէ:

245 թ. դաշնագիրը իր բնույթով նման էր 363 թ. Հովիանոսի «ամոթալի» դաշնագրին, որով Փիլիպոսը պարսիկներին զիջեց Հայաստանը: Հռոմեական կայսրությունը շարունակում էր ենթարկվել բարբարոսական հարձակումների արևմուտքից և Փիլիպոս Արաբը ի վիճակի չէր կոշտ քաղաքականություն իրականացնել Արևելքում: Այս պայմանագրով Փոքր Հայքը մնաց հռոմեացիներին: Ապա Շապուհ Ա-ը նվաճեց նաև Իբերիան:

Հռոմի կողմից ապահովված Շապուհ Ա-ը պատերազմը վերսկսեց մի կողմից Հայաստանի, մյուս կողմից՝ Քուշանաց Արշակունիների դեմ, որոնք իշխում էին ներկայիս Աֆղանըստանում՝ իր շրջակայքով: Սասանյաններին իրենց պետության հյուսիսում և ծայր արևելքում անհանգստացնում էր Քուշանների թագավորության գոյությունը Իրանում պարթև Արշակունիները ոչնչացվել էին, սակայն հին դինաստիայի ներկայացուցիչներից շատերը՝ Արշակունի սեպուհները ապաստան էին գտել ոչ միայն հայ Արշակունիների արքունիքում, այլև Քուշանաց Արշակունիների արքունիքում:

Քուշանները, բացի հայ Արշակունիներից նույնիսկ կապեր ունեին Հռոմեական կայսրության հետ, որտեղ նրանք նախկինի պես հայտնի էին «բակտրիացիներ» անունով: Գահին տիրանալուց հետո Սասանյանների քաղաքականությունը մի հիմնական նպատակ էր հետապնդում՝ նվաճել և իրենց աշխարհակալությանը միացնել այն բոլոր երկրները, որոնք մի ժամանակ Աքեմենյան Իրանի կազմում էին գտնվում: Այդ երկրներից էին Մեծ Հայքի և Քուշանաց թագավորությունները, որտեղ դեռևս պահպանվում էին Արշակունիների դինաստիաները և որտեղ ապաստան էին գտել պարթև Արշակունիների տան՝ կոտորածից զերծ մնացած անդամները: Ստեղծված իրադրության մեջ հայերը և քուշանները միասնական էին գործում, իսկ երկուսը միասին ձգտում էին աջակցել

Հռոմեական կայսրությանը Սասանյանների դեմ նրա պայքարում: Հայ թագավորներից հատկապես Տրդատ Երկրորդն էր, ով դաշնակիցների հետ միասին փորձում էր թուլացնել Սասանյաններին:

Իրերի այս դրությունից պարզ է դառնում, որ 244թ. պայմանագրի Հայաստանին վերաբերող կետը մնացել է թղթի վրա, այսինքն Մեծ Հայքի թագավորությունը պահպանվեց նախկին վիճակում, որովհետև հայ ժողովուրդը չցանկացավ ճանաչել իրեն պարտադրված քաղաքական իրադրությունը և զենքը ձեռքին պայքարեց Սասանյանների դեմ: Ավելին հայոց Տրդատ Բ արքան իր կառավարման ժամանակ 216-252 թթ., որդու Խոսրով Բ-ի հետ միասին համառ ու երկարատև պայքար է մղում Սասանյան Պարսկաստանի դեմ Արշակունիների տերության անկումից հետո Մեծ Հայքը իր ձեռքում էր կենտրոնացրել Արշակունիների հիմնական ներուժը:

Մեծ Հայքի Արշակունյաց երկրորդ գահը այժմ արդեն վերածվել էր առաջինի կամ ավագագույնի, իսկ գահակալ Տրդատը իրավամբ կրում էր «Մեծ» պատվանունը: Ստեղծված միջազգային դրությունը հարկադրում էր Հայաստանի գահակալներին ընդունել համապատասխան դիրքորոշում: Հռոմեական աջակցությամբ Տրդատը նույնիսկ արշավանք է ձեռնարկում Միջագետք: Մովսես Խորենացու հաղորդմամբ Տրդատըհասնում է մինչև Տիզբոն:

Տրդատ Բ-ի մահից հետո Սասանյանների դեմ պայքարը շարունակեց նրա որդի Խոսրով Բ (252 ընդմիջումներով 287 թթ.) Հետազոտողներից Հ. Մանանդյանի հաղորդման համաձայն Հայաստանը չի նվաճվել Շապուհ Ա օրոք և հայ-հռոմեական սերտ գործակցությունը շարունակվել է [**11**, էջ 84]: Ագաթանգեղոսի վկայությամբ Խոսրով Բ-ի պատերազմները Սասանյանների դեմ տևել է 11 տարի [**1**, էջ 84]:

Օգտագործելով խաղաղ դադարը հռոմեացիների հետ Շապուհը զենքն ուղղեց Կենտրոնական Ասիայի պետական կազմավորումների և արևելքից Իրանին սպառնացող վաչկատուն ցեղերի դեմ: Խորասանում նա ջախջախեց «թուրանական թագավորին», սպանեց նրան և ճակատամարտի վայրում հիմնադրեց Նեվշապուհ (Նիշապուհ) քաղաքը: Այնուհետև նա իր զենքը ուղեց քուշանների դեմ՝ ձեռնամուխ լինելով նրանց թագավորության հնդկապարթևական մասի նվաճմանը: Տանելով հաղթանակ՝ Շապուհ Ա-ն կոտորում է հնդկապարթևական Արշակունի «Կարենյան պահլավի տոհմը» և գրավում Քուշանշահրի՝ մինչև հարավային մասը, այսինքն մինչև Հնդկաստանի Փեշավար քաղաքը: Այդ երկրամասը միացնելով Իրանի հյուսիս արևելյան նահանգներին, նա կազմում է մի նոր կախյալ թագավորություն՝ «Սաքաստանի, Թուրեստանի և Հնդկաց մինչև ծովափ»: Շապուհ Ա-ը այդ միացյալ երկրների թագավոր է նշանակում իր որդի Ներսեհին:

Այդ խոշոր հաղթանակներից հետո Շապուհին այլևս չէր բավականացնում իր հոր «շահանշահ Իրանի» բարձր տիտղոսը և նա իր արձանագրությունների մեջ իրեն անվանում է «շահնշահ Իրանի և Անիրանի» («Շահնշահ Էրանի և Աներան»)՝ դրանով շեշտելով, որ ինքը միավորելու է ոչ միայն Իրանը, այլև այն շրջանները, որոնք մինչ այդ չէին մտնում Իրանի կազմի մեջ [**12**, էջ 9-10]:

Խաղաղությունը Հռոմի և Սասանյան Իրանի միջև տևել է ընդամենը 4-5 տարի Ապահովելով իր աշխարհակալության արևելյան մասի անվտանգությունը՝ Շապուհը կրկին իր հայացքն ուղղում է դեպի Արևմուտք՝ ռազմական ամբողջ ուժերը կենտրոնացնելով Միջագետքի և Հայաստանի մատույցներում:

Իր կառավարման վերջին տարում 249թ. Փիլիպոս Արաբը խախտելով հաշտության պայմանագիրը հարձակվում է Պարսկաստանի վրա: Դրան ի պատասխան պարսիկները՝ զորքերի հրամանատար, թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրի գլխավորությամբ ներխուժում են Հռոմեական Ասորիք և Բարբալիսոս քաղաքի մոտ պարտության են մատնում հռոմեացիների 60 հազարանոց զորքին: Այս արշավանքի ժամանակ պարսիկները գրավում են Ասորիքի, Կիլիկիայի, Կապադովկիայի 37 քաղաքներ, դրանց թվում նաև Անտիոքը: Այսպիսով՝ պարսկական զորքերը հասան մինչև Միջերկրական ծովի ափերը: Շապուհ Ա-ի «Զրադաշտ ի-Քաաբայի» արձանագրության մեջ առկա է մի օրհներգ ի պատիվ Հռոմի նկատմամբ տարաված այդ հաղթանակի [**9**, էջ 186-188]:

Պարսկական զորքերը հասնում են մինչև Փոքր Հայքի հյուսիսային շրջաններ՝ փորձելով շրջափակման մեջ վերցնել ամբողջ Մեծ Հայքը: Այս արշավանքի հիմնական նպատակը հանդիսանում էր Մեծ Հայքի անջատումը Հռոմեական կայսրությունից: Այս դեպքերը տեղի են ունեցել Տրեբոնիանուս Գալլոս կայսեր կառավարման ժամանակ (251-253 թթ.), երբ գոթերը և դակերը Դանուբի կողմից հարվածում էին կայսրությանը [**13**, էջ 322]: Կայսրությունում սկսվել և աննախադեպ տարածում էր գտել ժանտախտի համաճարակը,[**3**] ինչը ևս զրկում էր նրան արևելյան հատվածները պաշտպանելու հնարավորությունից: Հայոց թագավոր Խոսրով II-ի դեմ պատերազմն ընթանում էր փոփոխակի հաջողություններով: Բայց այդ ընթացքում Շապուհ Ա-ը կարողացել էր նվաճել Աղվանքն ու Վիրքը՝ հյուսիսից նույնպես սպառնալիքի տակ դնելով Հայաստանի սահմանները:

Այսուհանդերձ, նա որոշեց դիմել առավել փորձված միջոցի. նրա հրահանգով իր ընտանիքով Հայաստան եկավ Անակ Պարթևը: Խոսրով Բ-ին հավատացնելով, որ փախել է Շապուհ Ա-ի հալածանքներից, Անակը շահեց Հայոց թագավորի վստահությունը, ապա որսի ժամանակ սպանեց նրան: Հայ նախարարները

որպես փոխվրեժ սպանեցին թե՛ Անակին, թե՛ նրա ընտանիքի բոլոր անդամներին:

Հայ եկեղեցական ավանդությունների համաձայն, փրկվել էր միայն մի մանուկ, որին փախցրել էին Հռոմեական կայսրություն: Դա ապագա Գրիգոր Լուսավորիչն էր: Բայց ինչպես ցույց է տվել Նիկողայոս Ադոնցը, դա հետագայի հորինվածք է՝ ստեղծված Տրդատ Գ-ի հետ կապված նույնպիսի միջադեպի նմանությամբ [**4**, էջ 341]:

253 թ. պարսկական և դաշնակից բանակները ներխուժում են Հայաստան: Թագաժառանգ Տրդատին, որը մանուկ էր, փախցնում են Հռոմեական կայսրություն: Շապուհ Ա-ը նվաճում է Հայաստանը և այստեղ Հայոց թագավոր է հռչակում Արտավազդ Ե-ին /253-261 թթ./, որը Հայ Արշակունիների տոհմից չէր և Շապուհ Ա-ի կողմնակիցն էր ու բարեկամը: Հ. Մանանդյանի կարծիքով նա Խորենացու հիշատակած Արտավազդ Մանդակունին էր, բայց որին մեր պատմահայրը ոչ թե թագավոր, այլ որպես կառավարիչ է հիշատակում:

Սակայն կան նաև կարծիքներ, որ սա նույն Արտավազդ Մանդակունին չէ [**11**, էջ 93]: Անշուշտ, ավելի ճշմարտանման է Ա. Աննինսկու ենթադրությունը, որ Արտավազդ Ե-ը Տրդատ Բ-ի որդին է [**14**, էջ 44]: Նա կարող է նաև նրա որդին չլինել, բայց իր Արշակունի ազգականներից է

Սակայն Սասանյան Իրանը չէր բավարարվում միայն Մեծ Հայքի որոշակի մասով: Նրա նվիրական ցանկությունն էր նաև Հայաստանի Հռոմեական մասի բռնազավթումը: Ուստի պարսկական զորքերը ներխուժում են Հռոմեական Հայաստան և այն բռնակցում իրենց պետությանը: Վալերիանոս կայսրը (253-260 թթ.) Հռոմեական բանակի գլուխ անցած շարժվում է պարսիկների դեմ: 259 թ. վերսկսված պարսկահռոմեական պատերազմը Վալերիանոսի համար ունեցավ ողբերգական վախճան:

Եդեսիայի և Խառանի միջև ընկած տարածքում 260 թ. տեղի ունեցավ մեծ ճակատամարտ, որտեղ հռոմեական բանակը դարձյալ խայտառակ պարտություն կրեց, իսկ Վալերիանոս կայսրը գերի ընկավ Շապուհ Ա-ի ձեռքը: Իրանական զենքի այդ հաջողությունը պատկերված է Ֆարսում գտնվող «Նաղշ-ի Ռուստամի» զրադաշտական տաճարի պատի խորաքանդակի վրա: Աղբյուրների համաձայն Վալերիանոս կայսրը մյուս գերիների հետ ստրկացվեց և դատապարտվեց տաժանակիր աշխատանքի՝ Կարու գետի վրա՝ Շուշթերի մոտ կառուցվող վիթխարի ջրամբարտակի շինարարության աշխատանքների համար:

Մեկ այլ վարկածի համաձայն՝ Շապուհը շղթայակապ վիճակում ամենուրեք իր հետ տանում էր 67-ամյա Վալերիանոս կայսրին և որպեսզի էլ ավելի նվաստացնի նրան, օգտագործում էր որպես հենակ՝ ձի նստելիս ոտքով կանգնելով նրա մեջքի վրա [**5**, էջ 115]:

Վերոհիշյալ իրադարձությունները՝ մասնավորապես հռոմեացիների 70-հազարանոց բանակի ջախջախումը, շշմեցուցիչ տպավորություն էր թողել ժամանակակիցների վրա: Այդ հաղթանակից հետո պարսիկները հաստատվեցին Ասորիքում, Կապադովկիայում, Փոքր Հայքում և Կիլիկիայում: Հռոմեական Արևելքի այդ նվաճված երկրներից Շապուհ Ա-ի հրամանով բազմահազար բնակչություն էր քշվում Իրանի խորքերը՝ նոսր բնակչություն ունեցող շրջանները յուրացնելու և երկրի առևտրին ու արհեստներին զարկ տալու համար:

Իրանական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Արևմուտք կանգնեցվեց սիրիական անապատի առևտրական ճանապարհների խաչմերուկում գտնվող Պալմիրա-Թադմոր քաղաք-պետության արաբական թագավոր Օդեյնաթ Բ-ի (Օդենատոս) կողմից, որին հռոմեացիները անվանում էին Սեպտիմիոս Օդենատոս: Վերջինս Արևելքում միակ տիրակալն էր, որ պահպանել էր իր հավատարմությունը կայսրության հանդեպ: Օդենատոսի իշխանությունը տարածվում էր ամբողջ Արևելքի (Ասորիք, Արաբիա, Պաղեստին, Կիլիկիա, Եգիպտոս) վրա: Հռոմեական կայսր Գաղղիանոսը Օդենատոսին ճանաչել էր որպես այդ տարածների ժառանգական կառավարիչ՝ նրան շնորհելով «իմպերատոր», «Պալմիրայի թագավոր», «Վերականգնող Արևելքի» և «Արևելքի Օգոստոս» տիտղոսները: Որպես Հռոմի դաշնակից՝ Օդենատոսը 262-264 թթ. պատերազմական գործողություններ էր վարում Շապուհ Ա-ի դեմ [**15**, էջ 54]:

Երբ պրետորիաների պրեֆեկտ Բալլիստայի անակնկալ հարձակման հետևանքով պարսկական զորքերը տալիս են մեծ թվով զոհեր և խուճապահար նահանջի դիմում՝ թշնամուն թողնելով արքայից արքայի կանանոցը, պարսկական բանակը Եփրատը անցնելիս Պալմիրայի տիրակալի կողմից ենթարկվում է հուժկու գրոհի: Տալով հսկայական թվով զոհեր՝ Շապուհ Ա-ն իր բանակի մնացորդներով հազիվ կարողանում է հասնել իր պետության սահմանները: Կրնկակոխ հետապնդելով հակառակորդին՝ Օդենատոսը Եդեսիան ազատում է պարսկական պաշարումից և հետ է խլում Մծբինն ու Խառանը, այնուհետև շարժվում Սասանյանների մայրաքաղաք Տիգրոնի վրա (262 թ.): Եվ թեև նրան չի հաջողվում գրավել լավ ամրացված քաղաքը, սակայն նա ձեռք է բերում հարուստ պատերազմական ավար, այդ թվում նաև Շապուհ Ա-ի հարեմի մի մասը: Սակայն լուր ստանալով որ

գոթերը հարձակվել են Փոքր Ասիայի վրա՝ նա շտապում է հետ վերադառնալ:

Իր ձեռքում կենտրոնացնելով Ասորիքը ու Միջագետքի մեծ մասը՝ Օդենատոսը սկսեց փայփայել Արևելքի միահեծան տեր դառնալու երազանքներ, որը առաջ բերեց հռոմեացիների զայրույթը: Պալմիրայի տրակալի մոտ ուղարկված հռոմեացի մարդասպանը վերջ է տալիս նրա կյանքին (266/67 թթ.):

Օդենատոսին հաջորդեց իր որդի Վաբալլաթը (Վարալլաթ. Վահր-ալ-Լաթ, 266/67-273 թթ.), սակայն փաստորեն իշխեց նրա մայրը՝ Զենոբիան (Բաթ Զեբինա կամ Զայնաբ), որի գեղեցկությունն ու խիզախությունն գովերգվում են հռոմեական աղբյուրների կողմից: Նրա օրոք Պալմիրայում ուժեղանում է հակահռոմեական պարսկասեր կուակցությունը: Պալմիրայի ծերակույտը հանձնարարում է Զենովբիայից խզել իր կապերը Հռոմից և դաշինք կնքել պարսիկների հետ (271 թ.): Այսուհետ Պալմիրան իր զենքը ուղում է Հռոմի դեմ՝ նրան զրկելով Փոքր Ասիայից, Եգիպտոսից և գրեթե բոլոր արևելյան պրովինցիաներից: Հռոմեական աղբյուրները վկայում են, որ հռոմեացիների դեմ Զենոբիայի դաշնակիցներն էին պարսիկները և հայերը: Միաժամանակ Պալմիրան դառնում է Արևելքի տեր ու տնօրեն, իսկ Զենոբիան՝ «Արևելքի թագուհի» [**5**, էջ 118]:

Անշուշտ, Հռոմը չէր կարող հանդուրժել այդ իրողությունը, ուստի և կազմակերպում է մեծ արշավանք Զենոբիայի դեմ: Շապուհ Ա-ն թեև օգնություն է ուղարկում իր նորահայտ դաշնակցին, սակայն տեղի ունեցած երկու ճակատամարտերում հռոմեացիները կործանիչ հարված են հասցնում Զենոբիայի զորքերին: Ավրելիանոս կայսրի հրամանով 272 թ. գրավում և հիմնահատակ ավերվում է Պալմիրա-Թադմորը, իսկ Զենոբիա թագուհին գերության է տարվում դեպի Հռոմ:

Պալմիրայի թագավորության հզորության այս ժամանակաշրջանում, պատմաբանների որոշ մասի (Մոմզեն, Խալաթյանց, Գևորգ-Ասլան, Սանտալճյան), ենթադրության համաձայն, Հայաստանը նորից ճանաչել էր Հռոմի գերիշխանությունը Արտավազդ Ե-ի թագավորությունը Սասանյաններն առժամանակ հանդուրժում էին Հայոց թագավորը, իբրև վասալ իր այրուձիով պարսկական զորամասերի հետ մասնակցում էր Հռոմեական կայսրության դեմ մղվող պատերազմներին, սակայն սա ժամանակավոր երևույթ էր, քանի որ վաղ թե ուշ Սասանյան Իրանն իրեն անցած Մեծ Հայքի մեծագույն մասը պիտի դարձներ Երանշահրի արքայից արքայի գահաժառանգի (որ միևնույն ժամանակ գերագույն զորահրամանատար էր) «դաստակերտը» [**5**, էջ 117]:

Մեծ Հայքի հռոմեական մասում ևս գոյություն ուներ որոշակի ստատուս Հռոմեական Հայաստանը (կենտրոնը՝ Չրմես ավան) կախյալ թագավորություն էր, որի թագավորը իր այրուձիով շարունակում էր մասնակցել կայսրության պատերազմներին, իբրև «դաշնակից և բարեկամ կայսեր և հռոմեական ժողովրդի» Հռոմեական կայսրությանն անցած Մեծ Հայքի արևմտյան մասը բաղկացած էր Ծոփաց աշխարհից և Բարձր Հայք նահանգից, որը կոչվում էր Armenia maior, այսինքն՝ «Մեծ Հայք» և միացած էր Փոքր Հայք երկրի հետ [**16**, էջ 108-109]:

Արտավազդ Ե-ի թագավորությունը Հայաստանի պարսկական մասում հազիվ 9 տարի տևեց Հայ Արշակունիներին վերացնելու առիթ հանդիսացավ Արտավազդ Ե-ի դիրքորոշումը գերևարված Վալերիանոս կայսեր հանդեպ: Վալերիանոսի գերությունը 260թ. և նրա բանակի ոչնչացումը Հին Աշխարհի համար արտասովոր երևույթ էր: Այդպիսի խայտառակ և ստորացուցիչ պարտություն Հռոմեական կայսրությունը դեռ չէր ունեցել: 261թ. Շապուհ Ա-ի դեսպաններն իրենց և հարևան երկրների թագավորներին հանձնում էին նամակներ, որոնց միջոցով աշխարհով մեկ ազդարարում էին, որ Խառանի և Եդեսիայի ճակատամարտերում ջախջախվեց հռոմեական 70 հազարանոց բանակը, իսկ կայսր Վալերիանոսը, նրա եպարքոսներն ու արքոնտները գերի վերցվեցին: Սիրիան, Կիլիկիան և Կապադովկիան ենթարկվեցին հրկիզման, ավերման ու նվաճման:

Այս հաղթական ուղերձին առանձին թագավորությունների տիրակալները տարբեր կերպ արձագանքեցին: Նրանց մի մասը պատասխանեց, իսկ մյուս մասն արհամարող լռությամբ դիմավորեց:

Բարեբախտաբար մեզ է հասել Հայոց թագավոր Արտավազդ Ե-ի պատասխան նամակը Շապուհին, որը պահպանել է հռոմեական պատմիչ Տրեբելլիոս Պոլլիոնը: «Արտավազդ, Հայոց թագավորը,- ասում է Տրեբելլիոսը, - ուղարկեց Շապուհին հետևյալ նամակը. - «Համակիր եմ քո փառքին, բայց երկյուղ եմ կրում, որ դու ոչ այնքան հաղթել ես, որքան հրահրել ես մոլեգին կռիվը, Վալերիանոսին այժմ պահանջում են ազատ արձակել և՛ նրա որդին, և՛ թոռը, և՛ հռոմեական զորավարները, և՛ բոլոր ժողովուրդները: Դու վերցրիր գերի միայն մի ծերունու, իսկ քո դեմ խիստ թշնամացրիր երկրագնդի բոլոր ժողովուրդներին, գուցե նաև մեր դեմ, որ ուղարկել էինք քեզ օգնական զորքեր, մենք, որ քո հարևաններն ենք՝ միշտ ծանր դրության մեջ ենք ընկնում, երբ դուք իրար հետ կռվում եք»: Այսպես էր պատասխանում Հայաստանի պարսկական մասի Հայոց թագա-

վորը, որի երկիրն անմիջապես սահմանակից էր պարսկահռոմեական պատերազմների մարտադաշտերին: Այս նամակի բնագիրը հանդիսանում է իր ժամանակաշրջանի հետաքրքիր փաստաթուղթ:

Այս բնագրից տեղեկանում ենք, որ Մեծ Հայքի պարսկական մասը, որտեղ թագավորում էր Արտավազդ Ե-ը, ներքին կյանքում անկախ էր և կախվածությունը Սասանյան Իրանից արտահայտվում էր նրանով, որ պատերազմի ժամանակ Հայոց թագավորը օժանդակել էր օգնական զորքերով Ուշագրավ է, որ ժամանակակիցները գիտակցում էին, թե բուֆեր պետության վիճակում գտնվող Հայաստանին որքան ծանր է նստում յուրաքանչյուր պատերազմական ընդհարում Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև Ի վերջո մեջբերված նամակի տեքստը ցույց է տալիս, որ նույնիսկ, եթե սկզբնական շրջանում Արտավազդ Ե-ը համակրել է Սասանյաններին, այս շրջանում նա չի թաքցրել համակրանքը հռոմեական կայսրի հանդեպ և միայն հարկադրաբար է պաշտպանել պարսիկների շահերը Այս շրջանում Սասանյան Իրանը գտնվում էր իր հզորության գագաթնակետին և փոխվում է Հայաստանում Արշակունիների հանդեպ նախկին հանդուրժողական քաղաքականությունը:

Արտավաղդ Ե-ը իր նամակից հետո համարվում է անվստահելի անձնավորություն, նրան գահընկեց են անում և, ըստ երևույթին, սպանում, իսկ Հայաստանի պարսկական մասը դարձնում են Սասանյանների «դաստակերտ» (ժառանգական սեփականություն) Հայկական գահը հայտարարվում է Սասանյան դինաստիայի «երկրորդական գահ» և տրվում է Շապուհ Ա որդուն՝ գահաժառանգ և պարսկական զորքերի գերագույն հրամանատար Որմիզդ-Արտաշիրին 262թ. փորագրված Նախշ-ի Ռուստեմի «Քաաբա-ի Զարդոշտ» Շապուհ Ա եռալեզու արձանագրության մեջ Որմիզդ-Արտաշիրը հիշատակվում է որպես «Արմենիայի մեծ թագավոր» [**17**, էջ 44]:

Հռոմի հետ հաջող պատերազմները Շապուհ Ա-ին հնարավորություն տվեցին իր ուշադրությունը կենտրոնացնել արևելյան ուղղության վրա: Նա հաջող արշավանքներ ձեռնարկեց դեպի Խորասան, Անդրկովկաս, Մեվր, նվաճեց Կասպից ծովի առափնյա շրջանները: Սասանյան կայսրությունը իրեն ենթարկեց նաև Մեսենան (Տիգրիս և Եփրատ գետերի հարավային շրջանները), որի կառավարումը շահնշահը հանձնեց իր որդուն, որի անունը նույնպես Շապուհ էր:

III դարի երկրորդ կեսին Սասանյան պետության տիրույթները տարածվում էին արևմուտքից Հարավային Միջագետքից ու Սիրիայից, մինչև արևելք Հինդոս գետը, հյուսիսից Կասպից ծովից մինչև հարավ՝ Օմանի թերակղզի: Շապուհ Ա-ն իր ադեցություն տարածեց նաև Քուշանական թագավորության, Սողդիանայի և Չաչի (Շաշ) վրա: Քուշանական թագավորության կատարյալ հնազանդեցումը տեղի ունեցավ IV դարի 60-ական թթ. վերջին: Իրանական բարձրավանդակի արևելքում շահը հիմնադրեց նոր քաղաք՝ Նիշապուր (Գեղեցիկ Շապուհի): Շապուհ Ա-ի օրոք Իրանում վերջին անգամ շահական գրագրության ու արձանագրության մեջ օգտագործվում է հունարեն լեզուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սասանյանների Իրանի գահին հաստատվելով, էլ ավելի վատացավ Հայաստանի վիճակը՝ կապված Սասանյանների թշնամական վերաբերմունքի հետ: Եթե նախկին շրջանում Հայաստանը սերտորեն կապված էր պարթևական պետության հետ, թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես և թե՛ մշակութապես, ապա Սասանյանների գահ բարձրանալուց հետո Հայաստանը արդեն դիտվում էր որպես թշնամի՝ մի շարք պատճառներով՝

1. Հայաստանը դարձել էր հիմնական ապաստանը բոլոր այն պարթև Արշակունիների համար, որոնք կարողանում էին փախչել և փրկել իրենց կյանքը:

2. Հայաստանը գտնվում էր կարևոր առևտրական նշանակություն ունեցող ճանապարհների խաչմերուկում և ուներ ռազմավարական լավ դիրք:

3. Գրավելով Հայաստանը Սասանյանների առջև կբացվեր ճանապարհը դեպի Հռոմեական կայսրության ասիական մաս:

Նշենք մի շարք եզրահանգումներ.

1. Նախ հայերը պարթևների հետ միասին պայքարում էին Սասանյանների դեմ, ինչը ցույց է տալիս, որ նրանք լիարժեք կատարում էին իրենց դաշնակցային պարտականությունները և Հայաստանը դարձել էր ապաստան պարթև Արշակունիների համար՝ իր վրա վերցնելով թշնամու հարվածները:

Շապուհի՝ Պարսկաստանում գահ բարձրանալով, Հայաստանի կառավարիչ նշանակում է Արտավազդ Ե-ին: Մեզ հասած տեղեկություններից պարզ է դառնում, որ Արտավազդը հայ էր և ազգակցական կապեր ուներ Հայ Արշակունիների հետ: Կարելի է ասել, որ սկզբնական շրջանում Հայաստանում դրածոները հայազգի էին: Բացի այդ անդրադառնալով Արտավազդ Ե-ի նամակին՝ պարզ է դառնում, որ ներքին կյանքում նա անկախ էր և միակ դաշնակցային պարտավորությունը պատերազմի ժամանակ զորք տրամադրելն էր: Արտավազդ

Ե-ի ժամանակ նաև նկատվում է թաքուն քաղաքական կողմնորոշումը դեպի Հռոմ:

3. Որմիզդ-Արտաշիրի գահ բարձրանալով ևս չի նկատվում Հայաստանի լիարժեք ենթարկումը Պարսկաստանին: Այստեղ խնդիրը այլ էր՝ նրա վարած քաղաքականությունը: Հենց նա վերացրեց Արտաշեսյանական սահմանաքարերը ու այն դարձրեց Արտաշիրական՝ խեղաթյուրելով ամբողջ պատմությունը, հետագայում դրանց վերագրումը Տրդատին և Գրիգոր Լուսավորչին: Հայաստանում պետական կրոն ճանաչվեց զրադաշտականությունը: Փաստորեն Հայաստանի առաջ ծառացել էր ոչ միայն տարածքային ամբողջականության պահպանման հարցը այլ նաև կրոնական և մշակութային հարցերը: Որմիզդ-Արտաշիրի հաջորդների մասին տեղեկությունները շատ սուղ են, բայց հավանաբար պահպանվել է նախկին իրավիճակը:

4. Ներսեհի կառավարումը համեմատած նախկինների ավելի մեղմ էր, ինչն ուներ մի շարք պատճառներ: Ներսեհին հարկավոր էր օժանդակ ուժեր Սասանյան գահին հաստատվելու համար, իսկ Հայաստանը հարմար թեկնածու էր: Սրա հետ էր կապված Տրդատին Հայոց թագավոր ճանաչելը: Բայց դառնալով Սասանյան թագավոր նա փոխում է իր վերաբերմունքը ու հարձակվում է Հայաստանի վրա, պարտություն կրում ու կնքում Մծբինի պայմանագիրը:

5. Մծբինի պայմանագրով վերականգնվում է Հայաստանի անկախությունը, թագավոր է հռչակվում Տրդատը: Հռոմեական կայսրությունը լիարժեք վերականգնում է իր միջազգային հեղինակությունը: Պարսիկները պայմանագրով զրկվում են Հայաստանի նկատմամբ որևէ ռազմական գործողություն իրականացնելուց: Սա հնարավորություն է տալիս զարգացնել երկրի ավերված տնտեսությունը ու վայելել անկախությունը: Սասանյանների համար այս պայմանագիրը այնքան ծանր էր, որ նրանք գրեթե կես դար այլևս հարձակողական մարտեր չեն վարում Առաջավոր Ասիայում:

6. Սրան նպաստում է նաև մի շարք երկրներում քրիստոնեության ընդունումը՝ որպես պետական կրոն: Այն ուղղակիորեն անդրադառնում է հայ-պարսկական և հայ-հռոմեական հարաբերությունների վրա: Քրիստոնեության ընդունումով Հայաստանը էլ ավելի ամուր կապերով կապվում է Հռոմեական կայսրությանը:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. **Ագաթանգեղոս,** Պատմություն Հայոց, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Երևան, 1983, 277 էջ:
2. **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1990, 581 էջ:
3. **Դիոն Կասսիոս,** Հռոմեական պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1976, 271 էջ:
4. **Ադոնց Ն.,** Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Հատոր II, ԵՊՀ հրատ., Երևան, 2006, 652 էջ:
5. **Բայբուրդյան Վ.,** Իրանի Պատմություն, ՀՀ ԳԱԱ, Երևան, 2005, 783 էջ
6. **Дандамаев М. А.,** Ахурамазда, Культура и экономика древнего Ирана, «Наука», Москва, 1980, 418 с.
7. **Նիկողոսյան Ռ.,** Պահլավական ուսումնասիրություններ, ԵՊՀ հրատ., Երևան, 2018, 324 էջ:
8. Всемирная история, Том II, Государственное издательство политической литературы, Москва, 1956, 929 с.
9. **Грант М.,** Римские императоры, «Терра - Книжный клуб», Москва, 1998, 400 с.
10. **Аммиан Марцеллин,** Римская история, Москва, Ладомир, 2005, 638 с.
11. **Մանանդյան Հ.,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր II, մաս I, Հայպետհրատ, Երևան, 1957, 643 էջ:
12. **Sprengling, M.** Third century Iran Sapor and Kartir, Chicago, 1953, 172 p.
13. **Frye R.,** The History of Ancient Iran, Germany, 1984, 410 p.
14. **Аннинский А.,** Древние армянские историки как исторические источники., «ЭЛМ», Одесса, 1899, 44 с.
15. Հայ ժողովրդի պատմություն, Հատոր II, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1984, 783 էջ:
16. **Երեմյան Ս. Տ,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: ՀՍՍՌ ԳԱ, Երևան, 1962,154 էջ:
17. **Երեմյան Ս. Տ,** Նախշ-ի Ռուստեմի «Քաաբա-ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, թիվ 3, 1966, էջ33-62

Сдана/Հանձնվել է՝ 10.09.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 12.09.2020
Принята/Ընդունվել է՝ 14.09.2020

КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Սսի 1243 Թ. Բ. Ժողովում ընդունված որոշ կանոնների շուրջ

Գալստյան Գ. Ա.
Երևանի պետական համալսարան, Աստվածաբանության ֆակուլտետ
(Երևան, Հայաստան)
ggalstyan123@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *Սիս, ժողով, կանոն, Կիլիկյան Հայաստան, ձեռնադրության տարիքային նվազագույն շեմ, մերձամուսնություն, հերետիկոս*

О некоторых канонах, принятых Вторым Собором Сиса 1243 года

Галстян Г. А.
Ереванский государственный университет,
Факультет Богословия (Ереван, Армения)
ggalstyan123@gmail.com

Аннотация: Данная статья берёт под внимание созванное в конце второй четверти 13-го века второй собор Сиса 1243 года и установленные данным собором стержневые каноны. Данной статьёй мы задаемся целью представить причины созыва собора и подробно исследовать те каноны, которые относятся установлению минимального возрастного порога рукоположения, проблемам близкородственных браков, и тех еретиков, которые хулят веру, Творца, крещение, ангелам, священникам и т. д. Исходная точка данной работы - историко-сравнительный метод.
Ключевые слова: Сис, собор, канон, Киликийская Армения, Минимальный возрастной порог рукоположения, Близкородственные браки, Еретик

Some Rules Accepted By the Second Council of Sis (1243)

Galstyan G. A.
Yerevan State University, Faculty of Theology (Yerevan, Armenia)
ggalstyan123@gmail.com

Abstract: The present article examines the key rules accepted by the Second Council of Sis (1243) in the last second quarter of thirteenth century. Thus, we aim to present the reasons for convening the council, to thoroughly examine the rules relating to the establishment of the minimum age for ordination, the problems of intermarriage, the heretics who cursed the faith, the Creator, baptism, the angel, the priest, and so on. The historical-comparative method was taken as a basis of the work.
Keywords: Sis, Council, key rule, Cilician Armenia, minimum age for ordination, intermarriage, heretic

Սույն հոդվածը քննության է առնում ժամանակի հրամայականով ԺԳ. դարի երկրորդ քառորդի վերջին գումարված Սսի 1243 թ. Բ. ժողովի սահմանած առանցքային կանոնները: Այսու, մենք նպատակ ենք հետապնդել՝ ներկայացնելու ժողովի գումարման պատճառները և մանրամասն քննության ենթարկելու այն կանոնները, որոնք վերաբերում են ձեռնադրության տարիքային նվազագույն շեմի հաստատմանը, մերձամուսնությունների խնդիրներին և այն հերետիկոսներին, որոնք հայհոյում էին հավատը, Արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանայինև այլն: Աշխատանքի հիմքում ելակետ է ընդունվել պատմահամեմատական մեթոդը:

Սսի 1243 թ. Բ. ժողովը և նրանում ընդունված կանոնական որոշումները առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Կիլիկյան Հայաստանի տվյալ ժամանակահատվածի Հայոց եկեղեցու պատմության ուսումնասիրման տեսանկյունից:

ԺԳ. դարի 30-40-ական թվականներին Հայաստանը գտնվում էր բավականին ծանր վիճակում՝ մոնղոլական ասպատակություններով պայմանավորված: 1232 թ. մոնղոլները վերսկսում են իրենց արշավանքները՝ շարժվելով դեպի Առաջավոր Ասիա: Թշնամին կարողանում է գրավել Գանձակը, Շամքորը, Լոռին, Անին ու Կարսը՝ ամենուրեք ավերելով երկիրը և կոտորելով բնակչությանը, և արշավանքից մեծապես տուժում է հայ ժողովուրդը [**1**]:

Քննարկվող ժամանակահատվածում է, որ մոնղոլների կողմից գերեվարվում են հայտնի վարդապետներից Վանական վարդապետն ու Կիրակոս Գանձակեցին Վանական վարդապետն աշակերտել էր Մխիթար Գոշին և նրանից հետո

դարձել ամենահռչակավոր վարդապետը [**1**; **2**]: Ծանր էր մոնղոլական լուծը, և հայերն ու վրացիները ապստամբություն բարձրացրին զավթիչների դեմ: Արդյունքում՝ մեծ թվով բնակիչներ կոտորվեցին, կանայք պղծվեցին, և հատկապես Հարավային Հայաստանը ենթարկվեց մեծ ավերածությունների [**2**]:

Սսի 1243 թ. Բ. ժողովի գումարման պատճառների մասին մեզ տեղեկություն է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Նրա «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ կարդում ենք. «*Իսկ առաքինի կաթողիկոսն Հայոց Կոստանդին իբրեւ ետես զաւեր աշխարհիս Հայոց եւ զտառապանսն, զոր կրէին ի հարկահանացն եւ ի զօրաց թաթարին, եւ մտախոհ եղեալ իմացաւ, եթէ մեղքն են այսմ ամենայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով ի չարիս խոկայր գործել զհաճոյս կամաց իւրոց: Զի կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, եւ հեթանոսօրէն արիւն ընդ արիւն խառնէին՝ զազգականսն առնելով. եւ զո՛ր կամէին թողուին, եւ զո՛ր կամեին առնուին. եւ պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ առնէին. ընդ հեթանոսս խառնակէին անխտիր. նաեւ որ մեծն է քան զամենայն չարիս, զի եպիսկոպոսք արծաթով առնէին ձեռնադրութիւն՝ զպարգեւսն Աստուծոյ անարժանին եւ ծախելով…*» [**1**]:

Մեջբերումից հասկանալի է դառնում, որ ծանր ժամանակներ էին, խաթարվել էին եկեղեցական կարգերը, մերձամուսնությունները դարձել էին հաճախ կրկնվող երևույթներ, սովորական էին թվում նաև ամուսնաթողությունները, պահքերի անզգուշությունը, ապօրինի կենակցությունները, հեթանոսական բարքերի տարածումը, կաշառքով ձեռնադրությունները և այլն [**2**]: Դրանց դիմակայելու համար Հայոց հայրապետ Կոստանդին Ա. Բարձրբերդցին (1221-1267) ու Վարդան Արևելցին (1241 թվականին Վարդան Արևելցին կամ Մեծը Հռոմկլայում գնում է Կոստանդին կաթողիկոսի մոտ և որոշ ժամանակով մնում այդտեղ [**3**]) Հռոմկլայից 1243 թվականին գալիս են մայրաքաղաք Սիս և Հեթում Ա. թագավորի (1226-1270) գահակալման ընթացքում գումարում եկեղեցական ժողով: Հարկ է նշել, որ Սսի 1243 թ. Բ. ժողովին մասնակցում էին միայն Կիլիկյան Հայաստանի ներկայացուցիչները. Հայաստանի ու Փոքր Ասիայի եպիսկոպոսներին նույնիսկ հրավեր չուղարկվեց: Կոստանդին կաթողիկոսը մտադրված էր անձամբ գնալ արևելյան գավառներ: Բայց չկարողացավ իր ուզածն անել և այդ պատճառով 3 տարի սպասելուց հետո Վարդան Արևելցուն ուղարկեց Հայաստան, որպեսզի կանոններով պտտվի գլխավոր վայրերում, թեմերում, երկրի իշխաններից, եպիսկոպոսներից ու վարդապետներից համաձայնության ստորագրություն վերցնի և այդ բոլորը մեկտեղի: Այս ամենի պարզաբանումը ցույց է տալիս, որ Սսի 1243 թ. Բ. ժողովի որոշումները չէին կարող ազգային ժողովական կանոնի հեղինակություն վայելել, քանի որ կազմությունը կիսատ էր, և լրումը 3 տարուց հետո պիտի լիներ [**2**]: Այս ժողովի կանոնական որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք, բացի կանոնական գլխավոր նյութերին անդրադառնալուց, ժամանակի զեղծումների վերաբերյալ պատշաճ կարգադրություններ են, որոնք շարունակ փոփոխման ենթարկվող կետեր են: Պետք է նաև նշել, որ չի պահպանվել այդ որոշումների վավերական պատճենը: Իսկ Կիրակոս Գանձակեցու շրջաբերականի մեջ Կոստանդինն այնպես է հաղորդում ժողովական որոշումները, որ առավելապես իր անձնական առաջարկություններն են երևում, քան թե ժողովական ոճով խմբագրված հրամանները [**2**]: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Սսում գումարված եկեղեցական ժողովի որոշումները շատ մեծ նշանակություն ունեին, քանի որ արտացոլում էին ժամանակաշրջանի արատավոր բարքերը:

Ն. արք. Մելիք-Թանգեանն արձանագրում է, որ Սսի 1243 թ. Բ. ժողովը եղավ հայոց եկեղեցական ազգային օրենսդիր վերջին ժողովը, որից հետո դեռ չենք ունեցել կանոնադիր որևէ ժողով [**4**]: Ժողովում ընդունվեց ԻԳ (ըստ մի շարք ձեռագրերի՝ ԻԵ) կանոն [**5**; **6**]:

Անդրադարձ կատարելով ժողովի ընդհանուր կանոնների էութենական հատկանիշներին՝ փորձենք ներկայացնել դրանց ընդհանուր բովանդակությունը: Այնուհետև անցում կկատարենք մի քանի կանոնների խորն ու համակողմանի ուսումնասիրությանն ու քննությանը: Կարելի է ասել, որ ժողովի ԻԵ կանոնները Մ. Օրմանյանը խմբավորում է՝ դրանք ներկայացնելով որպես կանոնական, բարեկարգական, բարոյական, քահանայական և զիջողական կանոնների գլուխներ: Առաջին ութ կանոնները, որոնց արտահայտությունը գտնում ենք կանոնական որոշումների ցանկում, ժամանակի բավական արգահատելի երևույթների անդրադարձն են, որպիսիք էին կաշառքով քահանա ու եպիսկոպոս ձեռնադրվելը, անարժան կերպով այդ պաշտոնները զբաղեցնելը, չունենալով մարմնի ու մտավոր չափահասություն՝ սարկավագ ու քահանա ձեռնադրվելը: Եվ այս բոլոր խնդիրները իրենց լուծումն են ստանում ժողովի առաջին չորս կանոններով: Մյուս չորսը կարգավորեցին այն հարցերը, որոնք կապված էին քահանայական արարողություններին [**1**; **2**; **4**; **5**]:

Հաջորդ սահմանումները (Ը.-ԺԴ.) ներկայացնում էին տարատեսակ բարեկարգական խնդիրներ, որոնք վերաբերում էին, օրինակ՝ օտար երկրից Հայաստան եկած քահանաների, վարդապետների, եպիսկոպոսների իրա-

վունքներին, գրքերի դասասացներին ու նրանց ընտրությանը, եկեղեցու սուրբ գրքերի գրման կարգին, եպիսկոպոսի՝ իր թեմում ծավալման գործունեությանը: Նաև այստեղ կան կանոններ խոստովանահայրերի և նրանց կարգման վերաբերյալ [**1**; **2**; **4**; **5**]:

ԺԵ.-ԺԸ. որոշումները վերաբերում են բարոյական հայեցակետերի: Այս կանոնները սահմանում են եպիսկոպոսների դերն ու նշանակությունը ժողովրդի բարոյական դաստիարակության գործում, մարդկանց ճշմարիտ ճանապարհը ցույց տալն ու այդ ամբողջ ընթացքում նրանց բարքին հետամուտ լինելը: Նշյալ կանոնախմբում կարևորվում էին նաև պահքի կանոնակարգի, դրա խախտման և այն խախտողին սպասվող պատիժների ու տուգանքների վերաբերյալ հարցերը: Բավականին խիստ պատիժներ են նաև սահմանվում անօրեն հայհոյողների դեմ [**1**; **2**; **4**; **5**]:

Հաջորդ հինգ կանոնները (ԺՌ-ԻԳ) քահանայական կանոններ են, որոնցից մեկը խիստ պատիժներ էր սահմանում քահանային, եթե վերջինս երբևէ անօրեն հայհոյանք արած լիներ: Որոշ սահմանումներ կանոնակարգում էին քահանաների գործունեության և ծառայության ոլորտը, այն է՝ Աստծուն ծառայելուց բացի ուրիշ գործ չկատարել: Հստակ նշվում էր նաև, որ քահանան պետք է տարատեսակ զրույցներ անցկացնի իր հոտի հետ: Այս հատվածում խոսվում է նաև ժողովուրդ-քահանա-եպիսկոպոս-հայրապետ շղթայական հարաբերությունների և նրանց փոխադարձ գործունեության մասին [**1**; **2**; **4**; **5**]:

Իսկ արդեն վերջին երկու կանոնները էութենապես զիջողական գլուխներ են, այսինքն՝ Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը զիջումներ է կատարել լատինական եկեղեցուն՝ կրկին պահի թելադրանքով: Այդ զիջումները վերաբերում էին երկրորդական խնդիրների, բայց հիմք հանդիսացան, որ հետագայում զիջումներ կատարվեն նաև կարևոր հարցերի շուրջ [**1**; **2**; **4**; **5**]:

Հարկ է նշել, որ սույնով մենք նպատակ չենք ունեցել՝ քննելու կանոնական բոլոր որոշումների բովանդակությունը: Այլ ընտրողաբար ներկայացնելու մեզ հետաքրքրող մի քանի սահմանումների բնութագիրն ու բացատրությունը՝ պատմահամեմատական քննությամբ:

Առաջին խնդիրը, որին կանդրադառնանք, եպիսկոպոս, քահանա ու սարկավագ ձեռնադրվելու համար սահմանված տարիքային նվազագույն շեմերն են: Այսպես, Սսի 1243 թ. Բ. ժողովի կանոնական Բ. սահմանման մեջ կարդում ենք. «*Այուհետեւ արժանաւորքն միայն եւ գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան մեծաւ քննութեամբ եւ վկայութեամբ եւ թեմին կամակցութեամբ առանց կաշառուած,* ***հասակաւ մի՛ պակաս քան զերեսուն ամն***» **[1]***:* Իսկ քահանա և սարկավագ ձեռնադրվելու համար տարիքային նվազագույն շեմ է սահմանում Դ. որոշումը. «*Ապա զեկեալսն ի չափ՝ հասակաւ եւ ուսմամաբ, եւ սրբութեամբ, ածցէ յաստիճան, վկայութեամբ անձանց իւրեանց եւ սնուցողացն՝ առանց արծաթոյ,* ***տիօք մի՛ պակաս քան զքսան հինգ ամն երէցն եւ սարկաւագն՝ քսան ամ***» **[1]***:* Հարկ է արձանագրել, որ իրենց էության մեջ այս կանոնները երկբնույթ կամ երկմասնյա են, որոնք սերտորեն շաղկապված են իրար, այիսինքն՝ կանոնները սկզբում ցուցում են, որ արժանավորներն ու գիտունները պիտի արժանանան նվիրապետական աստիճանների, ձեռնադրությունը պիտի կատարվի առանց կաշառքի, այնուհետև նշվում է նվիրապետական աստիճանը ստանալու նվազագույն տարիքային շեմը: Եվ այս ամենից կռահելի է, որ աստվածային կարգով ավանդված խորհուրդը՝ Ձեռնադրությունը, ապականվել էր և չէր պահվում իր ողջ հոգևոր էության մեջ: Եվ արդյունքում՝ ձեռնադրվում էին անարժանները: Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել մի շատ կարևոր հանգամանքի. ձեռնադրվողը պետք է ունենա որոշ պատրաստություն և ընդունակություն Սուրբ Հոգու շնորհներով սպառազինվելու համար, և ենթադրելի է, որ այդ ստացվելիք պարգևների համեմատ էլ պետք է լինի համապատասխան կատարելության պայմաններին ոչ հակառակ: Եվ այդ պայմաններից մեկն էլ մարմնի և չափահասության կատարելությունն է [**7**], որը, ինչպես տեսնում ենք, չի պահվել: Եվ այդ է պատճառը, որ սահմանվում է եպիսկոպոս ձեռնադրվելու նվազագույն տարիքը՝ 30-ից ոչ պակաս: Եվ այս կանոնն առանձնահատուկ է նրանով, որ առաջին անգամ հայ պատմաեկեղեցական իրականության մեջ սահմանվում է եպիսկոպոսի ձեռնադրության նվազագույն տարիքային շեմ:

Ինչ վերաբերում է սարկավագների և քահանաների ձեռնադրության տարիքային խնդրին, հարկ է անպայմանորեն նշել, որ կան այլ օրինակներ, որոնք գրում են, որ և՛ քահանան, և՛ սարկավագը պետք է լինեն 27 տարեկանից ոչ պակաս [**2**]: Այս կանոնի ուսումնասիրությունը փաստում է, որ խախտվել էր նվիրապետական ողջ կարգը, որը կապված էր հոգևորականի մարմնի ու չափահասության կատարելության խնդրին: Եվ ձեռնադրվողի հոգևոր կատարելությունը պետք է դրսևորվի նաև արտաքուստ՝ ժողովրդի վրա ոչ միայն տեսողությամբ, այլև լսողությամբ ազդելու համար, և որ այրական հաստատակամություն ունենա իր գործունեության մեջ, մանավանդ որ մարմնական թերություններն ու տղայական փոփոխամտությունը ծաղրական են դարձնում լրջության ու ճշմարտության պաշտոնյային *(Բ. Տիմ., Դ. 9)*:

Այդ սկզբունքը, որն առկա էր Հին Ուխտի նախապատրաստական եկեղեցում, առավել ևս պետք է պահպանվեր Նոր Ուխտի իսկական եկեղեցում *(Ղևտ., ԻՀ. 17-23)*:

Ն. արք. Մելիք-Թանգեանը կարծում է, որ *ԻԷ* թիվը գրչական սխալ է և որ գրիչը շփոթել է **ԻԵ** և **ԻԷ** գրությունները [**4**]: Հեղինակը նաև նշում է, որ «Կանոնք Նէոկեսարեայ» կանոնախմբի ԺԷ. կանոնը ցուցում է, որ քահանան պետք է լինի 30-ամյա՝ Հիսուս Քրիստոսի օրինակով [**4**], սակայն նշյալ կանոնում կարդում ենք. *«Վասն որք ի նեղութիւն անկանցին կամ ի խիստ հիւանդութիւն եւ կամ ըմբռնեսցի ի բռնաւորաց եւ վասն նեղութեան մկրտիցի, եւ կամ յառաջ էր անուն քրիստոնեայ եւ գործք վատթարք եւ ապա վասն նեղութեանն ի հաւատս կացցէ, զայնպիսին ընդունի եկեղեցի, այլ ոչ կատարելապէս, զի ակամայութեամբ են հաւատքն. զայնպիսւոյն ասէ գիր. «Միթէ՞ ի հող խոստոված առնիցիմ առ քեզ»» [8]:* Սահմանման մեջ չենք առնչվում տարիքային շեմի հաստատման խնդրին: Եվ ենթադրելի է, որ ինչպես եպիսկոպոսի ձեռնադրության, այնպես էլ սարկավագի և քահանայի ձեռնադրության պարագաներում առաջին անգամ Հայոց եկեղեցում սահմանված են նվիրապետական աստիճանների նվազագույն տարիքային շեմեր:

Հաջորդ որոշումը, որ մեր հետաքրքրության կիզակետում է, կանոնական Ը. Սահմանումն է. *«Զպսակն ընտրութեամբ արասցեն՝ վեց ծննդովք հեռացեալ յազգակցութենէ արեան. փեսային մի՛ պակաս քան զչերեքտասան ամն, եւ հարսն՝ քան զերկոտասան»* [**1**]*:* Կանոնն իր էությամբ կրկին երկբնույթ է, որի առանջնահատվածը վերաբերում է Պսակի խորհրդակատարության արյունակցական-ազգակցական արգելքներին և կարգավորում է մերձամուսնության խնդիրը: Իսկ կանոնի երկրորդ մասը սահմանում է ամուսնացողների նվազագույն տարիքային շեմ: Մ. Օրմանյանն իրավացիորեն նկատում է, որ կանոնը վերաբերում է միայն արյունակցական-ազգակցական արգելքներին, և չեն հիշատակվում այլ տիպի արգելքներ, օրինակ՝ խնամիական, կնքահայրական կամ որդեգրական չհասության արգելումներ [**2**]: Կանոնական որոշումից պարզ է դառնում, որ ամուսնության թույլատրելի սահման է համարվում յոթերորդ սերունդը, այսինքն՝ կարող են ամուսնանալ նույն պապի մի որդու թոռը և մյուսի ծոռը կամ այլ ձևակերպմամբ՝ մի ծոռը և մյուս թոռնեթոռը [**9**]: Հասկանալու համար, թե ինչու Սսի 1243 թ. Բ. ժողովում նման որոշում կայացվեց, հարկ է ուշադրության առնել, թե մինչև նշյալ ժողովը նմանատիպ ինչ որոշումներ են կայացվել: Այսպես, Առաքելական ԼԳ. Որոշումը [**8**; **9**] սահմանում է չորրորդ զարմի արգելք, բայց սահմանման մեջ նկարագրված օրինակներից երևում է մինչև երրորդ զարմի արգելքը: Հայոց Ներսես Մեծ կաթողիկոսին (Ներսես Ա. Պարթև՝ 353–373 թթ.) վերագրվող *«Սահմանք եւ կանոնք կարգի եկեղեցւոյ Սրբոյն Ներսէսի հայրապետի հայոց»* կանոնախմբի ԻԲ. Կանոնը [8;9] սահմանում է ազգակցական՝ մինչև հինգերորդ զարմի արգելք: Խնդրին առնչվող հաջորդ հանգրվանը Շահապիվանի 444 թ. ժողովի ԺԳ. որոշումն է, որը, ի տարբերություն Առաքելական ժողովի ԼԳ. որոշման, որտեղ նշվում է ազգակցական նույն չհասությունը, ինչ որ Շահապիվանի ժողովի հիշյալ կանոնում, այստեղ հստակ դրվում է ոչ թե չորրորդ, այլ երրորդ զարմի արգելք [**8**; **9**]: Ամուսնության արյունակցական-ազգակցական երրորդ զարմի արգելքի դրսևորումներն առկա են Վաչագան Բարեպաշտի Սահմանադրության Ժ. [**8**] և Պարտավի 786 թ. Բ. ժողովի ԺՉ. Կանոններում [**8**]: Մինչև Սսի նշյալ ժողովի գումարումը կանոնական այս խնդրին անդրադարձել են նաև Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական» [**10**] աշխատության մեջ և Մխիթար Գոշն իր «Դատաստանագրքի» ՄԺԲ. կանոնի համատեքստում [**11**]: Նրանք երկուսն էլ սահմանել են չորրորդ զարմի արգելք՝ թույլատրելով հինգերորդ սերնդի ամուսնությունը: Սակայն նրանց կարգած չորրորդ զարմի արգելքը էականորեն տարբերվում է նախորդ օրինակներից: Այսպես, Հայոց Հայրապետն ու անվանի վարդապետը, չորրորդ սերնդի արգելք սահմանելով, թույլատրել են պապի երկու տարաճյուղ կոռների ամուսնությունը, որոնք երկու եղբոր թոռնեթոռներ պիտի լինեին: Այսինքն՝ սահմանվել են մերձամուսնական թույլատրելիության հեռավորություն մինչև իններորդ և տասներորդ աստիճաններ [**9**]:

Անդրադառնալով կանոնական հենքին՝ փորձենք վերլուծել, թե որն էր ժողովում նման որոշման ընդունման անհրաժեշտությունը: Ինչպես նշել ենք, ժողովի որոշումների մեծ մասն արտահայտում է տվյալ ժամանակաշրջանի վարքուբարքերը և դրան առնչվող հարցերը: Եվ այն փաստը, որ Հայաստանը նշյալ ժամանակահատվածում գտնվում էր ոչ խաղաղ իրավիճակում, դրանով էլ կարող ենք պայմանավորել կանոնի ընդունումը, քանի որ բարձր էր մահացության ցուցանիշը: Եվ ժամանակի հրամայականն էր դարձել ծնելիությունը կարգավորող, վաղ տարիքում ամուսնությունը խրախուսող օրենքի ընդունումը: Եվ այդ խնդիրները որոշ չափով կարգավորելուն միտված՝ կանոնը սահմանեց վեցերորդ զարմի արգելք՝ թույլատրելով յոթերորդ սերնդի ամուսնությունը՝ Ներսես Շնորհալու և Մխիթար Գոշի սահմանած մինչև 10-րդ աստիճանի թույլատրելիության մերձամուսնական կապն իջեցնելով յոթերորդ զարմի:

Խոսելով Ը. սահմանման երկրորդ հատվածի մասին, որը հաստատում է փեսացուի և հարսնացուի 14 և 12 տարեկան լինելու փաստը, հարկ է նշել, որ տարիքային այդ շեմերը բավականին նվազ են, քանի որ դրանք կատարյալ խելահասություն չեն ենթադրում [**2**]: Որպես համեմատություն՝ հարկ է նշել, որ Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ում սահմանում է փեսացուի 15 և հարսնացուի 12 տարեկան լինելու թույլատրելության հանգամանքը [**10**]: Իսկ Սսի ժողովի նշյալ կանոնը մեկ տարով իջեցնում է տարիքային շեմը: Կանոնական նմանատիպ որոշման հանդիպում ենք Ձագավանի 1270 թ. ժողովի կանոնական սահմանադրության մեջ, որը, թեև, սահմանում է հարսնացուի 14 տարեկան հասակը [**12**]: Վերոնշյալը մեզ թույլ է տալիս կատարելու այն եզրակացությունը, որ Սսի Բ. ժողովին հաջորդող տարիները ցույց տվեցին փեսացուի՝ 15 տարեկան լինելու հանգամանքի առավել նպատակահարմարությունը [**9**]:

Վերջին կանոնական որոշումը, որին հարկ ենք համարում անդրադառնալ սույն հոդվածի շրջանակներում, ժողովական ԺԷ. սահմանումն էր, որն ուղղված էր ընդդեմ հերետիկոսների: Կանոնը ցուցում է. «*Նախ քան զայս եւ յառաջ քան զամէնն զայս եմք հոգեացեալ առաջի աւետարանին Հեթմոյ եւ Հօր իւրոյ Կոստանդեայ եւ ամենայն իշխանացն, եւ բանադրանօք բանադրեալ յամենեցուն վերայ, որ օգնական լինին եկեղեցւոյ, եւ յամենայն տեղի՝ ի մեծ եւ ի փոքր՝ յիշոցավագ դնեն ի դարպաս, ի քաղաք, եւ գիւղս, ի բերդս, եւ յագարակս, եւ զանօրեն յիշոցասացն, զաստուծոյ բարկութիւն շարժողն, եւ զաններելի անօրէնսն, որ անարգեն զհաւատսն, զստեղծող, զկնունք, զհրեշտակ, զքահանայ, զբերան, զերես, զգերեզման, եւ զայլ զայսպիսիս զնոր բուսեալ չարիսդ, զայնպիսեացն զլեզուսն հատցեն, եւ կամ ծածկեսցեն եւ լար ի ներս ածցեն, եւ նախատանօք ի շուրջ ածցեն օր մի, եւ ըստ գոյին տուգանս առցեն, եւ յաղքատս տայցեն*» [**1**]: Կանոնի բովանդակային քննությունը Ա. Սուքիասյանին հանգեցնում է այն մտածման, թե պետությունն ու եկեղեցին անխնայորեն հետապնդում էին հասարակության հեղափոխականորեն տրամադրված տարրերին [**5**]: Կանոնն արձանագրում է, որ ժողովից դեռ շատ առաջ եկեղեցական իշխանություններն այդ հարցը դրել էին Հեթում Ա. թագավորի, Կոստանդին թագավորահոր և բոլոր իշխանների առաջ և նրանցից պահաջել են պայքարել հերետիկոսների դեմ [**5**]: Համաձայն կանոնի՝ հերետիկոսներն անաստված հայհոյողներ են, որոնք առաջ են բերում Աստծո զայրույթը, սրբապիղծներ են, որոնք հայհոյում են հավատը, Արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանային, բերանը, դեմքը, շիրիմը [1;5]: Հարկ է անպայման նշել, որ հավատ անարգելը մեզ հայտնի հայ միջնադարյան հասարակարգերում նոր երևույթ է: Իսկ վերոնշյալ անբարեվարքությունների շարքում տարակուսելի է այն, թե երբ նշված է «անարգել զստեղծող», ո՞ւմ նկատի ունի, Հա՞յր Աստծուն, թե՞ Որդի Աստծուն [13]: Եթե խոսքը Քրիստոսի մասին է, ապա նրան անարգելու երևույթը նոր չէր, քանի որ դա կարող էին անել, օրինակ, բոլոր այն հերձվածների ու աղանդների մոլորյալները, ովքեր մերժում էին նրա աստվածությունը, ինչպես նաև տարածաշրջանի մահմեդականները, որոնք դա անում էին խաչակրաց արշավանքների ժամանակ [13]: Սակայն երբ կարդում ենք Ձագավանի 1270 թ. եկեղեցաժողովի «Սահմանք»-ի նախաբանը, առնչվում ենք հետևյալ իրողությունը. «*…առաւել անքաւելի մեղաւք եւ չարաչար հերձուածովք, որ քան զամլենայն հերձուած լեղի է, մինչեւ զայս զի ժողովովք ևզովեալ են չարագոյն յիշոցնաւտութն, որ զամլենայն յմոռացեալ մեղք եւ չարիք յիշել տան **յԱստուծոյ** հրեշտակաց եւ բոլորից սրբոց, եւ դողացուցեն զարարածս Աստուծոյ եւ զարշելի եւ զազիր հոգով լնուն զերկիր*» [**14**]: Ասվածից կարող ենք ենթադրել, որ «անարգել զստեղծող» արտահայտությունը վերաբերում է Հայր Աստծուն: Եվ սա աննախադեպ երևույթ էր, որը խորթ էր անգամ Ի. դարի աստվածամերժողական հասարակարգին: Խոսելով կնունքը հայհոյելու մասին՝ կարող ենք ասել, որ դա նույնպես նոր երևույթ չէր: Հարկ ենք համարում նաև նշել, որ ժողովը շատ խիստ պատիժներ է սահմանում. լեզուն կտրել կամ այն ծակել, լար անցկացնել ու մեկ օր նախատինքով լցնել [**5**]: Եվ այս առիթով Մ. Օրմանյանը գրում է. «*Այդ խիստ օրէնքը, որ իր բնութեամբ արեւելեան խստութեանց նմանութիւնն ունի, աւելի արեւմուտքի մէջ սկսած հաւատաքննական խստութեանց հետեւողութիւն պէտք է նկատուի*» [**2**]: Նմանատիպ կանոնական որոշման ականատեսն ենք լինում Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի» ԿՁ. կանոնը քննելիս, որտեղ մասնավորաբար ասվում է. «*Վասն որ զԱստված հայհոյէ կամ անարգէ*» [**15**], ենթակա է մահվան: Կարող ենք եզրակացնել, որ Սսի 1243 թ. Բ. ժողովի ԺԷ. կանոնը չի տվել իր ցանկալի արդյունքը, և մոտ երկու տասնամյակ անց կրկին նմանատիպ կանոն է հաստատել Սմբատ Գունդստաբլը:

Ամփոփելով և վերոբերյալից եզակացություն անելով՝ պետք է շեշտենք ժողովի գումարման հիմնական պատճառները, բոլոր կանոնների ընդհանուր բովանդակությունը: Այս ժողովի հրավիրումը հրամայական էր և անխուսափելի: Կանոններն արտահայտում էին

տվյալ ժամանակաշրջանի կենցաղավարությունն ու ժողովրդական վարքուբարքերը:

Աշխատանքը գրելիս հանգեցինք հետևյալ եզրակացությունների.

1. Սսի 1243 թ. Ք. ժողովում ընդունվեց ձեռնադրվողների նվազագույն տարիքային շեմի հաստատման որոշումը, որը, մեր համոզմամբ, հայ պատմաեկեղեցական իրականության մեջ կատարվեց առաջին անգամ,
2. Իջեցվեց մերձամուսնական չհասության արգելումը. ներկայացրինք նմանատիպ այլ կանոնների հաստատման պատմությունը մինչև նշյալ ժողովի գումարումը:
3. Ընդգծվեց ժողովական Ը. կանոնի հաստատման անհրաժեշտությունը և տրամաբանությունը: Նշյալ կանոնը սահմանում էր նաև ամուսնացողների նվազագույն տարիքային շեմ:
4. Վերջին կանոնական որոշումը, որը փորձեցինք մանրամասն ներկայացնել, վերաբերում էր հերետիկոսներին, որոնք հայհոյում էին հավատը, արարչին, մկրտությունը, հրեշտակին, քահանային և այլն: Սա շատ արգահատելի երևույթ էր, որը բնորոշ չէր նաև Ի. դարի աստվածամերժական համայարգին: Հերետիկոսների համար սահմանվեցին շատ խիստ պատիժներ:

Վերստին արձանագրենք, որ Սսի 1243 թ. Ք. ժողովը կարևորագույն ժողովներից էր ոչ միայն Կիլիկյան ժամանակաշրջանի, այլև ընդհանրապես Հայոց եկեղեցու պատմության տեսանկյունից, որը մինչ օրս չի ենթարկվել համաբովանդակ ուսումնասիրությունների:

Չնայած ժողովին ներկայացուցիչներ կային միայն Կիլիկյան Հայաստանից, սակայն Վարդան Արևելցի նվիրակը կանոնական որոշումները բերեց Արևելյան Հայաստան և ստացավ տեղի իշխանների, եպիսկոպոսների, վանահայրերի ստորագրությունն ու համաձայնությունը՝ այդպիսով ժողովին բերելով համահայկական հռչակ [**2**][1]: Այս ժողովի առանձնահատկությունն այն է, որ այն իր որոշումներով ցույց է տալիս տվյալ ժամանակաշրջանի բացասական և դրական կողմերը և արտացոլում մշակութային դիմագիծը:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ

1. **Կիրակոս Գանձակեցի,** Պատմութիւն Հայոց, աշխ՝ Կ. Մելիք-Օհանջանեանի, Երևան, 1961,
2. **Մ. Օրմանյան**, Ազգապատում, հտ. Ք., Ս. Էջմիածին, 2001, ս. 1893:
3. **Ա. Հովհաննիսյան,** Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2020,
4. **Ն. արք. Մելիք-Թանգեան,** Հայոց եկեղեցական իրավունքը, Ս. Էջմիածին, 2009,
5. **Ա. Սուքիասյան,** Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, (XI-XIV դարեր), Երևան, 1978,
6. **Ա. Ժամկոչյան,** Սսի 1243 թվականին տեղի ունեցած եկեղեցական ժողովի և կանոնական որոշումների պատմությունից, «Տարեգիրք աստվածաբանության», Երևան, 2015,
7. **Ա. Տեր- Միքելյան,** Հայաստանյաց առաքելական եկեղեցու քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007,
8. **«Կանոնագիրք Հայոց»,** հտ. Ա., աշխ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964,
9. **Գ. Գալստյան,** Ամուսնության արյունակցական-ազգակցական արգելքները, «Էջմիածին» ամսագիր, 2018, Ժ.,
10. **Ներսէս Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, Ս. Էջմիածին, 1865,
11. **Մխիթար Գոշ,** Գիրք Դատաստանի, աշխ՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1971,
12. «Զագավանի ժողովը և իր կանոնքը», առաջաբանը և թարգմանությունը՝ Ս. Մխիթարյանի, Հայ աստվածաբան, Ե., 2013,
13. **Ա. Մանուչարյան,** Աստուածամարտական երեւոյթ հայոց մէջ ԺԳ. դարում, Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2017,
14. **Գարեգին Յովսէփեանց,** *Զագաւանից ժողովը*, Վաղարշապատ,1913,
15. **Սմբատ Սպարապետ,** Դատաստանագիրք, Երևան, 1958.

Сдана/Հանձնվել է՝ 19.08.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 22.08.2020
Принята/Ընդունվել է՝ 24.08.2020

[1] Անչափ հետաքրքրական է այն փաստը, որ Վարդան Արևելցու «Տիեզերական պատմութիւն» աշխատության մեջ չկա որևէ հիշատակում նշյալ ժողովի գումարման մասին:

ЭКОНОМИКА

ՀՀ տնտեսական վիճակի ամփոփ վերլուծությունը և առկա ներդաշնակեցման հիմնախնդիրները տարածաշրջայնացման ժամանակակից փուլում

Նիկոյան Ս. Մ.
Հայկական պետական տնտեսագիտական համալսարան, Ֆինանսական ֆակուլտետ (Երևան, Հայաստան)
sam.nikoyan98@gmail.com

Վճռորոշ բառեր՝ գլոբալացում, ինտեգրում, տնտեսական աճ, արտաքին առևտուր, հարկային ներդաշնակեցում, անուղղակի հարկեր, հարկային դրույքաչափ, հարկային բեռ:

Итоговый анализ экономической ситуации РА и проблемы существующей гармонизации на современном этапе регионализации

Никоян С. М.
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
sam.nikoyan98@gmail.com

Аннотация: В условиях неопределенности мировой экономической системы для стран с такой маленькой экономикой, как Армения, очень важно активное участие особенно в региональных интеграционных процессах, которые будут способствовать решению ряда проблем внешней торговли и повысят степень безопасности Армении. В рамках каждого экономического объединения, для обеспечения дальнейшего развития сотрудничества, важным фактором является проведение согласованной и гармоничной налоговой политики, которая будет способствовать обеспечению свободного движения услуг, товаров и капитала и уравнению конкурентных условий.
Ключевые слова: Глобализация, интеграция, экономический рост, внешняя торговля, налоговая гармонизация, косвенные налоги, налоговая ставка, налоговое бремя.

Brief analysis of the RA economic situation and problems of existing harmonization at the modern stage of regionalization

Nikoyan S. M .
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
sam.nikoyan98@gmail.com

Abstract: Given the uncertainty of the global economic system, it is very important for countries with such a small economy as Armenia to actively participate in regional integration processes, which will help solve a number of foreign trade policy issues and increase the security level of Armenia. Within each economic Association, in order to ensure further development of cooperation, an important factor is the implementation of a coherent and harmonious tax policy that will help ensure the free movement of services, goods and capital and equalize competitive conditions.
Keywords: Globalization, integration, economic growth, foreign trade, tax harmonization, indirect taxes, tax rate, tax burden:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականությունը ձևավորվել ու իրականացվում է կառավարության կողմից՝ ազատական սկզբունքների հիման վրա և նպատակաուղղված է ՀՀ միասնացմանը համաշխարհային տնտեսությանը: Ներկայում ՀՀ առևտրային կապերի աշխարհագրությունը բավականին ընդարձակ է և ընդգրկում է աշխարհի ավելի քան 150 երկիր:

Արտաքին առևտրային քաղաքականությունը երկրների կողմից իրականացվող միջոցառումների այն համակարգն է, որի միջոցով ինչպես ընդլայնվում, այնպես էլ սահմանափակվում են օտարերկրյա ապրանքների՝ տվյալ ազգային շուկա ներթափանցելու հնարավորությունները: Արտաքին առևտրային քաղաքականության առավել ընդհանրական նպատակը տվյալ երկրի համար առավելագույն շահ ապահովելն է, անկախ այն հանգամանքից, թե

այն ինչպիսի քաղաքականություն է վարում [**1**, էջ 118-121]:

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում փոփոխվում են աշխարհակարգի ավանդական հիմքերը, տեղի են ունենում միջազգային տնտեսական հարաբերությունների քանակական և որակական նոր զարգացումներ: Ժամանակակից իրականության կարևորագույն բնութագրերից է տարբեր երկրների տնտեսությունների փոխադարձ կախվածության աճը, ինտեգրացիոն գործընթացների զարգացումը միկրո և մակրոմակարդակում, անցումը ներփակ ազգային տնտեսությունից բաց տնտեսության: Երկրների փոխադարձ կախվածությունը դառնում է վճռորոշ իրողություն: Օր օրի ձևավորվում և աստիճանաբար սերտանում են տարածաշրջանային տնտեսական կապերը՝ ներառելով բազմաթիվ երկրներ: Միջազգային տնտեսական ինտեգրումը ստանում է լայնատարած գործնական կիրառում՝ նախանշելով հետագա զարգացման հեռանկարները:

Հետազոտությունները փաստում են, որ համաշխարհային տնտեսական համակարգի անորոշության պայմաններում, երբ գլոբալացման բացասական հետևանքները խորանում են, տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումների ստեղծումը դառնում է այդ հետևանքների բնական արձագանքը [**2**, էջ 56]:

Հաշվի առնելով վերոնշյալները՝ ներկայումս, առավել քան երբևէ, հնչեղություն են ստանում տնտեսական ու սոցիալական անվտանգության հիմնահարցերը, և գլոբալացման գործընթացները հաշվեկշռվում են տարածաշրջանային ինտեգրացիոն միավորների աճող ներգործությամբ, սրվում և օրհասական է դառնում արդյունքների նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը և այս բոլոր միտումները հանգեցրել են նրան, որ երկրները դիմում են առավել խորը փոխշահավետ գործակցության՝ ի նպաստ իրենց ժողովուրդների և քաղաքացիների բարօրության, համատեղ լուծելու տնտեսական, բնապահպանական, սոցիալական, մարդկանց անվտանգության ապահովման ու համարժեք այլ խնդիրներ:

21-րդ դարի աշխարհակարգին բնորոշ են հատկապես տնտեսական ոլորտում վերազգային կորպորացիաների գերիշխանությունը, գլոբալ աղետների դեմ պայքարի համաշխարհայնացումը, մարդու իրավունքների ոլորտում միասնական չափորոշիչների սահմանումը, արժեհամակարգային ինտեգրման խորացումը [**1**, էջ 109-110]: Այս գործընթացները պահանջում են նաև գործակցության նոր ձևեր, որոնցից են միջազգային և տարածաշրջանային համագործակցության տարբեր ձևաչափերի ակտիվ զարգացումը:

Այսպիսով, 2013թ-ից սկսվեց Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության «ճանապարհային քարտեզի» պատրաստման աշխատանքները, և ի վերջո, 2015թ-ի հունվարի 2-ին ՀՀ-ը պաշտոնապես դարձավ Եվրասիական տնտեսական միության լիիրավ անդամ:

Ներկայումս ամբողջ աշխարհը մտնում է զանազան ինտեգրացիոն նախագծերի զարգացման փուլ, քանի որ հատկապես 2008թ-ի ճգնաժամից հետո պարզ դարձավ, որ դա է լիակատար գոյատևման պայմանը, քանզի աշխարհում ոչ մի պետություն ի վիճակի չէ ինքնուրույն հաղթահարելու գլոբալ վտանգներն ու մարտահրավերները: Այդ իսկ պատճառով ժամանակակից պետությունների տնտեսական մրցունակության բարձրացման, քաղաքական ներուժի ամրապնդման կարևորագույն մեխանիզմներից է տարածաշրջանային ինտեգրումը:

Ժամանակակից իրականության մեջ, այդպիսին է պետության տնտեսական հաջողության այսօրվա բանաձևը: Եվրասիական նախագիծը գտնվում է այդ գլոբալ շարժ- ման հունի մեջ: Տնտեսական անկայունության ֆոնի վրա տնտեսական ինտեգրումը մի շարք երկրների, այդ թվում նաև ՀՀ-ի համար կդառնա աճի, զարգացման կարևորագույն խթան: Պարզ է, որ այնպիսի փոքր երկրների համար ինչպիսին Հայաստանն է, ինտեգրումը երկա րատև տնտեսական աճի ապահովման երաշխիք է:

Զարգացած երկրների պարտադրած կոշտ մրցակցության պայմաններում արտաքին շուկա մուտք գործելը մեր երկրի համար գլոբալ խնդիր է, քանի որ բարձրորակ և մրցունակ արտահանման արտադրանք արտադրելը պահանջում է բարենպաստ պայմաններ հումքի ներմուծման համար, ինչպես նաև դյուրին ելք դեպի միջազգային տրանսպորտային գլխավոր ուղիներ:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակմամբ հանդերձ՝ ՀՀ-ի անդամակցումը ԵԱՏՄ-ին նպաստում է Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականության մի շարք խնդիրների լուծմանը, մասնավորապես՝ արտաքին առևտրի ընդարձակմանը և ծավալների աճին, հայրենական արտադրողների պաշտպանությանը և տրանսպորտային համակարգի բարելավմանը [**3**, էջ 9-14]:

Անզեն աչքով էլ տեսանելի է, ինչպես նաև կան բազմաթիվ հետազոտություններ, որոնք գնահատում են տրանսպորտային շրջափակման բացասական ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա: Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի փորձագետների կարծիքով, տրանսպորտային ապաշրջափակումը և տրանսպորտային հաղորդակցության զարգա-

ցումը զգալիորեն կբարելավի ՀՀ արտահանումը և կնպաստի ՀՆԱ-ի աճին, իսկ տրանսպորտային ծախսերը, ըստ ՀԲ-ի այլ փորձագետների, կկրճատվեն 30-35 %-ով [**4**, էջ 16]:



Գծապատկեր 1. ՀՆԱ-ի աճը 2014-2019թթ. (Հաշվարկվել է ըստ, http://www.armstat.am, տվյալների հիման վրա)



Գծապատկեր 2. ԱԱՀ հիմնական դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում (Հաշվարկվել է ըստ՝ [**13**, էջ 17–18])

Ըստ որոշ հետազոտողների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ինտեգրման խորացումը հանգեցնելու էր անդամ երկրներում ՀՆԱ-ի տարեկան 2.5%-ով բարձրացման՝ շնորհիվ առևտրային կապերի խորացման, արտադրության կոպերացման և տեխնոլոգիական մակարդակի զարգացման, իսկ Հայաստանի դեպքում կանխատեսվել էր ՀՆԱ-ի 4% հավելյալ աճ [**5**]: Հստակեցնելով, թե ինչ է նշանակում 4% հավելյալ տնտեսական աճ, ամենաընդհանուր ձևով ձևակերպվում է այսպես. որ, եթե կնքվում է պայմանագիր Մաքսային միությանը միանալու մասին, դրա շնորհիվ տնտեսության մեջ առանց հավելյալ քայլերի, այլ հավասար պայմաններում ներկա վիճակը պահպանելով, 2 տարի հետո Հայաստանը տարեկան ունենալու է լրացուցիչ 4% տնտեսական աճ [**6**]: Համապատասխան ցուցանիշը ՀՀ-ում 2015-2019թթ-ին միջինացված եղել է 5.3% (տե՛ս գծապատկեր 1):

Այս ամենի հետ հանդերձ, Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին ունի նաև բացասական կողմեր [**7**, էջ 70-75]:, մասնավորապես՝ առաջ եկան կարծիքներ առ այն, որ ԵՄ Արևելյան համագործակցության ձևաչափը և ԵԱՏՄ-ին անդամակցելու խնդիրը միմյանց հակասող են, սակայն ԵԱՏՄ-ին անդամակցելու որոշումն ընդունելուց ի վեր Հայաստանի այն քաղաքական շրջանակներում, որտեղ ավելի իրատեսական են մոտենում խնդիրներին, առաջ քաշվեց այն տեսակետը համաձայն որի եվրոպական և եվրասիական ձևաչափերում ինտեգրման գործընթացները միմյանց փոխլրացնող են, այլ ոչ՝ հակասող: Անհրաժեշտությունն է թելադրում Հայաստանին առավել ակտիվ մասնակցելու եվրոպական և եվրասիական ինտեգրացիոն գործընթացներին, ինչն էապես կբարձրացնի Հայաստանի անվտանգության մակարդակը:

Ամփոփելով և վերացարկվելով առկա և՛ դրական, և՛ բացասական կողմերից՝ ամենաընդհանուր ձևով կարելի է նշել, որ յուրաքանչյուր երկրի, այդ թվում Հայաստանի, համար այս կամ այն ինտեգրացիոն միավորմանն անդամակցության կամ համագործակցության ժամանակ անհրաժեշտ է տալ համալիր գնահատական, այսինքն՝ հաշվի առնել թե որքանով է այդ քայլը մեծացնում երկրի անվտանգության աստիճանը, մասնավորապես՝ նրա տնտեսական անվտանգության աստիճանը,

որքանով է ինտեգրումը նպաստում ՀՆԱ աճին, նրա կառուցվածքի բարելավմանը, արտահանման աճին ու առևտրային հաշվեկշռի պակասուրդի հիմնախնդրի լուծմանը, նորարարությունների ունիֆիկացմանը և, իհարկե, ինչպես է դա անդրադառնում բնակչության կենսամակարդակի բարձրացման և զբաղվածության հիմնախնդրի լուծման վրա [**8**, էջ 56]:

Ակնհայտ են ինտեգրման այն առավելությունները, որոնք կարող են ամրապնդել Հայաստանի դիրքերը՝ հաշվի առնելով մակրոտնտեսական խնդիրների լուծման անհրաժեշտությունը: Թե որքանով կհաջողվի իրացնել այս ներուժը, մեծապես կախված է առկա առանցքային խնդիրների (տրանսպորտ, «վրացական հարց», աշխատանքային միգրացիայի օրինականացում և սահմանափակումների վերացում, երկրի ներդրումային գրավչության ավելացում, հարկային համակարգի ներդաշնակեցում և այլն), ՀՀ համապատասխան մարմինների կողմից տրվող, օպտիմա՛լ լուծումներից:

Ինտեգրացիոն միավորման շրջանակներում տնտեսական համագործակցության զարգացումը, որը իրենից ենթադրում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ, անհնար է իրականացնել առանց համաձայնեցված և ներդաշնակ հարկային քաղաքականության իրականացման:

Ներկայում ԵԱՏՄ անդամ բոլոր երկրները հարկային օրենսդրության բարեփոխումների այս կամ այն փուլում են գտնվում: Հարկային օրենսդրությունների՝ ընթացքում գտնվող բարեփոխումները գնում են ներդաշնակեցման ուղղությամբ, քանի որ միայն այդ պայմաններում է հնարավոր կապիտալի, ապրանքների, ծառայություննե- րի ազատ տեղաշարժը և մրցակցային պայմանների հավասարեցումը [**7**, էջ 613-621]:

Մաքսային մուտքերը և անուղղակի հարկերը Հայաստանի բյուջեում ունեն առանցքային նշանակություն, և, այս առումով, ԵԱՏՄ-ին անդամակցությունից ստացված էֆեկտը միանշանակ չէ: Իրավիճակը խնդրահարույց է հատկապես ԱԱՀ-ի դրույքաչափերի՝ միության անդամ երկրներում առկա տարբերություններում(տե՛ս գծապատկեր 2):

Ըստ 11.12.2009 թ. ընդունված կարգի, ԱԱՀ պետք է վճարվի այն երկրի կանոններով և դրույքաչափերով, որտեղ իրացվում է տվյալ ապրանքը կամ ծառայությունը, այսինքն՝ «նշանակման երկիր» սկզբունքով [**9**]. Այստեղ առաջանում է տարբեր դրույքաչափերի խնդիրը, ինչի էֆեկտն անհնար է լիովին չեզոքացնել, քանի որ դրանց լիարժեք համահարթեցումն իրատեսական չէ:

Մաքսային միության անդամ երկրներում հարկային հիմնական դրույքաչափերը, մյուս հիմնական հարկատեսակների դեպքում նույնպես, միմյանցից էապես տարբերվում են, սակայն անուղղակի հարկերի գանձման համակարգի ներդաշնակեցումն է առաջնային անհրաժեշտություն, այն պատճառով, որ դրանք մեծ ազդեցություն ունեն գնագոյացման վրա և կազմում են ԵԱՏՄ բոլոր անդամ պետությունների հարկային մուտքերի գերակշիռ մասը [**10**]: Անուղղակի հարկերի ներդաշնակեցման հիմնական ուղղություններն են՝

- հարկերի հաշվարկում և գանձում «նշանակման երկիր» սկզբունքով, կրկնակի հարկման բացառում,
- ԵԱՏՄ տնտեսական տարածքում ԱԱՀ-ի կիրառվող դրույքաչափերի աստիճանական մերձեցում,
- հարկային և մաքսային վարչարարության կատարելագործում և միասնականացում,
- մաքսային տարածք ապրանքների ու ծառայությունների ներմուծման դեպքում հարկման բազայի որոշման նույնական եղանակի սահմանում,
- ներմուծվող և արտադրվող ապրանքների ակցիզային հարկի դրույքի աստիճանական համահարթեցում,
- ենթաակցիզային ապրանքների ցանկի և հաշվարկման մեթոդաբանության միասնականացում:

Ինտեգրման զարգացման բոլոր փուլերում պետք է շեշտադրել հարկային վարչարարության գործընթացների ներդաշնակեցումը, քանի որ կողմերի հարկային ծառայությունները նոր ձևավորված իրավական դաշտում իրականացնում են համատեղ վարչարարական աշխատանք: Ներկայումս ԵԱՏՄ անդամ երկրների հարկային համակարգում առկա տարբերությունները պայմանավորված են հանրային կառավարման սկզբունքների տարբերությամբ, սակայն անդամակցության մասին պայմանագրում նշվում է, որ միության երկրները պետք է կիրառեն միասնական տնտեսական քաղաքականություն [**11**]: Միության գերագույն մարմինն իրավունք ունի ընդունել հարկաբյուջետային, դրամավարկային, տընտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված քաղաքականության մասին որոշումներ, որոնք պետք է կիրառվեն անդամ բոլոր երկրներում:

Կարևորելով Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հարկային քաղաքականության, հարկային դրույքաչափերի համահարթեցման անհրաժեշտությունը և, եթե տանենք զուգահեռներ ՀՀ-ում կիրառվող հարկային

հիմնական դրույքաչափերի և անդամ երկրների հիմնական դրույքաչափերի միջև, ապա այդ համեմատական վերլուծությունը ցույց կտա, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող այլ երկրներում հարկային հիմնական դրույքաչափերը համեմատաբար ցածր են ՀՀ-ում գործող համապատասխան դրույքաչափերից, իսկ ամենաթեթև հարկային բեռը միության անդամ երկրներից ունեն Ղրղզստանն ու Ղազախստանը: ԱԱՀ-ի ամենացածր դրույքաչափը, միության անդամ երկրներից, վերոնշյալ երկրներում է կիրառվում, որը կազմում է 12% [**12**, էջ 64]:

Վերոնշյալ դրույքաչափը ՌԴ-ում կիրառվում է բավականին տարբերակված. այսպես՝ հիմնական ապրանքների համար կիրառվում է 18%, որը արդեն իսկ ցածր է ՀՀ-ում առկա համապատասխան ցուցանիշից, իսկ մի շարք ապրանքների իրացումը (սննդամթերք, մանկական պարագաներ, դեղորայք և այլն) ՌԴ-ում հարկվում է ԱԱՀ-ի 10% դրույքաչափով, իսկ սա նշանակում է, որ Հայաստանից Ռուսաստան սննդամթերք, մանկական ապրանքներ դեղորայք և այլն արտահանելիս, գումարելով նաև միջինացված տրանսպորտային ծախսերը, որոնք, ինչպես արդեն նշել եմ, տրանս պորտային շրջափակմամբ պայմանավորված, ավել են 30-35%-ով, միևնույնն է տվյալ արտադրանքի գինը կարող է ավելի մրցունակ լինել ՌԴ շուկայում, քան ՀՀ շուկայում, քանի որ ՌԴ-ում հարկային բեռը գոնե ԱԱՀ-ի մասով առնվազն 10%-ով ցածր է ՀՀ-ից:

Բացի վերոնշյալից, խնդիրներ առկա են նաև սննդի արդյունաբերության ոլորտում, այսպես՝ տեղական արտադրող/վերամշակողները մեր երկրում գյուղացուց գնված ապրանքների մասով իրավունք չունեն իրականացնել ԱԱՀ դեբետագրում, քանի որ գյուղացիական տնտեսություններն ազատված են այդ հարկից, իհարկե հարկերից ազատումը վերաբերում է այն գյուղացիական տնտեսություններին, որոնց տարեկան շրջանառության ծավալը չի գերազանցում համապատասխան շեմը, սակայն այս հանգամանքը չի մեղմացում առկա խնդիրը, այն պատճառով, որ թերևս հիմա այն գյուղացիական տնտեսությունները, որոնց շրջանառության ծավալը գերազանցում է համապատասխան շեմը տեսանելի չեն: Այս պարագայում՝ ՀՀ-ում արտադրվող սննդամթերքն ավելի թանկ և անմրցունակ է: Միևնույն ժամանակ՝ գյուղացիական տնտեսություններին հարկային դաշտ բերելու որևէ փորձը կարող է մեծ դժգոհություններ առաջացնել և նպաստել արտագաղթին:

Այս պատճառով՝ գյուղացիական տնտեսություն արտադրող/վերամշակող սպառող շղթայում անհրաժեշտ է կիրառել այնպիսի ճկուն, օպտիմալ հարկային քաղաքականություն, որ և՛ գյուղացիական տնտեսությունը հաշվառվի հարկային համակարգում, և՛ արտադրողը չտուժի, և՛ սպառողական վերջնական գները լինեն մրցակցային՝ ԵԱՏՄ անդամ երկրներում, մասնավորապես՝ ՌԴ-ում. այս, նախապատվություն տվող, առանձնացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ միության անդամ երկրներից Ռուսաստանն է Հայաստանի Հանրապետության առևտրային հիմնական գործընկերը:

Վերոնշյալ հանգամանքները և առկա խնդիրները կարող են անհավասար պայմաններ առաջացնել միության անդամ երկրների ապրանքային շուկաներում, մասնավորապես՝ այն ապրանքային շուկաներում, որոնց համար անդամ երկրներում կիրառվում են արտոնյալ դրույքաչափեր: Ինչպես արդեն տարված համեմատականները ցույց տվեցին, հարկային բեռը ԵԱՏՄ անդամ երկրներից ամենաբարձրը ՀՀ-ում է, որի պատճառով, այլևս լինելով միության անդամ, գտնվում ենք ոչ շահեկան վիճակում:

Այս առումով, ինչպես նաև հիմք ընդունելով ԱԱՀ կիրառման մեկնաբանությունը, առ այն, որ այն սպառման հարկ է, իսկ ՌԴ-ում, նաև հաշվի առնելով սննդամթերքի, մանկական պարագաների և բժշկական ապրանքների սոցիալական կարևորությունը, այդ ապրանքների վրա սահմանվում է ԱԱՀ-ի տարբերակված դրույքաչափ, մեր երկրում նույնպես անհրաժեշտ ենք համարում ռուսական փորձի ներդրումը, իսկ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող ընկերությունների համար անհրաժեշտ է սահմանել ԱԱՀ-ի 10% դրույքաչափ:

ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցումը կնպաստի մեր երկրում արտադրանքի գնային և շահութաբերության հավասար պայմանների ստեղծմանը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համեմատ:

Ի դեպ, բացի ԱԱՀ-ի արտոնություն ունեցող ապրանքների՝ ավելի ցածր ԱԱՀ-ի դրույքաչափից, ինչպես արդեն արծարծվել է, մնացած ապրանքներից գանձվող ԱԱՀ-ի դրույքաչափը ևս Ռուսաստանում 2%-ով ցածր է ՀՀ համապատասխան դրույքաչափից:

Այսպիսով, հաշվի առնելով ԱԱՀ-ի տնտեսական, սոցիալական, առևտրային նշանակությունը՝ անհրաժեշտություն է ԱԱՀ-ի մասին իրավական ակտերում փոփոխությունների, ներդաշնակեցումների կատարումը: Ընդ որում, դրանք պետք է կայանան ոչ թե միայն ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման մեջ, այլ, պատեհ և հետևողական քայլերով, դրա 10-25%-ի սահմաններում դիֆերենցման մեջ: Նման մոտեցումը թույլ կտա հնարավորինս ընդլայնել

ԱԱՀ-ի հարկման բազան և էականորեն ավելացնել պետական բյուջեի հարկային մուտքերը: Մասնավորապես, բնակչության համար առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև տնտեսության գերակա ուղղությունների զարգացման ծրագրերի իրագործման նկատմամբ պետք է կիրառել ԱԱՀ-ի ցածր՝ 10-20 տոկոս, իսկ շքեղության, ոչ առաջին անհրաժեշտության առարկաների և ծառայությունների համար բարձր՝ 20-25 տոկոս դրույքաչափ, ինչը կնպաստի նաև հարկային բեռի՝ ի օգուտ ցածր եկամուտ ստացողների բաշխմանը:

Ամփոփելով կարելի է նշել, որ հաշվի առնելով միության անդամ երկրների տնտեսությունների խորացող փոխադարձ կախվածության աճը, ինտեգրացիոն գործընթացների միկրո և մակրոմակարդակներում զարգացումը՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է կանոնակարգի հարկային հարաբերությունները Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների, ինչպես նաև Վրաստանի, Իրանի Իսլամական Հանրապետությունների և Եվրամիության երկրների հետ: Ակնհայտ է, որ այդ հարաբերություններում ՀՀ-ն պետք է իրականացնի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ճկուն քաղաքականություն, որում, միաձանակ, մեծ դերակատարություն ունի նաև արդյունավետ և օպտիմալ հարկային քաղաքականության վարումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գալոյան Տ. Ռ, Թադևոսյան Զ. Ա.** Միջազգային տնտեսագիտություն: - Եր.: 2018,
2. **Հուսեյնով Բ.**, Գլոբալացման մարտահրավերները և ինտեգրացիոն գործընթացների ուժեղացումը, «21-րդ ԴԱՐ», 2013,
3. **Մելքումյան Մ. Ս. և ուրիշներ**, «ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության անդամակցության պայմաններում»: - Եր.: Տնտեսագետ, 2015,
4. Bertelsmann, Transformation Index 2006, www.bti-project/BTI_2006_Armenia.pdf,
5. http://expert.ru/2014/01/16/oboyudnaya-vyigoda/,
6. **Թավադյան Ա.**, «Մաքսային միությունը Հայաստանին տալիս է տնտեսական անվտանգություն, խոշոր ներդրումներ և զբաղվածության աճ»
7. Գիտելիք, Նորաստեղծություն և Զարգացում: ՀՊՏՀ 25-րդ Գիտաժողովի նյութեր ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2015, https://asue.am/upload/files/II_Baj._tarmacvac.pdf
8. **Թավադյան Ա.**, Ինտեգրացիոն գործընթացների իրական հնարավորությունները, «21-րդ ԴԱՐ», 2014, թիվ 5 (57),
9. «О порядке взимания косвенных налогов при выполнении работ, оказании услуг в Таможенном союзе», http://www.eurasiancommission.org,
10. **Ермекбаева Б. Ж.**, Проблемы гармонизации налоговых систем в рамках ЕврАзЭС // Publishing house Education and science s.r.o. URL: http://www.rusnauka.com/10._ENXXIV_ 2007/Economics/21744.doc.htm,
11. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120340
12. **Малис Н., Грундел Л.**, Горохова Н., Актуальные проблемы налогового администрирования НДС. “Налоговый вестник”, № 12, 2015,
13. Финансовая статистика Евразийского экономического союза. Оперативные данные за 2017 год. Статистический сборник; Евразийская экономическая комиссия. - М., 2018, http://www.eurasiancommission.org,

Сдана/Հանձնվել է՝ 12.07.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 15.07.2020
Принята/Ընդունվել է՝ 17.07.2020

Սոցիալական մեդիա մարքեթինգի տեխնիկական հիմնախնդիրները Հայաստանում

Գրիգորյան Հ. Ա.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ասպիրանտ (Երևան Հայաստան)
hayk.grigoryan.1a@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *սոցիալ մեդիա մարքեթինգ, գուգլ, սինթետիկ օգտատերեր, լոկալիզացիա, յութուբ*

Технические проблемы социального медиа маркетинга в Республике Армения

Григорян А. А.
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
hayk.grigoryan.1a@gmail.com

Аннотация: Маркетинг в социальных медиа, который является одной из важнейший отраслей цифрового маркетинга, - одна из самых быстро расширяющихся ветвей маркетинга, и год от года выявляются новые тенденции его развития. Однако в этой отрасли, оказывающей большое влияние на эффективность бизнеса, имеются существенные проблемы в Армении. Исходя из приоритетов решения этих проблем, представители Правительства РА начали новый этап переговоров с руководством инженерной части компании Google. В рамках этой статьи проведено исследование вышеуказанных проблем, представлены препятствующие развитию сферы вызовы и возможные методы их решения.
Ключевые слова: Маркетинг в социальных сетях, Google, синтетические пользователи, локализация, YouTube

The Main Technical Issues of Social Media Marketing in Armenia

Grigoryan H. A.
ASEU (Yerevan, Armenia)
hayk.grigoryan.1a@gmail.com

Abstract: Social media marketing being one of the most important aspects of digital marketing is also the fastest growing one each year showing new tendencies for future development. Though the field has a huge impact on the business productivity it appears to face essential challenges in the way of its development in Armenia.
And due to the urgency of these problems the representatives of the Armenian government started a new stage of negotiations with the upper management of Google's engineering department. In the scopes of this article a detailed research on the above mentioned problems is conducted alongside with defining the challenges of the field's development and presenting the possible solutions to address the issues.
Keywords: Social media marketing, Google, synthetic users, localization, YouTube

2018-ի հոկտեմբերից 2019-ի հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում աշխարհում սոցիալական մեդիայի օգտատերերի թիվն աճել էր 328 միլիոնով (յուրաքանչյուր 10 վայրկյանը մեկ գեներացվում է 10 նոր սոցիալական մեդիա հաշիվ) [**1**]:

Հայաստանում սոցիալ մեդիայից օգտվողների թիվը նույնպես տարեց տարի աճում է: 2020 թվականի դրությամբ Հայաստանում օգտատերերի թիվը 1.5 միլիոն է, նախորդ տարվա համեմատ օգտարերերի թիվը աճել է 10 տոկոսով (մոտ 139 հազար հաշիվ) [**2**]:

Վերոնշյալ վիճակագրությունը փաստում է սոցիալական մեդիա մարքեթինգի դերի տարեցտարի կարևորման հանգամանքը: Հայաստանում ոլորտի զարգացման մեծ նախադրյալներ կան, սակայն առկա են որոշակի հիմնախնդիրներ, որոնք առանձնահատուկ են ՀՀ-ում իրականացվող սոցիալական մեդիա մարքեթինգին:

Հայաստանում ոլորտի զարգացմանը խոչնդոդող այդ հիմնախնդիրներից է Google–ի ծրագրայի աղապտացիայի (լոկալիզացիայի) բացակայությունը: Վերջինիս ծառայությունների մի մասը հասանելի չեն, տեղայնացված չեն հայաստանյան թվային հարթակների համար: Սրանց բացակայությունն էական նշանակություն ունեն սոցիալական մեդիա մարքեթինգի զարգացման հարցում:

Այս հարցին առնչվող մի շարք հիմնախընդիրնեի հնարավոր լուծումներ գտնելու նպատակով 2019 թվականի ապրիլին ՀՀ տրանսպոր-

տի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Հակոբ Արշակյանը հանդիպել է Google ընկերության ինժիներական մասի տնօրեն Սառա Քլատերբակի հետ [**3**]: Այս հանդիպումը կարևորվում է հատկապես թվային մարքեթինգի զարգացման տեսանկյունից դիտարկելիս, քանի որ նշված խնդիրներն ուղղակիորեն ազդում են վերջինիս և դրա ենթաճյուղ հանդիսացող սոցիալական մեդիա մարքեթինգի արդյունավետության, մարքեթինգային թվային գործիքակազմի զարգացման և ընդլայնման հնարավորությունների վրա: Այդ խնդիրներից են՝

- Ակտիվացված չէ հայաստանյան թրենդերի հատվածը
- Ակտիվացված չէ մոնիտիզացիան
- Google AdSense-ը հայալեզու կենտենտը չի ընդունում

Google Trends-ը հնարավորություն է տալիս թվային մարքեթինգի մասնագետին կատարել առավել արդյունավետ թիրախավորում, լսարանի սեգմենտավորում և բազմաբնույթ հետազոտություններ [**4**]: Սրա միջոցով հնարավոր է բացահայտել նշված ժամանակահատվածում և տարածաշրջանում սպառողների հետաքրքրություններն ու նախընտրությունները:

Մոնիտիզացիայի բացակայությունը հաջորդ հիմնախնդիրն է: Մոնետիզացիայի ակտիվ լինելու պարագայում հեղինակը եկամուտ է ստանում տեսանյութի յուրաքանչյուր դիտումից նախապես սահմանված կանոնակարգի և չափանիշներին համապատասխան [**5**]: Հայաստանում մոնետիզացիայի առկայությունը հնարավորություն կտա Յութուբ (Youtube) սոցիալական հարթակի զարգազմանը, վիդեո մարքեթինգի և վլոգերների առաջխաղացմանը: Սեցիալական մեդիա մարքեթինգի մասնագետները հնարավորություն կունենան վերաֆինանսավորել մարքեթինգային արշավները: Որպեսզի առավել պատկերավոր լինի հնարավոր վերաֆինանսավորման հեռանկարը ներկայացնենք ցուցանիշները [**6**]: Google-ը վերաբաշխում է AdSense-ի եկամտի 68 տոկոսը գովազդի հեղինակներին: Կարևոր փաստ է նաև, որ յութուբում միավոր տեսանյութի յուրաքանչյուր 1000 դիտումի համար հեղինակը վաստակում է 3-5 ԱՄՆ դոլար: Նշենք, որ Հայստանում բազմաթիվ են մեծ դիտումներ ապահոված գովազդային տեսանյութերը, առանձին դեպքերում ընդհուպ մինչև 2 մլն դիտում [**7**]:

Google AdSense-ը հայալեզու կենտենտ չընդունելը սոցիալ մեդիա մարքեթինգի մասնագետների համար մեծ խնդիրներ է ստեղծում: Այս պատճառով հայալեզու կոնտենտը չի խրախուսվում, գովազդի համար հասանելի չէ հայերենը, ինչի արդյունքում բիզնես ոլորտի համար նախընտրելի չէ այս հարթակը:

Որոնողական համակարգերում և մի շարք սոցցանցերում մարքեթինգային արշավներ իրականացնելիս տեղադրվող գովազդի կոնտենտը վերահսկվում է Google-ի կողմից [**8**]: Վերջինս կարող է չհաստատել կամ կասեցնել այն: Քանի որ հայալեզու կոնտենտն անհասկանալի է Google-ի ընթերցման համակարգի համար, հնարավոր են պարբերաբար մերժումներ և վերաակտիվացման երկարատև բանակցություններ: Սրանք կարող են թվային արշավների արդյունավետությունն իջեցնել ձգձգումների, պլանավորված կոնտենտի արդիականությունը կորցնելու և մի շարք այլ պատճառներով:

Հայալեզու կոնտենտի հետ կապված խընդիրներից է նաև բողոքարկումների դեպքում քննության գործընթացի դժվարությունները: Սոցիալական հարթակներում կազմակերպությունների միջև մրցակցության պայմաններում հնարավոր է բողոքարկել մրցակից կազմակերպության գովազդային արշավը: Google-ին ուղարկված մի շարք բողոքների, Google-ի համար գովազդի գրավոր լեզվի անհասկանալի լինելու արդյունքում հնարավոր է որոշակի ժամանակահատվածով կասեցվի գովազդատուի համար սոցիալ մեդիա մարքեդինգում կիրառվող գործիքակազմի օգտագործման հնարավորությունը: Այս պարագայում տվյալ կազմակերպությունը որոշակի ժամանակահատվածով զրկվում է խնդրահարույց գովազդի տեղադրված սոցիալական հարթակում գովազդային գործունեություն ծավայելու հնարավորությունից:

Հայաստանում սոցիալ մեդիա հարթակները սովորաբար օգտագործվում են կամ անգլերենով, կամ ռուսերենով: Հայերենը տարածված չէ: Իսկ սոցիալական մեդիա մարքեթինգում իրականացվող արշավներում սպառողին հաճախ ուղորդող կոճակով մղում են գործողության: Սակայն հայալեզու կոնտենտը և գործողության մղող կոճակի լեզուն շատ հաճախ չեն համապատասխանում, ուստի հավելյալ դժվարություններ են ստեղծվում մարքեթինգային նպատակներին հասնելու գործընթացում:

Հաջորդ խնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ սոցիալական մեդիաներում կեղծ օգտատերերի առկայությունն է: 2019 թվականին Ֆեյսբուք սոցիալական ցանցը հայտնեց 2.2 միլիարդ կեղծ օգտատերերի բացահայտման մասին [**9**]: Կեղծ օգտատերերը Հայաստոնում կատարում են մի շարք գործառույթներ ինչպիսիք են՝ նախնական ակտիվություն ապահովելով գովազդներին փորձում են ազդել սոցիալ մեդիա հարթակի ալգորիթմի վրա: Կեղծ

սակային դրական մեկնաբանություններով և գնահատականներով գովազդվող ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ հասարակական կարծիք են ձևավորում: Հնարավոր է նաև հակառակը՝ մրցակից կազմակերպությունների նկատմամբ բացասական կարծիք են ստեղծում և տարածում: Հայաստանում կեղծ հաշիվները շատ են օգտագործվում քաղաքականությում: Տարբեր քաղաքական ուժեր ստեղծում են ֆեյքերի խմբեր և տարածում սեփական գաղափարախոսությունը կամ հակազդում մրցակից քաղաքական ուժին: Համաձայն հոգեբան, նեյրոլիգվիստիկ ծրագրավող և բլոգեր Մադաթյան Միհրդատի հրապարակմանը Հայաստանում կա մոտ 26 000 կեղծ օգտատեր [**10**]: 2020 թվականի հունիսի 25-ին ԱԺ-ում ելույթի ժամանակ ՀՀ վարչապետը նշեց քաղաքական ուժերից մեկի օգտագործած 3500 կեղծ հաշիվների մասին [**11**]: Ֆեյք օգտատերերի մեծ թիվը խնդիրներ են ստեղծում սոցիալ մեդիա հարթակում վիճակագրության դուրս բերման, հետազոտությունների անցկացման և տեղեկատվության ճշմարտացիության գործընթացում: Չնայած սոցիալ մեդիա հարթակները պաշտոնապես հայտարարում են իրականացվող անվտանգության աշխատանքների մասին, սակայն բազմաթիվ ելույթներ և ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ վերջիններս պարզապես թերանում են իրենց գործում:

Օրինակ 2018թ ՆԱՏՕ-ի ռազմավարական հաղորդակցության Գերազանցության կենտրոնի (NATO Strategic Communication Centre of Excellence (StratCom)) փորձագետները ներկայացրին իրենց հետազոտությունն առ այն, թե ինչքան հեշտ է գնել կեղծ հաշիվներ և ինչ դժվարությամբ են սոցիալական մեդիա հարթակները պայքարում դրա դեմ: Հետազոտությունը տեղի էր ունեցել 2019թ մայիս-օգոստոս ամիսներին: Հետազոտական թիմը Ֆեյսբուքում, Ինստագրամում, Թվիթերում և Յութուբում ներգրավածություն (engagement) գնելու համար ծախսեց 300 եվրո (160.000 դր): Այս գումարի դիմացը նրանք ձեռք բերեցին 5,100 հետևորդներ, 20,000 դիտումներ 25,750 լայքեր, 3,520 մեկնաբանություններ: Հետագայում, ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ հաշիվների մի մասը, որոնք ներգրավվել էին առաջխաղացման համար, եղել են կեղծ (մոտ 19.000 հաշիվ) [**12**]: Այդ ամբողջ ներգրավվածությունը գնելուց մոտ մեկ ամիս անց, հետազոտական խումբը կրկին ուսումնասիրեց բոլոր այդ կեղծ հաշիվների կարգավիճակը և պարզեց, որ մոտ 80% դեռ ակտիվ է: Հետագայում, նրանք տեղեկացրին խարդախ հաշիվների գոյության մասին համապատասխան հարթակներին: Իսկ վերջում տեղի ունեցավ ամենավատը. հաղորդում տալուց մեկ շաբաթ անց պարզվեց, որ կեղծ հաշիվների 95% դեռ ակտիվ էր:

Ֆեյքերը պայմանականորեն կարելի է բաժանել հինգ տեսակի՝

1. կեղծ հաշիվներ, որոնք չեն ներկայացնում որևէ անձի,
2. իրական անձանց կեղծ հաշիվներ՝ ստեղծված խարդախ օգտատերերի կողմից, սփամերներ (լցոնողներ), ովքեր պարբերաբար ուղարկում են հաղորդագրություններ, որոնք վերաբերում են բարձր եկամուտներ և գումարներ աշխատելուն,
3. համացանցային խարդախներ, ովքեր մանիպուլացնում են մարդկանց՝ նրանց վերաբերյալ անձնական բնույթի տեղեկություններ ստանալու ակնկալիքով (հիմնականում բանկային հաշիվներ),
4. Արհեստական ինտելեկտի վրա կառուցված բոտեր:

Հայաստանում հստակ հետազոտություններ չկան իրականացված, սակայն բազմաթիվ մասնագետների պնդմամբ պատկերը շատ չի տարբերվում վերոնշյալ օրինակից: Չնայած օրենսդրական որոշակի կարգավորումների, ԱԱԾ և կառավարության վերահսկողության համակարգի կատարելագործման [**13**], անվտանգության ավտոմատացման համակարգերի կիրառման, ֆեյքերի դեմ պայքարելու, լավագույն եղանակը, ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում, եղել և մնում է մեդիագրականության մակարդակի բարձրացումը հասարակության շրջանում:

Սոցիալական մեդիա մարքեթինգի խնդիրներից է նաև սոցիալական հարթակներում աշխարհի առաջատար երկրներում իրականացված ծրագրային թարմացումների ավելի ուշ հասանելիությունը: Հայ մասնագետները հնարավորություն չեն ունենում Հայաստանից օգտվել թվային մարքեթինգի գործիքակազմի նորարարական բազմաթիվ լուծումներից: Իսկ հաճախ, երբ ուշացումով հասանելի են լինում արդեն թրենդային չեն, և հայ օգտատերերի համար կարող են այլևս հետաքրքրություն չներկայացնել:

Թարմացումների հետ կապված խնդիրների լավ օրինակ է Հայաստանում Ինստագրամ շոփինգի (Instagram shopping) բացակայությունը: Այն հնարավորություն է տալիս սեփական ապրանքներն ու ծառայությունները ներկայացնել և վաճառել անմիջապես ինստագրամում [**14**]: Հաշվի առնելով, որ ինստագրամի օգտատերերի մոտ 80 տոկոսը գնում կատարելու որոշումը ընդունում է ինստագրամի օգնությամբ, այս հարթակը մեծ կարևորություն է ստանում [**15**]:

Հայաստանում ինստագրամն ունի մոտ 750 000 օգտատեր և ֆեյսբուքից հետո երկրորդ ամենաօգտագործվող սոցցանցն է [**16**]: Իսկ հայաստանյան օգտատերերի և սոցիալական մեդիա մարքեթինգի մասնագետների համար ինստագրամ շոփի հնարավորությունները հասանելի չեն:

Հարջորդ խնդիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ սոցիալ մեդիա հարթակների փոքրությունն է: Ինքնին շուկան փոքր է, ինչը մարքեթոլոգների զրկում է մի շարք հնարավորություններից՝ օրինակ ինբաունդ մարքեթինգի գործիքակազմը կիրառելուց: Հատկանշական է թիրախավորման գործընթացում կան գործիքներ, որոնք Հայաստանում հնարավոր չէ իրականացնել: Օրինակ ֆեյսբուքում թիրախավորումը ըստ սպառողների եկամուտների: Այն հիմնվելով օգտատերի ZIP կոդի վրա, միջին եկամուտներով կարողանում է ընտրել գովազդվող ապրանքի կամ ծառայության համար վճարունակ լսարան [**17**]:

Հայաստանում թվային մարքեթինգի մասնագետները շուկայի փոքրության և տեղեկատվության անհասանելիության պատճառով հնարավորություն չունեն օգտվելու այս գործիքից:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ վերոնշված խնդիրներն էական ազդեցություն են թողնում սոցիալական մեդիա մարքեթինգի արդյունավետության և զարգացման հնարավորությունների վրա: Այս խնդիրները պետության համար ռազմավարական նշանակություն ունեն, ուստի կարևորվում է միջամտությունը և աջակցությունը: Պետական կառավարման մարմինները, ոլորտի կարևորությունից ելնելով, քայլեր են ձեռնարկում այս հիմնախնդիրների լուծման ուղղությամբ՝ բանակցություններ են վարվուն Google-ի ներկայացուցիչների հետ, պետության նախաձեռնությամբ կազմվում են վերլուծական և հետազոտական խմբեր: Իրականացվող քայլերի նկատմամբ հետևողականությունը, ինտենսիվ բանակցությունները, տեխնիկական աջակցությունը և արդյունավետ վերահսկողությունը կարող են նպաստել խնդիրների լուծմանը:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. “126 amazing Social Media Statistics and Facts’’ Kit Smith, Content Writer
2. https://datareportal.com/reports/digital-2020-armenia
3.https://b24.am/economy/79810.html
4.https://newsinitiative.withgoogle.com/training/lessons?tool=Google%20Trends&image=trends
5. https://support.google.com/youtube/answer/72857?hl=en
6.https://influencermarketinghub.com/how-much-do-youtubers
7.make/#:~:text=The%20actual%20rates%20an%20advertiser,%245%20per%201000%20video%20views.
8. https://www.youtube.com/watch?v= DVZdFq6bO9o
9. https://support.google.com/adsense/answer/6242051?hl=ru
10.https://fortune.com/2019/05/23/facebook-fake-accounts-transparency-report/
11.https://www.facebook.com/M.R.Madatyan/photos/a.235362931157344 1/2484357825167255/?type=3&theater
12. https://168.am/2020/06/25/1325349.html
13. HOW SOCIAL MEDIA COMPANIES ARE FAILING TO COMBAT INAUTHENTIC BEHAVIOUR ONLINE, November 2019
14.https://help.instagram.com/191462054687226
15.https://www.oberlo.com/blog/instagram-stats-every-marketer-should-know
16.https://datareportal.com/reports/digital-2020-armenia
17.https://www.facebook.com/business/ads/ad-targeting

Сдана/Հանձնվել է՝ 21.07.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 24.07.2020
Принята/Ընդունվել է՝ 26.07.2020

Հետբացթողումային մաքսային հսկողությունը որպես հսկողության տեսակ ՀՀ-ում

Հակոբյան Հ. Ռ.
ՀՊՏՀ, Ֆինանսական ֆակուլտետի մագիստրոս (Երևան, Հայաստան)
hakobianhov@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *մաքսային հսկողություն, բացթողում, հետբացթողումային մաքսային հսկողություն, մաքսային սահման, հայտարարագրում*

Таможенный контроль после выпуска товаров, как вид контроля в Армении

Акобян О. Р.
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
hakobianhov@gmail.com

Аннотация: Важная роль в системе органов государственного управления ВЭД принадлежит таможенной службе как наиболее динамично развивающийся, в некоторых случаях доведенной до совершенства и одновременно обслуживающей участников ВЭД. В частности, в условиях загруженности таможенных границ возникает необходимость осуществлять таможенный контроль после выпуска товаров и транспортных средств. В целом таможенный контроль после выпуска товаров мощный инструмент, правильное и оптимальное применение которого исходит из общих экономических интересов. В статье я рассмотрел необходимость, специфику и применение таможеного контроля после выпуска товаров, а так же результаты, осуществленного таможенными органами. Я также рассматривал наиболее распространенные нарушения при перемещении товаров и транспортных средств через таможенную границу и возможные способы их предотвращения.
Ключевые слова: Таможенный контроль, выпуск, таможенный контроль после выпуска, таможенная граница, декларирование

Post-clearance customs control as a type of control in the Republic of Armenia

Hakobyan H. R
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
hovhakobian@gmail.com

Abstract: An important role in the system of state administration of FEA belongs to the customs service as the most dynamically developing, in some cases brought to perfection and at the same time serving FEA participants. In particular, when the customs borders are busy, it becomes necessary to carry out post-clearance control of goods and vehicles. In General, post-clearance customs control is a powerful tool, the correct and optimal use of which is based on common economic interests: In the article, I spoke about the need, features, application and results of post-clearance control carried out by customs authorities. I also touched on the most common violations when goods and vehicles across the customs border, and analyzed possible ways to prevent them.
Keywords: Customs control, release, Customs control after release, customs border, declaration

Հաշվի առնելով ՀՀ արտաքին առևտրի զարգացման ներկայիս մակարդակը, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է Համաշխարհային Մաքսային Կազմակերպությանը (ՀՄԿ), Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ) և ԵԱՏՄ լիիրավ անդամ է դրանով իսկ ունի մի շարք պարտավորություններ, Հայաստանի Հանրապետությունում նույնպես, շարունակաբար իրականացվում է մաքսային արարողակարգերի պարզեցում: Ներդրվել են ապրանքների ընտրողական զննման, ինչպես նաև ինքնահայտարարագրման համակարգեր, աշխատանքներ են տարվում մաքսային ձևակերպումների ժամանակ լրացվող ավելորդ փաստաթղթերի կրճատման, ոչ սակագնային կարգավորման միջոցների տեսակարար կշռի իջեցման ուղղություններով:

Նման պայմաններում կատարելագործման են ենթարկվել նաև մաքսային հսկողության մեխանիզմները, 2003թ.-ից սկսած ներդրվել է Հետբացթողումային մաքսային հսկողություն: Հետբացթողումային հսկողությունը Հայաստանի Հանրապետությունում սկսել է իրականացվել “ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մա-

սին” 2003թ. մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն: Նշված փոփոխությամբ, ՀՀ մաքսային օրենսգրքի 1501 հոդվածով սահմանվել է հետբացթողումային հսկողության հասկացությունը: Նշված օրենքի դրույթների կատարման ապահովման նպատակով ՀՀ ԿԱ ՄՊԿ նախագահի հրամանով 20.01.2004թ. մաքսային պետական կոմիտեի կենտրոնական ապարատի կազմում ստեղծվել է հետբացթողումային հսկողության բաժին [**1**]:

Ներկայումս ՀՀ-ում Հետբացթողումային հսկողություն իրականացնում է ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչությանը: Վարչությունը կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումն է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018թ. հուլիսի 11-ի թիվ 702-Լ որոշման համաձայն:

Հետբացթողումային հսկողության վարչության հիմնական խնդիրներն են.

1. Մաքսային ստուգման իրականացում, այդ թվում մաքսային հսկողության այլ ձևերի և մաքսային հսկողության իրականացումն ապահովող միջոցների կիրառմամբ:

2. Օրենսդրությամբ սահմանված դրույթների խախտման ռիսկերի բացահայտման նպատակով ապրանքների բացթողումից հետո վերլուծությունների իրկանացում:

3. Հետբացթողումային հսկողության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացում, այդ թվում՝ իրավական ակտերով փոփոխությունների իրականացման հետ կապված [**2**]:

Հայաստանի Հանրապետությունում մաքսային արարողակարգերը իրականացնվում է համաձայն ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի և մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքի:

Հաշվի չառնելով մաքսային օրենսդրությամբ սահմանված մաքսային հսկողության ժամկետները, մաքսային մարմինների ինչպես նաև հայտարարատուի կամ ապրանքներ տեղափոխող անձանց խնդրանքով, ապրանքների բացթողումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ստուգման, այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև մաքսային վճարների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման նպատակով մաքսային մարմինները իրավունք ունեն ստուգել հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման փաստով պայմանավորված ապրանքներ տեղափոխող անձի կողմից մաքսային օրենսդրությանը համապատասխան ստանձնած պարտավորությունների կատարման ճշտությունը: Ապրանքների բացթողումից հետո հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը, ինչպես նաև ապրանքներ տեղափոխող անձի ստանձնած պարտավորությունների կատարումը ճշտելու նպատակով մաքսային մարմիններն իրավունք ունեն ստուգել բացթողնված ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման և մաքսային սահմանով բացթողումից հետո դրանց հետագա շրջանառության վերաբերյալ տեղեկատվության աղբյուր հանդիսացող փաստաթղթերը: Մաքսային մարմինների պահանջի դեպքում ապրանքներ տեղափոխող անձը կամ հայտարարատուն պարտավոր է մաքսային մարմիններին ներկայացնել նշված փաստաթղթերը, որոնք նշված պահանջի ներկայացման դեպքում հանդիսանում են մաքսային հսկողությունն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Հետբացթողումային հսկողությունն իրականացվում է վերադաս մաքսային մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա: Հրամանն իր մեջ ներառում է հսկողությունը իրականացնող մաքսային մարմնի անունը, հայտարարատուի անվանումը, արանքները տեղափոխող անձի անունը, մաքսային մարմնի պաշտոնատար անձի կամ անձանց պաշտոնը, անուն ազգանունը, հետբացթողումային հըսկողության նպատակը, հարցերը, ժամկետը և ընդգրկող ժամանակաշրջանը: Հետբացթողումային հսկողության հրամանը 2 օրինակով տրամադրվում է հայտարարատուին կամ ապրանքներ տեղափոխող անձին: Վերջիններս պարտավոր են ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված են մաքսային հսկողության անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձին: Հետբացթողումային հսկողության հրամանով



Գծապատկեր. 2014-2019 թվականների մաքսային մարմինների կողմից իրականացված հետբացթողումային հսկողության քանակները և արդյունքները

նշված ժամկետը սահմանվում է ոչ ավելի, քան 15 անընդմեջ աշխատանքային օր [3]:

Նշենք նաև, որ հայտարարատուի կամ ապրանքներ տեղափոխող անձի մոտ սահմանված ժամկետներում միևնույն գործարքի հսկողությունն իրականացվում է մեկ անգամ: Առանձին դեպքերում, եթե առկա են մաքսային հսկողության իրականացնելու իրավական հիմքերը, ապա մաքսային մարմինները կարող են իրականացնել կրկնակի հետառաքումային հսկողություն, ինչը կարող է իրականացվել միայն ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ:

Խախտումներ չհայտնաբերելու դեպքում կազմվում է համապատասխան տեղեկանք, որտեղ նշվում է, որ որևէ խախտում չի հայտնաբերվել: Տեղեկանքում նշվում է ամսաթիվն ու տեղը, մաքսային մարմնի և ապրանքներ տեղափոխող անձի կամ հայտարարատուի անվանումները, ստուգման մասնակիցների կազմը, հետբացթողումային հսկողության նպատակը, ժամկետը, արդյունքները: Մաքսային մարմինները իրավունք ունեն զննելու նաև այն ապրանքներն ու տրանսպորտային միջոցներն, որոնց կապակցությամբ անց է կացվում հետբացթողումային հսկողությունը, եթե ապրանքներ տեղափոխող անձը կամ հայտարարատուն ունի այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները զննման ներկայացնելու հնարավորություն:

Մաքսային հսկողության իրականացման ժամանակ ապրանքներ տեղափոխող անձինք իրավունք ունեն քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվելու փաստաբանների, թարգմանիչների, մասնագետների կամ այլ ծառայություններից, ծանոթանալու մաքսային հսկողության նյութերին, բողոքարկելու մաքսային մարմինների պաշտոնատար անձանց ոչ օրինական գործողությունները [**4**]:

Կարող ենք ասել, որ հետբացթողումային հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման օրինականության ստուգման, այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների հաշվառման, ինչպես նաև մաքսային վճարների հաշվարկման և վճարման ճշտության ստուգման նպատակով՝ հայտարարագրում նշված տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու միջոցով: Նշված նպատակներին հասնելու համար նախ իրականացվում են վերլուծական աշխատանքներ բացահայտելու համար այն բաձր ռիսկային ոլորտները, որտեղ հնարավոր են մաքսային կանոնների խախտումներ և որպես հետևանք մաքսային վճարների թերգանձումներ:

Խարդախությունների ամենատարածված ձևերն են՝

✓ Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի որոշումը: Շատ երկրներում պաշտոնական և ոչ պաշտոնական ձևով կիրառվում են, այսպես կոչվող, նվազագույն հսկիչ գներ: Ավելի զարգացած երկրներում գոյություն ունեն իրավական մաքսային արժեքը որոշելու կամ ստուգելու եղանակներ: Հայաստանի պարագայում մաքսային արժեքի իրական չափի որոշումը պահանջում է երկար ժամանակ և միջոցներ, առավել ևս, որ արտաքին առևտրի մասնակիցներից շատերը իրենց գործարքները իրականացնում են կանխիկ ձևով, և փաստորեն շրջանցում են բանկային համակրգը, և այդպիսի գործաքներից շատերը որևէ տեղ իրենց արատցոլումը չեն գտնում:

✓ Նախատեսված են որոշակի արտոնություններ ԱՊՀ երկրներից ծագած ապրանքների ներմուծման դեպքում, կապված «Ազատ առևտրի մասին» միջպետական համաձայնագրից: Խնդիրներն առաջանում են, երբ ապրանքի ծագման երկրի ճիշտ հայտարարագրումից խուսափելու և համապատասխան մաքսային արտոնություններից օգտվելու նպատակով ապրանքի փաթեթավորման կամ պիտակների վրա որպես ծագման երկիր փորձում են նշել, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունը, մինչդեռ իրականում ապրանքը ծագում է բոլորովին այլ երկրից:

✓ Որպես հաջորդ բարձր ռիսկային ոլորտ անհրաժեշտ է առանձնացնել ապրանքների ճիշտ դասակարգումը: Կան մի շարք ապրանքատեսակներ, որոնք դասակարգելիս դրանց կարելի է տալ երկու ծածկագիր: Հիմնականում դա կախված է տվյալ ապրանքի նյութից կամ նպատակային նշանակությունից, իսկ ելնելով որոշ ապրանքների բնույթից, իրականում այն որոշելը բավականին բարդ է: Նման բարձր ռիսկային ապրանքների տեսականին և ընհանուր ապրանքաշրջանառության մեջ դրանց տեսակարար կշիռը, կապված մաքսատուրքերի և այլ մաքսային վճարների դրույքաչափերից, անընդհատ փոփոխվում են:

✓ Ֆիզիկական քանակներ, երբ հայտարարագրված ապրանքների ֆիզիկական քանակներն ավելի քիչ են փաստացի տեղափոխված ապրանքների քանակներից:

Նշված պարամետրերով խախտումների բացահայտման համար վերլուծություններն իրականացվում են մի շարք ուղղություններով, մասնավորապես.

Ըստ ապարանքների ծագման և առաքման երկրների,

Ըստ որոշակի ապրանքատեսակների,

Ըստ ապրանքների քանակների

Ըստ ներմուծող / արտահանող կազմակերպությունների,

Ըստ ռիսկի չափանիշի

Ըստ մաքսային հսկողության

Ըստ ձևակերպող մաքսային մարմինների:

Իրականացվող վերլուծությունների արդյունքում, ելնելով վերը շարադրված պարամետրերի համադրումից, առանձնացվում են այնպիսի գործարքներ, որոնցում հնարավոր է մաքսային կանոնների խախտումներ: Առանձնացված գործարքների ավելի մանրամասն ուսումնասիրության արդյունքում բավարար հիմքեր ունենալու ժամանակ սկսվում է հետբացթողումային հսկողություն, կամ նախապատրաստվում են համապատասխան հարցումներ՝ ապրանքների արտահանման երկրների մաքսային մարմիններին, որոնցից իրական հաշիվ ապրանքագրերի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա էլ սկսվում է հետբացթողումային հսկողությունը:

Անրադառնանք հետբացթողումային հսկողության ցուցանիշներին: Միայն 2019 թվականի ընթացքում հետբացթողումային հսկողության վարչության կողմից կատարվել է թվով 76 ստուգում, (ինչը երկու անգամ ավելի շատ է քան 2014 թվականին) որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկված գումարը կազմել է 304,5 մլն դրամ մաքսային վճարներ և տույժեր, որից ՀՀ պետական բյուջե է վճարվել 224,5 մլն դրամ:

2019 թվականի ընթացքում Պեկ մաքսանենգության դեմ պայքարի վարչության և պեկ այլ ստորաբաժանումների կողմից իրականացված գործողությունների այդ թվում՝ օպե-

րատիվ-հետախուզական միջոցառումների և մաքսային հսկողության հետ կապված գործառույթների արդյունքում արձանագրվել է մաքսային իրավախախտումների 202 դեպք, որը 2018 թվականի համեմատությամբ 22 %-ով ավել է:

Հայտնաբերված 202 դեպքից 146-ը հանդիսացել են մաքսանենգության դեպքեր, որոնցով հարուցվել են քրեական գործեր, իսկ 56 դեպքով սկսվել է վարչական վարույթ [**5**]:

Նշենք նաև, որ մաքսային արարողակարգերի և ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման նպատակով նախատեսվում է ներդնել մաքսային հայտարարագրման ժամանակ ընտրվող մաքսային զննման «Կապույտ ուղի» ընթացակարգը, որը կծառայի որպես *հետբացթողումային ստուգման փուլ*: Որի նպատակը կլինի կրճատելու ապրանքների նախաբացթողումայն հսկողության ժամանակահատվածը և ընդլայնելու հետբացթողումային հսկողության շրջանակները: Մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման առումով շատ կարևոր է մաքսային ձևակերպումների վրա ծախսվող ժամանակահատվածի կրճատում, ուստի «Կապույտ ուղու» ներդրումը դրական նշանակություն կարող է ունենալ: Ներկայումս մաքսային հայտարարագրը մաքսային մարմինների կողմից ընդունվելուց և գրանցվելուց հետո հաջորդում է ընտրանքի փուլը, որի ժամանակ ընտրվում է մաքսային հսկողության 3 հետևյալ ուղիներից մեկը՝

- «Կանաչ ուղի».Հայտարարագրված ապրանքները զննման ենթական չեն,
- «Դեղին ուղի».Հայտարարագրված ապրանքները ենթակա են մասնակի զննման,
- «Կարմիր ուղի». Հայտարարագրված ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են մանրակրկիտ զննման:

Մաքսային համակարգի զարգացման համատեքստում կարևորվում է նաև հետբացթողումային հսկողության համակարգի կատարելագործումը՝ հաշվի առնելով այն, որ վերջինս կարող է նպաստել ներմուծման պահին մաքսային սահմանին իրականացվող հսկողությունը նվազագույնի հասցնելուն: Այս իմաստով, հատկանշական է այն, որ որոշ հսկողական գործառույթներ մաքսային սահմանից աստիճանաբար դուրս բերելը և դրանք հետբացթողումային հսկողության շրջանակներում տեղայնացնելը միանգամայն համահունչ է այս ոլորտում միջազգային լավագույն փորձին և կարող է հաջողությամբ իրականացվել նաև մեր երկրում: Ունենալով հետբացթողումային հսկողության նման հզոր մաքսային գործիք անհրաժեշտություն է առաջանում այն կիրառել ըստ նպատակի, որի արդյունքում անձինք ովքեր հակված են մաքսային սահմանով տեղափոխել անօրինական և անհայտ ծագման ապրանքներ ու տրանսպորտային միջոցներ վստահ լինեն որ չեն խուսափելու հետբացթողումային մաքսային հսկողությունից: Իսկ օրինապահ տնտեսվարողներին հնարավորություն կտա ավելի արագ փոխադրում իրականացնել մաքսային սահմանով:

Ամփոփելով այս ամենը կարող ենք ասել, որ հետբացթողումային մաքսային հսկողությունը տնտեսական անվտանգության սյուներից մեկն է և, որ վերջինիս ճիշտ և արդյունավետ կառավարումը բխում է ազգային անվտանգության շահերից:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2003թ մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն:
2. «ՀՀ ՊԵԿ հետբացթողումային հսկողության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» 2019 թ. Փետրվարի13-ի, ՊԵԿ նախագահի համար 91 հրաման:
3. "ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2003թ մարտի 31-ի թիվ ՀՕ-537-Ն օրենքի համաձայն:
4. **Ճուղուրյան Ա.** «Մաքսային գործի հիմունքներ» ուսումնական ձեռնարկ էջ 125,126 Երևան 2007 թ.
5. https://www.petekamutner.am/(Տարեկան հաշվետվություններ 2014-2019)

Сдана/Հանձնվել է՝ 23.06.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 25.06.2020
Принята/Ընդունվել է՝ 29.06.2020

Համայնքների խոշորացման ազդեցությունը համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի վրա (Շողակաթ խոշորացված համայնքի օրինակով)

Խաչատրյան Հ. Գ.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ամբիոնի ասպիրանտ (Երևան, Հայաստան)
khachatryan.hamazasp@mail.ru

Վճռորոշ բառեր՝ *տեղական ինքնակառավարում, վարչատարածքային բարեփոխումներ, ապակենտրոնացում, համայնքների խոշորացում, բյուջետային ծախսեր*

Влияние расширения сообществ на бюджетные доходы и расходы сообщества (по модели расширенного сообщества Шогакат)

Хачатрян А. Г.
Аспирант кафедры менеджмента,
Армянский госсударственный экономический университет (Ереван, Армения)
khachatryan.hamazasp@mail.ru

Аннотация: Административно-территориальные реформы, начатые в Республике Армения, направлены на укрепление потенциала сообществ путем расширения сообществ и повышения уровня социально-экономического развития.
5 ноября 2017 года в Гегаркуникской области были реализованы 4 программы по расширению общин, в результате чего была сформирована расширенная община Шогакат.
Изучение бюджетных расходов расширенного сообщества Шогакат за последние два года показывает, что изменение состава и структуры бюджетных расходов частично повысило эффективность расходов.
Однако следует отметить, что, когда речь идет об эффективности процесса расширения, следует учитывать его социальное влияние на общество.
Ключевые слова: местное самоуправление, административно-территориальные реформы, децентрализация, расширение сообществ, расходы бюджета

The impact of communities enlargement on community`s revenue and expenditure Budget (following the model of enlarged community Shoghakat)

Khachatryan H. G.
PhD student at management department,
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
khachatryan.hamazasp@mail.ru

Abstract; The administrative-territorial reforms launched in the Republic of Armenia are aimed at strengthening the capacities of the communities by enlarging the communities and raising the level of socio-economic development.
On November 5, 2017, in Gegharkunik region were implemented 4 community enlargement programs, as a result of which the enlarged Shoghakat community was formed.
The study of the expenditure budget of the Shoghakat enlarged community over the past two years shows that the change in the composition and structure of the expenditure budget has partially increased the efficiency of expenditures.
However, when talking about the effectiveness of the enlargement process we should take into account its social impact on the residents of the community.
Keywords: local self-government, administrative-territorial reforms, decentralization, enlargement of communities, expenditures budget

Երկրի վարչատարածքային բաժանումը առավել արդյունավետ կառավարում իրականացնելու նպատակ է հետապնդում: Հետևաբար, վարչատարածքային բաժանման հիմնական չափանիշը պետք է լինի կառավարման արդյունավետությունը: ՀՀ-ում վարչատարածքային բաժանման արդյունքում ձևավորվել են մարզերն ու համայնքները, իսկ համայնքներում իրականացվում է տեղական ինքնակառավարում, որը հանրային կառավարման համակարգի կարևորագույն բաղադրիչներից է և

երկրում ժողովրդավարության կայացման ու ամրապնդման հիմքը:

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգում առկա խնդիրները հիմնականում պայմանավորված են թույլ կարողություններ ունեցող համայնքների առկայությամբ: Հայաստանում վարչատարածքային բաժանման արդյունքում ձևավորվել են մեծ թվով փոքր համայնքներ, որոնք անկախ ֆինանսական ռեսուրսներից և բնակչության թվաքանակից ստացել են լիազորությունների նույն ծավալը և պետք է մատուցեն համայնքային նույն ծառայությունները: Հետևաբար, անհնար է պատկերացնել, թե ինչպիսի խնդիրների առաջ են կանգնում տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետ՝ ՏԻՄ) հատկապես փոքր համայնքներում:

Առհասարակ վարչատարածքային միավորները պետք է բավարարեն որոշակի պայմանների, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր է խոսել այդ միավորներում արդյունավետ կառավարում իրականացնելու հնարավորության մասին: Վարչատարածքային միավորները պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

1. Ֆիզիկական պայմաններ,
2. Տնտեսական և ֆինանսական պայմաններ,
3. Օրենսդրական ու ինստիտուցիոնալ պայմաններ,
4. Մարդկային ռեսուրսների առկայություն [**1**]:

Ակնհայտ է, որ ՀՀ համայնքներից շատերը միայն բավարարում են դրանց գոյության ֆիզիկական պայմաններին: Օրենսդրական ու ինստիտուցիոնալ պայմանները սահմանվում են պետական կառավարման մարմինների կողմից: Իսկ, ընդհանուր առմամբ, տնտեսական և ֆինանսական պայմանների և ՏԻՄ-երի կողմից մատուցվող ծառայությունների անհամապատասխանությունն է հանգեցրել տեղական ինքնակառավարման համակարգում առկա վիճակին: Համայնքները շատ հաճախ չունեն բավարար ֆինանսական միջոցներ համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանման ծախսերը հոգալու համար, ուստի խոսել արդյունավետ կառավարման և, առհասարակ, կառավարման մասին, միամտություն կլինի: Համայնքի բյուջեն կազմվում է ֆինանսական ռեսուրսների խիստ սակավության պայմաններում, ինչն էլ համայնքի ֆինանսական կառավարման մասնագետներին և համայնքի ղեկավարին բարդ ընտրության առաջ են կանգնեցնում՝ կապված սահմանափակ ռեսուրսները արդյունավետորեն բաշխելու խնդրի լուծման անհրաժեշտությամբ [**2**]:

Նույնիսկ, ՏԻՄ-երի ձևավորման գործընթացում առաջանում են լուրջ խնդիրներ, քանի որ շատ հաճախ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների թեկնածուներ չեն հայտնվում, կամ թեկնածուները չունեն բավարար գիտելիքներ և հմտություններ տեղական իշխանության խնդիրները լուծելու համար: Այս խնդիրն էլ պայմանավորված է մարդկային ռեսուրսների առկայության ոչ բավարար մակարդակով:

Ուստի ՀՀ-ում ձևավորված վարչատարածքային բաժանումը էական խոչընդոտ է համարվում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և կարողությունների ամրապնդման համար: Համայնքների մասնատվածության նման բարձր աստիճանն է հենց հիմնական պատճառ հանդիսացել ՀՀ-ում մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների և իրականացվող համայնքների խոշորացման համար:

2011 թվականին ՀՀ Կառավարության № 44 արձանագրային որոշմամբ հավանություն տրվեց համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգին: Հայեցակարգով մեկնարկած ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների նոր փուլ, որը պետք է էապես ազդեր համայնքների կարողությունների վրա, հիմք հանդիսանար համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Չնայած վերջին երկու տարում համայնքների խոշորացման գործընթացը ժամանակավորապես կասեցվել է, սակայն առաջիկայում նախատեսվում է ավարտին հասցնել համայնքների խոշորացման ծրագիրը: 2016 և 2017 թվականներին ՀՀ-ում իրականացվեց համայնքների խոշորացման 52 ծրագիր, որի արդյունքում ՀՀ 9 մարզերում ձևավորվեցին խոշորացված համայնքներ:

Ինչքանով էր համայնքների խոշորացման ծրագիրը արդարացված հնարավոր կլինի

հստակ գնահատել միայն տարիներ հետո, սակայն արդեն անցել է ավելի քան 2 տարի և

Աղյուսակ 1. Շողակաթ համայնքի բյուջեի ծախսերը (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան հաշվետվությունների հիման վրա [3])

	Ընդամենը ծախսեր (հազ.դրամ)		
	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք
	2016թ.	2018թ.	2019թ.
Ծափաթաղ	9 268,0	185332,5	179089,1
Ջիլ	15 496,8		
Դրախտիկ	21 315,9		
Աղբերք	10 655,8		
Շորժա	22 011,9		
Արտանիշ	21 424,8		
Ընդամենը	100173,1	185332,5	179089,1

Աղյուսակ 2. Շողակաթ համայնքի բյուջեի եկամուտները (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան հաշվետվությունների հիման վրա [3])

	Համայնքի բյուջեի եկամուտներ (հազ.դրամ)			Որից՝ սեփական եկամուտներ (հազ.դրամ)		
	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք
	2016թ.	2018թ.	2019թ.	2016թ.	2018թ.	2019թ.
Ծափաթաղ	8 958,2	163555,8	198062,6	3189,1	62928,4	53739,2
Ջիլ	14 919,6			4161,1		
Դրախտիկ	24 820,7			5896,0		
Աղբերք	11 844,1			5569,3		
Շորժա	22 400,0			13023,1		
Արտանիշ	18 684,8			7140,1		
Ընդամենը	101627,4	163555,8	198062,6	38978,8	62928,4	53739,2

հնարավոր է որոշ վերլուծություններ իրականացնել համայնքների խոշորացման սոցիալ-տնտեսական արդյունավետության վերաբերյալ:

2017 թվականի նոյեմբերի 5-ին Գեղարքունիքի մարզում 6 համայնքների միավորմամբ ձևավորվեց Շողակաթ խոշորացված համայնքը (Ծափաթաղ, Ջիլ, Դրախտիկ, Աղբերք, Շորժա, Արտանիշ): Համայնքները, ունեին սոցիալ-տնտեսական զարգացման շատ ցածր մակարդակ: Համեմատության համար նշենք, որ նշված համայնքներից միայն մեկը՝ Շորժան էր ամբողջությամբ գազաֆիկացված: Մնացած համայնքներում առկա էր գազաֆիկացման լուրջ խնդիր: Առկա էր փողոցային լուսավորության խնդիր, աղբահանության ծառայությունները պատշաճ չէին իրականացվում: Առհասարակ նշված համայնքներին բնորոշ էր ՀՀ փոքր համայնքներում առկա գրեթե բոլոր խնդիրները:

Այժմ Շողակաթ խոշորացված համայնքի օրինակով փորձենք հասկանալ, թե ինչ դրական կամ բացասական ազդեցություն է ունեցել համայնքների խոշորացման գործընթացը:

Քանի որ Շողակաթ համայնքը խոշորացել է 2017 թվականի ընթացքում, ուստի համեմատական վերլուծության համար ընտրել ենք 2016 թվականի 6 համայնքների և 2018, 2019

թվականների Շողակաթ խոշորացված համայնքի բյուջետային ծախսերը:

Աղյուսակ 1-ում ներկայացված է Շողակաթ համայնքի բյուջեի ծախսերը 2018 և 2019 թվականների համար և նրա կազմում ներառված համայնքների բյուջեների գումարային ծախսերը 2016 թվականի համար՝ նախքան խոշորանալը: Ուսումնասիրությունից պարզ է դառնում որ խոշորացումից հետո 2018 և 2019 թվականներին համայնքի բյուջեի ծախսերը 2016 թվականի համեմատ աճել են համապատասխանաբար 85 և 78,8 տոկոսով:

Ծախսերի աճը պայմանավորել միայն համայնքի խոշորացմամբ սխալ կլինի: Ուստի հարկ ենք համարում ուսումնասիրել նաև բյուջեի եկամուտները նախքան խոշորանալը և խոշորացումից հետո: Աղյուսակ 2-ում ներկայացված է Շողակաթ համայնքի բյուջեի ընդհանուր և սեփական եկամուտները 2018 և 2019 թվականների ընթացքում և նրա կազմում ներառված համայնքների բյուջեների գումարային եկամուտները 2016 թվականի ընթացքում:

Աղյուսակի տվյալներից պարզ է դառնում, որ համայնքի բյուջեի եկամուտները ևս աճել են խոշորացումից հետո: 2018 և 2019 թվականների ընդհանուր եկամուտները 2016 թվականի համեմատ աճել են համապատասխանաբար 61 և 94,9 տոկոսով: Քանի որ աճել են նաև ֆինանսական համահարթեցման դոտացիաների և պետական բյուջեից հատկացվող այլ դրամաշնորհների գումարները, ուստի առավել կարևոր է, թե ինչ տեմպով են աճել համայնքի բյուջեի սեփական եկամուտները: Տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում որ խոշորացումից հետո համայնքի բյուջեի եկամուտները 2018 և 2019 թվականներին 2016 թվականի համեմատ աճել են 61.4 և 37.9 տոկոսով:

Եթե 2018 թվականին համայնքի բյուջեի եկամուտները 2016 թվականի գումարային եկամուտների համեմատ աճել են գրեթե նույն տեմպով ինչ ընդհանուր եկամուտները, ապա 2019 թվականին սեփական եկամուտների աճը 2016 թվականի համեմատ ավելի ցածր է եղել, ավելին, 2018 թվականի համեմատ սեփական եկամուտները նվազել են:

Ամեն դեպքում համայնքի բյուջեի եկամուտների, մասնավորապես սեփական եկամուտների, աճը հուսադրող է, որի արդյունքում էլ հենց աճել են բյուջետային ծախսերը, որոնք պետք է հիմք հանդիսանան համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Սակայն ծախսերի ուսումնասիրությունը առավել կարևորվում է վարչական և ֆոնդային բյուջեների ուսումնասիրության համատեքստում: Ուստի ուսումնասիրենք նաև համայնքի բյուջեի ծախսերը ըստ վարչական և ֆոնդային բյուջեների (աղյուսակ 3):

Աղյուսակի տվյալներից ակնհայտ երևում է, որ ֆոնդային բյուջեի ծախսերը աճել են ավելի բարձր տեմպով քան վարչական բյուջեինը: Եթե վարչական բյուջեի ծախսերը 2018 և 2019 թվականներին 2016 թվականի համեմատ աճել է համապատասխանաբար 26,5 և 17,2 տոկոսով, ապա ֆոնդային բյուջեի ծախսերը 2018 թվականին 2016 թվականի համեմատ աճել են շուրջ 11 անգամ, իսկ 2019 թվականին՝ ավելի քան 8 անգամ:

Նշված աճի արդյունքում դրականորեն փոխվել է նաև համայնքի բյուջեում վարչական և ֆոնդային բյուջեների հարաբերակցությունը, որը առավել պատկերավոր ներկայացված է գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1. Շողակաթ համայնքի վարչական և ֆոնդային բյուջեների հարաբերակցությունը (Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան հաշվետվությունների հիման վրա [3]



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, 2016 թվականին ֆոնդային բյուջեն 6 համայնքներում միասին կազմել է ընդհանուր բյուջեի միայն 8,1 տոկոսը, իսկ 2018 և 2019 թվականներին այն կազմել է համապատասխանաբար 43,7 և 38,1 տոկոս: Իհարկե այս ցուցանիշը

շատ դրական պետք է համարվի, քանի որ ֆոնդային բյուջեի տեսակարար կշռի աճը կարող է հանգեցնել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ նպաստելով համայնքում կապիտալ ծախսերի իրականացմանը:

Աղյուսակ 3. Շողակաթ համայնքի վարչական և ֆոնդային բյուջեները (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան հաշվետվությունների հիման վրա [3])

	Վարչական մաս (հազ.դրամ)			Ֆոնդային մաս (հազ.դրամ)		
	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք
	2016թ.	2018թ.	2019թ.	2016թ.	2018թ.	2019թ.
Ծափաթաղ	8 818,0	119670,4	110893,3	450	92796,8	68195,8
Ջիլ	15 496,8			0		
Դրախտիկ	20 427,0			888,9		
Աղբերք	10 655,8			0		
Շորժա	21 650,5			361,4		
Արտանիշ	17 584,0			6675,3		
Ընդամենը	94632,0	119670,4	110893,3	8375,6	92796,8	68195,8

Աղյուսակ 4. Աշխատանքի վարձատրության ծախսերը Շողակաթ համայնքում (Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից Գեղարքունիքի մարզպետարանի տարեկան հաշվետվությունների հիման վրա [3]

	Աշխատանքի վարձատրություն (հազ.դրամ)		
	Ըստ առանձին համայնքների	Շողակաթ խոշորացված համայնք	Շողակաթ խոշորացված համայնք
	2016թ.	2018թ.	2019թ.
Ծափաթաղ	6 179,9	56303,5	54891,4
Ջիլ	13 848,6		
Դրախտիկ	13 828,1		
Աղբերք	8 484,3		
Շորժա	11 671,8		
Արտանիշ	10 971,9		
Ընդամենը	64984,5	56303,5	54891,4

Համայնքների խոշորացման հրատապության գլխավոր հիմնավորումներից էր համայնքի ղեկավարների աշխատակազմերի պահպանման վրա կատարվող բարձր ծախսերը և դրանք կրճատելու անհրաժեշտությունը: Հետևաբար փորձենք հասկանալ, թե ինչպես են փոխվել աշխատանքի վարձատրության վրա կատարվող ծախսերը Շողակաթ համայնքի խոշորացումից հետո:

Աղյուսակ 4-ում ներկայացված է Շողակաթ համայնքի բյուջեում աշխատանքի վարձատրության վրա կատարվող ծախսերը 2018 և 2019 թվականների ընթացքում և նրա կազմում ներառված համայնքների բյուջեների գումարային ծախսերը 2016 թվականի ընթացքում:

Ինչպես տեսնում ենք աշխատանքի վարձատրության վրա կատարվող ծախսերը 2018 և 2019 թվականներին նվազել են, ինչը ևս

դրական ցուցանիշ է: 2018 և 2019 թվականներին 2016 թվականի համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերը նվազել են համապատասխանաբար 13,4 և 15,5 տոկոսով:

Իհարկե ուսումնասիրությունը կարելի է շարունակել համայնքի բյուջեի ծախսերի և եկամուտների բոլոր խմբերի համար, սակայն ուսումնասիրված տվյալները արդեն իսկ բավարար են եզրահանգումներ կատարելու համար: Խոշորացումից հետո համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի աճը նպաստելու է համայնքների ֆինանսական հնարավորությունների ամրապնդմանը և ֆինանսական անկախության մեծացմանը: Վարչական և ֆոնդային բյուջեների հարաբերակցության նշված ուղղությամբ փոփոխությունը ևս շատ կարևոր է, քանի որ ֆոնդային բյուջեի միջոցով են համայնքում կատարվում կապիտալ ծախսեր, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումը: Ինչ վերաբերում է աշխատանքի վարձատրության ծախսերի նվազեցմանը, ապա պետք է նշել, որ այն հնարավոր է եղել ապահովել համայնքի ղեկավարների աշխատակազմերի կրճատման հաշվին, որոնց գործառույթների մեծ մասը կենտրոնացվել է:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ ֆինանսական տեսանկյունից համայնքների խոշորացումը իրականացվել է որոշակի արդյունավետությամբ: Սակայն այլ է հարցը, երբ համայնքների խոշորացման արդյունավետությունը քննարկում ենք սոցիալական դիտանկյունից: Առհասարակ, համայնքների խոշորացման և դրա արդյունավետության մասին խոսելիս, պետք է հաշվի առնել, որ համայնքների խոշորացումը ունի բավականին մեծ սոցիալական ազդեցություն, քանի որ միշտ չէ որ փոքր համայնքների բնակիչները սիրով և ոգևորությամբ են ընդունում իրենց համայնքի խոշորացումը՝ պատճառաբանելով բազմաթիվ հիմնավորումներով:

Այնուամենայնիվ, համայնքների խոշորացումը պետք է նպաստի ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացմանը: Համայնքների խոշորացման արդյունքում պետք է ձևավորվեն վարչատարածքային միավորին բնորոշ բոլոր պայմաններին բավարարող համայնքներ: Համայնքներ, որոնք բացի ֆիզիկական պայմաններից կունենան նաև անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ համայնքային նշանակության բոլոր խնդիրները լուծելու համար:

Համայնքների խոշորացումը պետք է նաև հիմք հանդիսանա ապակենտրոնացման հետագա խորացման համար: Իսկ ապակենտրոնացումն ինքնանպատակ լինել չի կարող. դրա հիմնական արդյունքը պետք է լինի այս կամ այն լիազորության առավել արդյունավետ իրականացումը, որից էլ պետք է օգտվեն համայնքների բնակիչները: Լիազորության իրականացումը հնարավոր է համապատասխան ֆինանսական միջոցների և ռեսուրսների առկայության պայմաններում [**4**]:

Որքան էլ մեծ և հրատապ է վարչատարածքային բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը համայնքների խոշորացման եղանակով, այնուամենայնիվ, համայնքների խոշորացումը չպետք է իրականացվի տարերայնորեն: Պետք է իրականացվեն մանրամասն ուսումնասիրություններ ոչ միայն համայնքների ֆինանսական ռեսուրսների ամրապնդման, այլ նաև խոշորացման սոցիալական հետևանքների և բնակչության վրա ունեցած ազդեցության վերաբերյալ: Միայն այդ դեպքում է հնարավոր ակնկալել վարչատարածքային բարեփոխումների իրականացման արդյունավետ ընթացք:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ**, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում («Ամբերդ» մատենաշար), Երևան, Տնտեսագետ, 2014թ. էջ 102-103:
2. **Շահբազյան Վ.**, «Համայնքի բյուջետավորման ուղեցույց», Երևան, Նոյյան տապան, 2010թ. էջ 8:
3. http://gegharkunik.mtad.am/files/docs/
4. **Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ**, Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բարեփոխումների գերակայությունները արդի փուլում («Ամբերդ» մատենաշար), Երևան, Տնտեսագետ, 2015թ. էջ 61:

Сдана/Հանձնվել է՝ 27.05.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 01.06.2020
Принята/Ընդունվել է՝ 05.06.2020

Էլեկտրաէներգիայի արտադրությունը և սպառումը ՀՀ-ում

Խուկեյան Զ. Գ.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան,
գործարար կառավարում մասնագիտությամբ ասպիրանտ (Երևան, Հայաստան)
zaven.khukeyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *էլեկտրաէներգիայի ծավալ, էլեկտրաէներգիայի սակագին, արտադրող կայան, արտադրված էլեկտրաէներգիա, էներգետիկ անվտանգություն, արտադրված էլեկտրաէներգիայի ինարնարժեք*

Производство и потребление электроэнергии в Армении

Хукеян З. Г.
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
zaven.khukeyan@gmail.com

Аннотация: В энергосистеме РА осуществляют свою деятельность Электростанции, использующие традиционные и альтернативные и возобновляемые источники энергии. Исследование годовых статистических данных позволяет представить какие производственные станции имеют возможности развития, и создать необходимое инвестиционное и законодательное поле для их развития. В результате анализа данных о производстве и потреблении электроэнергии становится ясно, что текущие направления и производственные станции не могут полностью реализовать потенциал энергоресурсов в Армении, тем самым причиняя убытки с точки зрения эффективности электрэергетической системы. Обсуждались последствия уже запланированных и реализованных действий энергетической стратегии и влияние на энергосистему и тарифы на электроэнергию. Необходимо строго придерживаться плана действий, разработанного стратегией развития энергетики, чтобы достичь желаемого результата.
Ключевые слова: Объем электричества, тариф на электроэнергию, производственная станция, вырабатываемое электричество, энергетическая безопасность, себестоимость произведенной электроэнергии

Power Generation and Consumption in Armenia

Khukeyan Z. G.
ASEU (Yerevan, Armenia)
zaven.khukeyan@gmail.com

Abstract: In the RA electricity system are operating power plants using traditional traditional and alternative and renewable energy sources. The study of annual statistical data allows us to imagine what kind of production stations have development opportunities and create the necessary investment and legislative field for their development. As a result of the analysis of electricity production and consumption data, it becomes clear, that the current directions and operating plants are not able to fully realize the potential of energy resources in Armenia, thus causing losses in terms of efficiency of the electricity system. The consequences of the already planned and implemented actions of the energy strategy and the impact on the energy system and electricity tariffs were discussed. It is necessary to strictly follow the action plan developed by the Energy Development Strategy in order to achieve the necessary results.
Keywords: volume of electricity, electricity tariff, power plant, generated electricity, energy security, cost of electricity produced

ՀՀ-ում էլեկտրաէներգիա արտադրողը կարող է այն կամ օգտագործել սեփական կարիքների համար կամ վաճառել ՀԷՑ-ին, հետևաբար չի կարող վաճառել բնակչությանը կամ որևէ այլ սպառողի: Արտադրված էլեկտրաէներգիայի տեղափոխման և բաշխման հարցերով զբաղվում է ՀԷՑ-ը, իսկ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն միայն սպասարկում է 110-220 կՎ լարման ԷՀԳ-ները: Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ն ստեղծվել է վերակազմակերպման եղանակով՝ «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց» և «Կենտրոնական էլեկտրացանց» փակ բաժնետիրական ընկերությունները՝ Երևանի էլեկտրացանց՝ փակ բաժնետիրական ընկերությանը միացնելու և այն վերանվանելու միջոցով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. ի փետրվարի 21-ի «ՀՀ էներգահամակարգի կառավարման բարելավման միջոցառումների մասին» № 152 որոշման: Ընկերությունը «Հյուսիսային էլեկտրացանց», «Հարավային էլեկտրացանց», «Կենտրոնական էլեկտրացանց» և «Երևանի էլեկտրացանց»

փակ բաժնետիրական ընկերությունների իրավահաջորդն է: Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ունի էլեկտրաէներգիայի բաշխման բացառիկ արտոնագիր: Էլեկտրաէներգիայի բաշխումն իրականացվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատագրված սակագներով: Ցանցերի ընդհանուր երկարությունը կազմում է 36 հազ. կմ: Ընկերությունը սպասարկում է մոտ1 մլն: «Հայաստանի էլեկտրական ցանցերըե խոշոր հարկատուների ցանկի 3-րդ հորիզոնականում է՝ 9.2 մլրդ դրամի չափով վճարած հարկերով:

Բաշխիչ ցանցին մուտքի հնարավորությունը շուրջ 100% է: Բնակչության տարեկան սպառումը կազմում է 35%, խոշոր սպառողները (արդյունաբերություն, տրանսպորտ, ջրամատակարարում և ոռոգման համակարգ) մոտ 30%, իսկ մնացած 35%-ը կազմում է հանրային ընկերությունների և փոքր ու միջին չափի ձեռնարկատիրությունների սպառումը: Բաշխիչ ցանցի կորուստները մոտ 11.0 % է, առևտրային հաշվառումը և գումարների հավաքագրումը գրեթե 100%: 35-110 կՎ ցանցի բոլոր սպառողները և 6-10 կՎ ցանցի սպառողների մեծ մասը ընդգրկված են տվյալների հավաքագրման համակարգում, սպառողների 30 %-ի մոտ տեղադրված են էլեկտրոնային հաշվիչներ: 2014 թ. Համակարգի ընդհատման միջին տևողության ինդեքսը կազմել է 8.81 ժամ, Համակարգի ընդհատման միջին հաճախականության ինդեքսով գրանցվել է 5.48 անջատում մեկ սպառողի հաշվով «իսկ Սպառողի ընդհատման միջին տևողության ինդեքսը կազմել է 1.61 ժամ[1]:

ՀԷՑ ՓԲԸ-ն համարվում է ՀՀ-ի տարածքում էլեկտրական էներգիայի միակ գնորդը արտադրող կայաններից: Արտադրող կայաններից յուրաքանչյուրից ՀԷՑ-ի կողմից գնված էլեկտրաէներգիայի սակագները կներկայացնենք ստորև: ՀԱԷԿ-ից ՀԷՑ-ը էլեկտրական էներգիա գնում է 11.5 ՀՀ դրամ սակագնով: Ջերմաէլեկտրակայանների կողմից առաքված էլեկտրաէներգիայի սակագները կազմում են՝ Հրազ-ՋԷԿ –ից 79.8 ՀՀ դրամ, Հրազդանի 5-րդ էներգաբլոկից 31.6 ՀՀ դրամ իսկ Երևանի ՀՅԳՏ-ից 29.05 ՀՀ դրամ: ՀրազՋԷԿ-ը 1 կտվ ժ էլեկտրաէներգիայի արտադրության համար օգտագործում է 40%-ով ավել գազ քան Երևանի ՀՅԳՏ: Սա հետևանք է այն փաստի, որ Հրազ-ՋԷԿ-ի հիմնական միջոցների օգտագործման ժամկետը հատել է սահմանային շեմը և համարվում է գերմաշված: Անհամեմատ մատչելի էլեկտրաէներգիա են մատակարարում ՀԷԿ-երը: Այտեղ պատկերը հետևյալն է «Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադ» 17 ՀՀ դրամ «Որոտանի կասկադ» ՝ 15 ՀՀ դրամ[2]:

Անդրադարձ կատարենք նաև ՀՀ-ում էլեկտրական էներգիայի սպառման տվյալներին:

Վերը ներկայացված աղյուսակներում ներկայացված են 2012-2019 թթ ՀՀ-ում էլեկտրական էներգիայի արտադրության ծավալների վերաբերյալ, բնեղեն և դրամական արտահայտությամբ: Դիտարկելով էլեկտրական էներգիայի արտադրությունը բնեղեն արտահայտությամբ կտեսնենք, որ գրանցվել է արտադրության նվազեցում՝ 8 036,2 -7 632.3 2012-2019թթ, իսկ ամենա ցածր ցուցանիշ դիտարկված ժամանակահատվածում 2016 թվականինն է որը կազմում է 2015 թվականին արտադրված էլեկտրաէներգիայի 93,8 % այսինքըն նվազել է 6.2 տոկոսային կետոց: Մինչդեռ դրամական արտահայտությամբ գրանցվե է աճ արտադրության ծավալների նվազման պարագայում: Սա ևս ՀԾԿՀ-ի կողմից սակագնի փոփոխման հետևանքն է:

2017 և 2018 թվականներին արտադրված էլեկտրաէներգիայի ծավալի մեջ արևային էլեկտրակայանների արտադրած էլեկտրաէներգիան կազմում է համապատասխանաբար 0.4 և 5.1 մլն կՎտ Ժամ: Աճը կազմել է շուրջ 12,75 անգամ: Իսկ արդեն 2019 թվականին արտադրված և մատակարարված էլեկտրաէներգիայի ծավալների մեջ արևային կայաններից ստացված էլեկտրաէներգիան կազմել 16.7 մլն կՎտ ժամ: Այս ցուցանիշը խոսում է Հայաստանի արևային էներգիայի մեծ պոտենցիալով օժտված լինելու մասին: Բացի այդ նկատելի է արևային ֆոտովոլտային մոդուլների գների նվազեցում թե տեղական թե միջազգային շուկայում: Սա պայմանավորված է օրեցօր զարգացող բարձր տեխնոլոգիանե-

[1] Ena.am- «ՀԷՑ» ՓԲԸ խաշտոնական կայք

[2] Psrc.am- ՀԾԿՀ պաշտոնական կայք



Գծապատկեր 1.

Աղյուսակ 1. Էլեկտրաէներգիայի և ջերմաէներգիայի արտադրության (Աղյուսակը կազմվել է ԱՎԾ տարեկան տեղեկագիրների տվյալների հիման վրա՝ «Սոցիալ տնտեսական իրավիճակը ՀՀ-ում» 2012-2019թթ)

	Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները մլն կՎտ Ժամ	ՋԷԿ	ՀԷԿ	ՀԱԷԿ	Այլ աղբյուրներ
2019	7 632.3	3 046.9	2 370.9	2 197.8	16.7
2018	7 776.9	3 375.6	2 318.2	2 076.1	7.0
2017	7 762.9	2 871.8	2 269.0	2 619.6	2.6
2016	7 315.2	2 581.5	2 351.4	2 380.5	1.8
2015	7 798.2	2 801.2	2 205.6	2 787.7	3.7
2014	7 750.0	3 288.6	1 992.6	2 464.8	4.0
2013	7 710.0	3 173.1	2 173.4	2 359.7	3.8
2012	8 036.2	3 374.0	2 349.1	2 311.0	2.1

րով, որի արդյունքում հնարավոր է դառնում նվազեցնել մոդուլների ինքնարժեքը:

Դիտարկելով 2012-2019 թվականներին ՀՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները ըստ արտադրող կայանների, քննարկելով այն էներգետիկ անվտանգության համատեքստում, առավել մտահոգիչ է այն փաստը, որ արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների մեջ գերակշիռ դեր ունեն ՋԷԿ-երը, որոնց կողմից արտադրած էլեկտրաէներգիան ամենաթանկն է: Էներգետիկ անվտանգության համատեքստում կարևոր է ստեղծել համապատասխան տնտեսական նախապայմաններ և օրենսդրահիրավական դաշտ՝ այլընտրանքային և վերականգնվող էներգիայի աղբյուրների վրա հիմնված արտադրությունները խթանելու համար: ՀՀ-ում բավական բարձր է արևից էլեկտրաէներգիայի ստացման հնարավորությունները: Դրա մասին է խոսում գնալով ավելի լայն մասշտաբների հասնող ինքնաբավ տնտեսությունները՝ հիմնված արևային ֆոտովոլտային մոդուլների վրա:

Առաջին արդյունաբերական մասշտաբի արևային կայանը, որ պետք է շահագործման

Աղյուսակ 2. (Աղյուսակը կառուցվել է ԱՎԾ հրապարակումների հիման վրա՝ «Սոցիալ-տնտեսական իրավիճակը ՀՀ-ում» 2012-2019թթ)

էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում	Հունվար- դեկտեմբեր, մլն. դրամ	Նախորդ տարվա հունվար- դեկտեմ-բերի նկատմամբ, %
2019	214 560.4	97.5
2018	258 987.4	105.7
2017	258 825.0	101.2
2016	212 653.0	102.2
2015	211 867.7	105.5
2014	186 569.3	97.5
2013	214 490.0	102.5
2012	182 791.8	112.8

հանձնվեր 2019-ի տաեվերջին՝ «Մասրիկ-1»-ը, ունի 55 ՄՎտ դրվածքային հզորություն և մատակարարելու է էլեկտրաէներգիա աննախադեպ ցածր՝ 0.0419 ԱՄՆ դոլլար(20.11 դրամ)՝ առանց ԱԱՀ-ի սակագնով: Կայանն ունակ է արտադրելու տարեկան մինչև 120 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կայանի կառուցման և բաշխիչ ցանց մուտքի համար ներդրումների չափը գնահատվել է 50 մլն ԱՄՆ դոլար[1]:



Գծապատկեր 2.

Ինչպես արդեն նշեցինք ամենթանկ ինքնարժեքն ունի ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիան՝ «Հրազ ՋԷԿ»-ինը 79,8, «Հրազդան 5» կայան՝ 31,6, Երևանի ՋԷԿ-ին՝ 29,05 դրամ: Հրազդանի ՋԷԿ-ի չափազանց բարձր սակագինը պայմանավորված է սարքավորումների բարոյական և ֆիզիկական մաշվածությամբ: Այն 2019 թվականին արտադրել է 70,92 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգիա: Այն այս պահին համարվում է ՀՀ-ում գրոծող ամենաբարձր դրվածքային հզորությունն ունեցող կայանը՝ 1110 ՄՎտ, սակայն գործում է ոչ ամբողջական հզորությամբ՝ բարձր ինքնարժեքի պատճառով: Համեմատական կարգով 22 անգամ փոքր դրվածքային հզորությամբ կայանը՝ «Մասրիկ-1»ը ունակ է բավարարելու կայանի արտադրած և առաքած տարեկան էլեկտրաէներգիայի ծավալները: «Մասրիկ-1» կայանի կառուցման և շահագործման համար անհրաժեշտ ներդրումները գնահատվել են 50 մլն ԱՄՆ դոլար: «Հրազ-ՋԷԿ»ին 70.92 մլն կՎտ ժամի համար վճարվել է 5 659.57 մլն դրամ գումար՝ առանց ԱԱՀ, իսկ «Մասրիկ-1» կայանի դեպքում այն կկազմեր՝ 1 426.20 մլն դրամ՝ շուրջ 3 անգամ ավելի էժան: Մատակարար ընկերության տարեկան խնայած գումարի մեծությունը կկազմեր՝ 4233.37 մլն դրամ՝ 8.73 մլն ամն դոլար: Օգտագործելով կայանի ամբողջական հզորությունը, արտադրելով 120 մլն կՎտ ժամ էլեկտրաէներգի՝ կայանը ունակ կլինի նաև փոխհատուցելու մյուս բարձր սակագնով էլեկտրաէներգիա մատակարարող ՋԷԿ-ի՝ Երևանի ՋԷԿ-ի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալներից գրեթե 50 մլն կՎտ ժամը՝ առաքման ինքնարժեքը 31.5 դրամ առանց ԱԱՀ՝ տարեկան կտրվածքով հնարավոր խնայված գումարը կկազմի շուրջ 569.5 մլն

[1]« «Մասրիկ 1» ՖՎ կայանի տեխնիկական նկարագիր» փաստաթուղթ:

դրամ: Այսինքն կայանի ամբողջական հզորությամբ շահագործման դեպքում խնայած գումարը կկազմի 4 802.37 մլն դրամ կամ որ նույնն է գրեթե 10 մլն դոլար[2]:

ՀԷՑ ՓԲԸ-ն վեր քննարկված սցենարի դեպքում հնարավորություն կունենա խնայել տարեկան շուրջ 4.8 մլրդ դրամ: Վեր բերված սցենարի կիրառման պարագայում, օգտագործելով 2019 թվականին արտադրված և առաքված էլեկտրաէներգիայի բնագավառի ցուցանիշները՝ սակագները, արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները, էլեկտրաէներգիայի մատակարարման սակագինը հնարավորություն կլինի նվազեցնել միջինում 0.63 ՀՀ դրամով: Ընդլայնելով ՀՀ-ում արևային էներգիա օգտագործող արտադրող կայանների հանաբավորությունները և բաենպաստ ներդրումային միջավայր ապահովելով հնարավորություն կունենան, ոչ միայն փոխարինել արդեն իսկ մաշված արտադրող կայանները, այլ նաև պահպանել ինչու չէ նաև նվազեցնել էլեկտրաէներգիայի մատակարարման գործող սակագները:

Օգտագործված աղբյուրների ցանկ

1. http://ena.am/AboutUs.aspx?hid=38&lang=1
2. http://ena.am/downloads/financial-statement-2018-am.pdf
3. http://www.irtek.am/views/act.aspx?aid=12559
4. http://psrc.am/
5. http://psrc.am/images/docs/monitoring/electric/2019/ENERGY_SYSTEM-2019-20.pdf
6. http://www.minenergy.am/page/532
7. https://ecolur.org/hy/news/energy/-1-/9111/
8. http://www.raztes.am/arm/
9. http://www.r2e2.am

Сдана/Հանձնվել է՝ 19.05.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 24.05.2020
Принята/Ընդունվել է՝ 27.05.2020

[2] Թվական տվյալները վերցված են «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներկայացրած հաշվետվություններից

Դոլարայնացման մակարդակի և դրա վրա ազդող գործոնների վերլուծությունը ՀՀ-ում

Նավասարդյան Մ. Ա.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, Հայաստան)
navasardianmichael@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *Դոլարայնացում, դոլարայնացման գնահատման ցուցանիշներ, փոխարժեք, գնաճ, բանկային տոկոսադրույք, արտարժույթով ավանդներ և վարկեր*

Анализ уровня долларизации и факторов, влияющих на неё в Армении

Навасардян М. А.
Армянский государственный экономический университет (Ереван, Армения)
navasardianmichael@gmail.com

Аннотация: В Армении не действует официальный режим долларизации, но как многие развивающиеся экономики, так и экономика Армении характеризуются высоким уровнем долларизации, следовательно, и повышение уровня долларизации в стране. Поскольку Центральный банк Армении проводит политику плавающего обменного курса, предпочитая целевую стабильность цен, каждое колебание обменного курса вызывает недоверие к национальной валюте и, как следствие, повышается уровень долларизации в стране. Выявив основные факторы, влияющие на уровень долларизации вкладов и кредитов в коммерческих банках РА, Центральный банк РА посредством непрерывных регулирующих функций может сократить риски возникновения неконтролируемого высокого уровня долларизации в стране.
Ключевые слова: Долларизация, показатели оценки долларизации, обменный курс, инфляция, банковская процентная ставка, вклады и кредиты в иностранной валюте

Analysis of the level of dollarization and the factors influencing it in Armenia

Navasardyan M. A.
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
navasardianmichael@gmail.com

Abstract: There is no official dollarization regime in Armenia, but like many emerging economies, the Armenian economy is also characterized by a high level of dollarization. As the Central Bank of Armenia pursues a floating exchange rate policy, preferring to target price stability, each fluctuation of the exchange rate causes a lack of confidence in the national currency, and consequently the level of dollarization in the country increases. Figuring out the main factors influencing the level of dollarization of deposits and loans in commercial banks, the Central Bank of Armenia can reduce the risks of uncontrollably high level of dollarization in the country through continuous regulatory functions.
Keywords: Dollarization, dollarization evaluation indicators, exchange rate, inflation, bank interest rate, deposits and loans in foreign currency

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և Բրետտոն Վուդսի համաժողովում ոսկու ստանդարտից հրաժարվելուց հետո որոշ երկրներ հուսահատորեն որոնում էին ուղիներ՝ խթանելու համաշխարհային տնտեսական կայունությունը և հետևաբար՝ սեփական բարգավաճումը: Այս երկրների մեծամասնության համար արժութային կայունություն ձեռք բերելու օպտիմալ ճանապարհը տեղական արժույթը հիմնական փոխարկելի արժույթին կցելն էր [**1**]: Այնուամենայնիվ, կար մեկ այլ տարբերակ. տեղական արժույթից հրաժարվել հօգուտ ԱՄՆ դոլարի բացարձակ օգտագործման(կամ մեկ այլ խոշոր միջազգային արժույթի): Երևույթը հայտնի է որպես ամբողջական դոլարայնացում: Այս գործընթացը ինտենսիվորեն տարածվեց, երբ 1971թ.-ից հետո շատ երկրների համար դոլարը դարձավ պահուստային արժույթ [**2**]:

Որպես տնտեսագիտական երևույթ՝ դոլարայնացումը այն իրավիճակն է, երբ ԱՄՆ դոլարն օգտագործվում է այլ երկրի ներքին արժույթի հետ միասին կամ դրա փոխարեն [**3**]: Բառիս բացարձակ իմաստով դոլարայնացումը երկրի արժութային համակարգի փոխարինումն է ԱՄՆ դոլլարային համակարգով [**4**]: Այսինքն՝ որպես լողացող կամ ֆիքսված արժութային ռեժիմի այլընտրանք՝ երկիրը

կարող է որոշում կայացնել իրականացնել պաշտոնական դոլարայնացում: Դա անելու հիմնական պատճառը երկրի ռիսկի նվազեցումն է՝ դրանով իսկ ապահովելով կայուն և անվտանգ տնտեսական ու ներդրումային միջավայր:

Դոլարայնացումը սովորաբար տեղի է ունենում այն ժամանակ, երբ երկրի ազգային արժույթը կորցնում է իր օգտակարությունը որպես փոխանակման միջոց:

Պաշտոնական դոլարայնացումը սովորաբար տեղի է ունենում զարգացող երկրներում, որոնք ունեն թույլ դրամավարկային իշխանություն կամ տնտեսական անկայուն միջավայր: Այն կարող է առաջանալ որպես պաշտոնական դրամավարկային քաղաքականություն կամ պարզապես հանդիսանալ շուկայական գործընթաց: Կա՛մ պաշտոնական հրամանի, կա՛մ շուկայի մասնակիցների կողմից որդեգրման միջոցով ԱՄՆ դոլարը ճանաչվում է բոլորի կողմից ընդունված փոխանակման միջոց՝ երկրի տնտեսությունում ամենօրյա գործարքներում օգտագործման համար [**5**]:

Առանձնացնենք քննարկվելիք հասկացության հիմնական **դրական կողմերը և հետևանքները.**

1. ցածր տոկոսադրույքներ, ցածր գնաճ [**6**],

2. պետական պարտքի էժան ֆինանսավորում [**7**],

3. փոխարժեքի ռիսկի նվազում [**8**],

4. ինտեգրում միջազգային շուկային [**9**]:

Սակայն եթե այս ռեժիմն ունենար միայն առավելություններ, ապա ամբողջ աշխարհը կօգտագործեր միայն մի քանի արժույթներ (դոլար, եվրո, յուան և ևս մի քանիսը): Թվարկենք հիմնական **բացասական երևույթները**, որոնք ի հայտ են գալիս դոլարայնացման ընթացքում կամ հետևանքով՝

1. արտարժույթի ձեռքբերման հետ կապված դժվարություններ,

2. անկախ դրամավարկային քաղաքականության կորուստ,

3. սենյորաժի կորուստ,

4. վերջին ատյանի եկամտի կորուստ [**10**],

5. վճարային հաշվեկշռի կարգավորման անկարողություն [**11**]:

Մինչ ՀՀ դոլարայնացմանն անցնելը հակիրճ ներկայացնենք այդ երևույթի գնահատման հիմնական ցուցանիշները:

Ինչպես նկատեցինք, D1-D4 ցուցանիշները վերաբերում են արտարժույթով ավանդներին, իսկ D5-ը՝ արտարժույթով վարկերին: Տեսնենք՝ ինչպիսին է դրանց շարժընթացը ՀՀ-ում:

ՀՀ-ում չի իրականացվում պաշտոնական դոլարայնացման ռեժիմ, այդ իսկ պատճառով երկիրը չի կարող օգտվել վերջինիս առավելություններից, ինչպես նաև ամբողջովին չի կրի դրա բացասական հետևանքները: Բայց, Ինչպես շատ զարգացող տնտեսություններ, այնպես էլ ՀՀ տնտեսությունը բնութագրվում է դոլարայնացման բարձր մակարդակով: Անցումային շրջանի սկզբնական փուլում ՀՀ-ն ապրեց ՀՆԱ-ի ահռելի անկում և հիպերինֆլյացիա, որը 1997թ.-ին անցավ 5000%-ը [**13**]: Արդյունքում անկախության առաջին տարիներին տեղի ունեցավ աղքատության զգալի աճ և ազգային արժույթի հանդեպ վստահության կորուստ, որն էլ անշուշտ հանգեցրեց դոլարայնացման մակարդակի բարձրացման:

1995-1998թթ.-ը բնորոշվում են դրամի արժեզրկմամբ, ինչը ուղեկցվեց արտարժութային ավանդների եկամտաբերության աճով, որն էլ հետագայում հիմք հանդիսացավ տնտեսության բարձր դոլարայնացման համար:

Ազգային արժույթի արժեզրկման գործընթացը նպաստեց հաջորդ ժամանակաշրջանների համար սպասումների աճին: 1998-2003 թթ դրամը արժեզրկվում էր ավելի դանդաղ տեմպերով, սակայն դոլարայնացումը ինտենսիվորեն աճում էր՝ կազմելով ընդհանուր բանկային ավանդների 80%-ը: 2003թ.-ին դրամը կտրուկ սկսեց ամրանալ, պայմանավորված տնտեսության գերտաքացմամբ, բայց դոլարայնացումը դեռ 1 տարի աճ էր գրանցում՝ այդպիսով գրանցելով կրիտիկական մակարդակներից թերևս առաջինը Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմության մեջ:

2003-2008թթ-ին տնտեսական աճի, մասնավորապես՝ ներքին շուկայի զարգացման հետևանքով դոլարի գնողունակության կորստի հետ կապված վախեր առաջացան. դոլարայնացման մակարդակի աճը ոչ միայն կանգ առավ, այլև զգալիորեն նվազեց: Ինչպես կարող ենք տեսնել գծապատկեր 1-ում, ռեզի-

Աղյուսակ 1. Դոլարայնացման գնահատման հիմնական ցուցանիշները [**12**]

D1	ռեզիդենտների արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցություն
D2	ռեզիդենտների արտարժութային ավանդների և ռեզիդենտների ընդհանուր ավանդների հարաբերակցություն
D3	ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ցպահանջ ավանդների կշիռը ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ ավանդներում
D4	ռեզիդենտ ֆիզիկական անձանց արտարժույթով ժամկետային ավանդների կշիռը ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում
D5	ռեզիդենտ իրական հատվածին արտարժույթով տրամադրված վարկերի և ռեզիդենտ իրական հատվածին տրամադրված ընդհանուր վարկերի հարաբերակցություն

Գծապատկեր 1. Դոլարացման մակարդակը գնահատող ցուցանիշների շարժընթացը ՀՀ-ում 2006-2020թթ.-ին(%) (մարտ ամսվա տվյալներ) [**13**]



դենտների արտարժութային ավանդների և փողի զանգվածի հարաբերակցությունը նվազեց մինչև 20.4%:

2008թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամը հանգեցրեց դրամի արժեզրկմանը հիմնական արտարժույթների նկատմամբ, այդ թվում նաև ԱՄՆ դոլարի: Այդ գործընթացը շարունակվեց մինչև 2010թ.-ի ապրիլ ամիսը: Դրա հետևանքով D1 ցուցանիշը բարձրացավ մինչև 51.26%:

Գնաճային զարգացումները կտրուկ տարբերվեցին և գերազանցեցին ակնկալիքները 2014թ. վերջին, երբ արտերկրում և հատկապես տարածաշրջանում խորացան աշխարհաքաղաքական և տնտեսական հիմնախընդիրները: Մյուս կողմից, 2014թ.-ի ընթացքում, ի տարբերություն այլ զարգացած և զարգացող երկրների, դիտվում էր ԱՄՆ տնտեսական աճի տեմպերի արագացում և ԱՄՆ դոլարի ամրապնդում, ինչն ուղեկցվում էր մնացած երկրների արժույթների արժեզրկմամբ և գնաճային բարձր միջավայրի ձևավորմամբ: Նշված երևույթների ազդեցությունը ՀՀ արժութային շուկայում արտահայտվեց 2014թ.-ի վերջին, որտեղ, արտերկրից և ՀՀ հիմնական գործընկեր Ռուսաստանից արտարժութային փոխանցումների զգալի կրճատման ու տնտեսական աճի տեմպերի դանդաղման սպասումների պայմաններում, արձանագրվեց դրամի կտրուկ արժեզրկում (4 ամսվա ընթացքում 1 դոլարը 410 դրամից արժեցավ մոտ 480 դրամ [**14**]): Վերջինս անմիջապես անդրադարձավ դոլարայնացման մակարդակի վրա. D1-ը բարձրացավ մինչև 53.28%:

Ինչ վերաբերում է վերջին տարիներին, նշենք, որ վարկերի և ավանդների արժութային կառուցվածքներում կա որոշակի տարբերություն, այն է՝ դրամով և արտարժույթով վարկերը բացարձակ արժեքով մոտենում են իրար: Ավանդների դեպքում դրանց տարբերությունը շարունակում է մնալ մեծ՝ չնայած վերջին տարիներին դրամով ավանդների աճի տեմպերը ավելի բարձր են քան դոլարով ավանդներինը:

Այնուամենայնիվ, վերջին սոցիալ-տնտեսական իրադարձությունների հետևանքով, կապված համաճարակի տարածման հետ, 2020թ.-ի ապրիլին, 2019թ.-ի դեկտեմբերի վերջի համեմատ, ՀՀ առևտրային բանկերի միջոցով ներգրավված ավանդների ծավալը կրճատվել է 2.6%-ով՝ կազմելով շուրջ 2.5 տրիլիոն ՀՀ դրամ, մինչդեռ նախորդ ամսվա համեմատ անկումը եղել է 3.3%: Հետաքրքրական է նկատել, որ 2020թ.-ի մարտին, փետրվարի համեմատ, նվազել են դրամով ինչպես ցպահանջ, այնպես էլ ժամկետային ավանդները, մինչդեռ դոլարով

ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալները աճել են:

2020թ.-ի ապրիլին, մարտի համեմատ, տնային տնտեսությունների դոլարով, ինչպես ցպահանջ, այնպես էլ ժամկետային ավանդները՝ համապատասխանաբար գրանցեցին շուրջ 7.2 և 6.2% անկում: Տնային տնտեսությունների դրամով ժամկետային ավանդները ևս 0.6% անկում գրանցեցին՝ կազմելով շուրջ 574.7 մլրդ ՀՀ դրամ, մինչդեռ ցպահանջ ավանդները ավելացել են 9.5%-ով՝ կազմելով շուրջ 202.6 մլրդ ՀՀ դրամ: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ համաճարակի տնտեսական ազդեցությունը հանգեցրել է նրան, որ տնային տնտեսությունները սկսել են վերցնել ժամկետային ավանդներ, ինչպես նաև ցպահանջ դոլարով ավանդներ, որոնց որոշ մասը, փոխարկելով դրամի, փոխացվել են ընթացիկ դրամային հաշվին, իսկ հետ վերցված ավանդների մեծ մասը ուղղվել են ընթացիկ կարիքները և(կամ) ծախսերը հոգալու համար [**15**]:

Քննարկվող երևույթի հիմքում ընկած պատճառները հասկանալու համար կարևոր է դրա գործոնային վերլուծությունը՝ հասկանալու համար, թե որոնք են երկրում առկա նման իրավիճակի լուծման հնարավոր ուղիները:

Դոլարայնացման մակարդակի վրա ազդող հիմնական գործոններից են փոխարժեքը, գնաճը և տոկոսադրույքը: ՀՀ-ն վարում է լողացող փոխարժեքի քաղաքականություն, որը երկրում առկա դոլարայնացման բարձր մակարդակի պայմաններում դառնում է խրթին: Պատճառն այն է, որ ՀՀ-ն չի ֆիքսում փոխարժեքը տնտեսության զարգացման նպատակով: Նախընտրում է կապիտալի ազատ տեղաշարժ և գների կայունություն, իսկ այդ դեպքում, Ռոբերտ-Մանդելի «անհնարին երրորդության» համաձայն, փոխարժեքի կայունություն պահպանելը անհամատեղելի է: Մյուս կողմից փոխարժեքի յուրաքանչյուր տատանում տնտեսությունում առաջացնում է սպեկուլյատիվ պահանջարկ արտարժույթի նկատմամբ, որն էլ հանգեցնում է փոխարժեքի կուրսի բարձրացման: Այսինքն՝ ՀՀ-ն կանգնած է երկընտրանքի առաջ, և չկա հստակ մի գործոն, որով վերջնականապես կորոշվի այդ ընտրության հարցը:

Արժութային քաղաքականությունը կարևոր նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար, քանի որ այն գտնվում է արտաքին շուկայից մեծ կախվածության մեջ: Արժութային շուկայում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն թողնում է ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ՀՀ տնտեսության վրա: Սակայն որոշ հետազոտություններ փաստում են, որ արժութային ռեժիմի խստացումը ոչ միայն կրճատել է երկրի արտահանման ներուժը, այլև նշանակալի դրական ազդեցություն չի ունեցել գնաճի վրա: Գնաճի նպատակադրման ռազմավարության շրջանակներում ավելի արդյունավետ է ազատ լողացող ռեժիմի օգտագործումը [**16**]:

Նախնական փուլում լողացող փոխարժեքի քաղաքականության իրականացումը կարող է հանգեցնել երկրում գների մակարդակի որոշակի բարձրացման: Բայց մյուս կողմից այն կբերի Հայաստանում արտադրվող ապրանքների մրցունակության բարձրացման արտասահմանյան շուկաներում [**17**]: Իսկ երկարաժամկետ հեռանկարում լավ մշակված մակրոտնտեսական քաղաքականության միջոցով լողացող փոխարժեքի ռեժիմի կիրառումը նախադրյալներ կստեղծի երկրի տնտեսության որակական զարգացման համար:

Դոլարայնացման վրա ազդող մեկ այլ գործոն է բանկային տոկոսադրույքը: Դրամով և արտարժույթով ավանդների և վարկերի տոկոսադրույքների սփրեդի փոփոխությամբ հնարավոր է ազդել տնտեսության դոլարայնացման վրա: Սակայն դա միանշանակ չէ, և հնարավոր է, որ ոչ մի ազդեցություն չթողնի: Օրինակ՝ ՀՀ-ում 2000-ական թվականներին դրամով և արտարժույթով ավանդների տոկոսադրույքները գրեթե հավասարվել են, ապա դրամով ավանդների տոկոսադրույքը գերազանցել է արտարժույթով ավանդների տոկոսադրույքը, սակայն զուգահեռաբար (2000-2003թթ) դոլարայնացման մակարդակը նկատելի փոփոխության չի ենթարկվել:

Վերլուծելով փոխարժեքի, գնաճի և բանկային տոկոսադրույքների ամսական տվյալները 2006-2020 թվականներին՝ նկատում ենք դրանց և վարկերի ու ավանդների դոլարայնացման մակարդակների միջև առկա կապերի տարբերություններ: Դիտարկելով ավանդների դոլարայնացման մակարդակի և վերոնշյալ գործոնների միջև առկա կորելյացիոն կապերը՝ նկատվում են հետևյալ բնորոշ գծերը ՀՀ-ում արտարժույթով խնայողությունների վերաբերյալ.

- փոխարժեքի և դրամով ավանդների տոկոսադրույքների փոփոխությունները ուժեղ ազդեցություն ունեն ավանդների դոլարայնացման մակարդակի վրա: Վերջինիս կորելացիայի գործակիցները դրանց հետ կազմել են 0.7-ից ավել,
- գնաճի և դոլարով ավանդների տոկոսադրույքի ազդեցությունները թույլ են ավանդների դոլարայնացման մակարդակի վրա: Նույնիսկ դրանց համար ստացված գործակիցները բացասական նշանով են, որը հակասում է տնտեսագիտական տրամաբանությանը:

Վարկերի դոլարայնացման մակարդակի գործոնային վերլուծությունը թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումներին.

- վարկերի դոլարայնացման մակարդակի վրա ուսումնասիրվող գործոններից ամենամեծ ազդեցությունն ունեն դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները. կորելացիայի գործակիցը կազմել է 0.83,
- դրամով վարկերի տոկոսադրույքի և փոխարժեքի փոփոխության ազդեցությունները միջին ուժգնության են (բացարձակ արժեքով՝ մոտ 0.5-ին):

ՀՀ-ում դիտարկված գործոնների և վարկերի ու ավանդների դոլարայնացման մակարդակների միջև կապերը էականորեն տարբերվում են, բազմաբնույթ են, նույնիսկ որոշ կապեր հակասում են տնտեսագիտական օրենքներին: Սակայն նկատվել է մեկ ընդհանրություն. և՛ ավանդների, և՛ վարկերի դոլարայնացման ու երկրում գնաճի մակարդակների միջև կապերը գրեթե բացակայում են: Այն ամենայն հավանականությամբ կապված է երկրում վարվող գների կայունությանն ուղղված ԿԲ քաղաքականությամբ:

Ներկայումս ՀՀ-ում տնտեսական կայունություն ապահովելու համար նախևառաջ կարևոր է ներքին շուկայի զարգացումը և ներքին ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Ուստի դոլարայնացման մակարդակն անվերահսկելի վիճակում թողնելը կարող է երկրին տնտեսական(և ոչ միայն) լուրջ ռիսկերի առաջ կանգնեցնել, իսկ այդ դեպքում ներքին շուկայի զարգացումը կարող է մղվել հետին պլան: Առանց այդ էլ արտաքին աշխարհից մեծ կախվածություն ունեցող ՀՀ տնտեսության համար վտանգավոր է դոլարայնացման երևույթը իր բացասական դրսևորումներով:

Հայաստանում վարկերի ու ավանդների դոլարայնացման վրա մեծ ազդեցություն ունեցող վերոնշյալ գործոնների վրա ՀՀ ԿԲ շարունակական վերահսկողության, մասնավորապես՝ համապատասխան ինտերվենցիաների և նորմատիվների փոփոխությունների միջոցով երկիրը կարող է պարարտ հող ստեղծել ներքին շուկայի զարգացման և ներդրումների ներգրավման համար վստահելի վարկանիշ ձեռքբերելու տեսանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Dollarization Explained, Reem Heakal, 2010, https://www.investopedia.com/articles/04/082504.asp
2. Dollarization:Demand of time or the result of mismanagement of economy, Anurag, November, 2012, Munich Personal RePEc Archive, https://mpra.ub.uni-muenchen.de/58619/1/MPRA_paper_58619.pdf
3. https://dictionary.cambridge.org/dictionary/english/dollarization
4. https://www.dictionary.com/browse/dollarization
5. Dollarization, JIM CHAPPELOW, https://www.investopedia.com/terms/d/dollarization.asp
6. **De Grauwe, Paul.** (1994). “the Economics of Monetary Integration”. Oxford University Press.
7. **Ляменков А.К., Ляменкова Е.А.**, Примущества и недостатки официальной долларизации как режима валютного курса, Journal of Scientific Research Publications. 2015. N 12(32)
8. **Stein, Ernesto, Ernesto Talvi, Ugo Panizza and Gustavo Marquez.** (1999). “Evaluando la Dolarizacion: Una Aplicacion a Paises de America Central y del Caribe”. Inter-American Development Bank.
9. Dollarization, JIM CHAPPELOW, https://www.investopedia.com/terms/d/dollarization.asp
10. Dollarization: Demand of time or the result of mismanagement of economy, Anurag, November, 2012, Munich Personal RePEc Archive, https://mpra.ub.uni-muenchen.de/58619/1/MPRA_paper_58619.pdf
11. Примущества и недостатки официальной долларизации как режима валютного курса, Ляменков А.К., Ляменкова Е.А., Journal of Scientific Research Publications. 2015. N 12(32)
12. ՀՀ ԿԲ տեղեկագիր, հունվար 2020, էջ 44, https://www.cba.am/AM/pperiodicals/tex_II_20.pdf
13. ՀՀ ԿԲ վիճակագրություն, https://www. cba.am
14. ՀՀ ԿԲ վիճակագրություն, https://www. cba.am
15. http://politik.am/hh-arevtrayin-bankeri-koxmic-nergravvats-avandneri-tsavalnern-ankum-en-ardzanagrel-tkzn
16. **Айвазян С. А., Бродский Б. Е., Сандоян Э. М., Восканян М. А., Манукян Д. Э.** Макроэконометрическое моделирование экономик России и Армении. // Прикладная Эконометрика № 30 (2) 2013
17. **Восканян М. А.** Валютное регулирование в Армении в рамках инфляционного таргетирования: миф и реальность. XIX Кондратьевские чтения «Модернизация Российской экономики: уроки прошлого, шансы и риски», тезисы участников Чтений. Международный фонд Н. Д. Кондратьева, с. 316. 2011 с. 69-71

Сдана/Հանձնվել է՝ 23.06.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 28.06.2020
Принята/Ընդունվել է՝ 30.06.2020

Համավարակի պայմաններում ապահովագրական ընկերությունների տնտեսական գործունեության վերլուծություն

Հակոբյան Գ. Մ.
ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի մագիստրոս
(Երևան, Հայաստան)
hakobyan.1997@bk.ru

Վճռորոշ բառեր՝ *տնտեսական ներուժ, ներդրումային ակտիվներ, համավարակ, շահութաբերություն, ROA*

Анализ экономической деятельности страховых компаний в условиях пандемии

Акопян Г. М.
Магистр кафедры банковского дела и страхования АГЭУ (Ереван, Армения)
hakobyan.1997@bk.ru

Аннотация: в представленной статье обсуждались экономические показатели всех действующих в РА страховых компаний в течение COVID-19, сравнивались с аналогичными показателями прошлого года и был оценен экономический потенциал страховых компаний. Осуществлено объемное и отраслевое исследование инвестиций, осуществляемых страховыми компаниями РА.
Ключевые слова. Экономический потенциал, инвестиционные активы, эпидемия, рентабельность, ROA

Analysis of the Economic Activity of Insurance Companies in the Context of a Pandemic

Hakobyan G.M.
Master of banking and insurance Department of ASUE (Yerevan, Armenia)
hakobyan.1997@bk.ru

Abstract: The article discussed the economic indicators of all insurance companies operating in Armenia during COVID-19, compared with similar indicators of the previous year, and assessed the economic potential of insurance companies. A large-scale and industry-specific study of investments made by RA insurance companies was carried out.
Keywords. Economic potential, investment assets, epidemia, profitability, ROA

ՀՀ-ում կայուն և հուսալի ապահովագրական համակարգի կայացումը երկրի զարգացման ներկայիս փուլում բացառիկ կարևոր նշանակություն ունեցող խնդիրներից է: Մասնավորապես, դա պայմանավորված է նրանով, որ կառավարության կողմից որդեգրված տնտեսական աշխուժության պահպանման, տնտեսական աճի ապահովման և միևնույն ժամանակ աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերի իրականացման կարևոր բաղադրիչ է հանդիսանում պարտադիր ապահովագրության միջոցով սոցիալական և տնտեսական ոլորտների մի շարք հիմնախընդիրների լուծումը: Բացի այդ, առաջիկայում նաև ֆինանսական հատվածի բարեփոխումների և զարգացման հիմնական բաղադրիչ է հանդիսանալու գյուղատնտեսության և առողջության պարտադիր ապահովագությունների ներդնումը, որի ուղությամբ քայլեր այս օրերին էլ են իրականացվում: Այս խնդիրների լուծման համար իր հերթին պետք է պատրաստ լինի ապահովագրական համակարգը՝ ֆինանսապես կայուն, հուսալի և վճարունակության բարձր մակարդակ ունեցող ապահովագրական ընկերությունների ներկայացմամբ:

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ապահովագրական ընկերությունները կարող են իրականացնել ապահովագրական գործունեությունից բխող կամ դրա հետ ուղղակիորեն կապված գործառնություններ՝ ընդ որում՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով գործառնությունները, եթե դրանք օգտագործվում են ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ռիսկերը ծածկելու համար՝ կապված փոխարժեքի, տոկոսադրույքների փոփոխությունից բխող և այլ ռիսկերի հետ: Բացի բուն գործառնական գործունեությունից՝ օրեն-

քով ապահովագրական ընկերություններին թույլատրվում է իրականացնել նաև ներդրումային գործունեություն, մասնավորապես՝ ընկերությունները կարող են իրականացնել ինվեստիցիոն (ներդրումային) գործունեություն՝ իրենց անունից և հաշվին բաժնետոմսեր, պարտատոմսեր և ներդրումային այլ արժեթղթեր գնել կամ այլ կերպ ձեռք բերել, օտարել [1]:

Ներդրումների համար ապահովագրական ընկերությունը կարող օգտագործել ունեցած դրամական միջոցների միայն մի մասը, որոնց վերաբերում են ապահովագրական պահուստները և սեփական կապիտալը: Ընդ որում, ապահովագրական պահուստ հանդիսանում է ապահովագրական պարտավորություններից ժամանակավորապես ազատ դրամական միջոցների ամբողջություն միայն մինչև դրա օգտագործումն ապահովագրական հատուցումների ուղղությամբ: Սեփական կապիտալը հանդիսանում է ապահովագրական պարտավորություններից ազատ դրամական ներուժ, որը կարող սակայն օգտագործվել ապահովագրական հատուցումների վճարման համար ապահովագրական պահուստի անբավարարության դեպքում:

ՀՀ ապահովագրական ընկերությունների գործունեությունը մանրակրկիտ ուսումնասիրելու, Ինչպես նաև COVID 19-ի տնտեսական հետևանքների բացահայտման համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել ապահովագրողների տնտեսական ներուժի ձևավորումը և դրա զարգացման դինամիկան: Ինչպես գիտենք ապահովագրական ընկերությունների համար որպես ներդրումների աղբյուր (տնտեսական ներուժ) կարող են ծառայել ընկերության ակտիվները, սեփական կապիտալը, տեխնիկական պահուստները (Գծապատկեր 1):

2009 թվականին ապահովագրական ընկերությունների ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 45%, կազմելով՝ 16.9 մլրդ դրամ, 2010 թվականին ակտիվները կազմել են 25.6 մլրդ. դրամ, 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվների ամբողջ մեծությունը կազմել է 31.5 մլրդ դրամ, 2012 թվականին 38,3 մլրդ դրամ, 2013 թվականին գրանցվել է 31% աճ՝ 50 մլրդ. Ցուցանիշով: 2014 թվականին ակտիվների ծավալը նվազել է մոտ 14%-ով և տարվա վերջում կազմել 43.4 մլրդ դրամ, 2015 թվականին այդ ցուցանիշը կրկին նվազել է մոտավորապես 4.6%-ով, կազմելով՝ 41.1 մլրդ դրամ: Մինչև 2016 թվականի վերջին եռամսյակը ունենալով աճի միտում՝ ակտիվների մեծությունը կազմել է 44.9 մլրդ. դրամ, 2017-ին 49.5, իսկ 2018 թվականի հասել մինչև 51.6 միլիարդի, սակայն բոլոր ժամանակների առավելագույն արդյունքը եղել է 2019թ-ի վերջի դրությամբ՝ 62.78 մլրդ ՀՀ դրամ:

Գծապատկեր 1. Ապահովագրական ընկերությունների ակտիվների, պահուստների և սեփական կապիտալի փոփոխությունների դինամիկան 2009-2020թթ, հազ. Դրամ (Կենտրոնական Բանկի հայտարարած տվյալների հիման վրա https://www.cba.am) [2]



2012թ-ից հետո համեմատաբար կայուն դինամիկա են դրսևորել սեփական կապիտալի և պահուստների ցուցանիշները, որը պայմանավորված է եղել ԿԲ նորմատիվների (ուժի մեջ են մտել 2008թ-ից) հստակ իրացմամբ: Սեփական կապիտալը և տեխնիկական պահուստները ապահովագրական ընկերությունների համար համեմատաբար կոշտ ցուցանիշներ են և դժվար են արձագանքում շուկայական շոկերին, և ինչպես տեսնում ենք, 2019-06/2020թ միջակայքում չնայած առկա արտաքին շոկին (COVID 19) պահպանել են կայուն աճի միտումը:

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հայաստանյան ապահովագրական ընկերությունների ակտիվների ընդհանուր ծավալը նախորդ տարվա համեմատ աճելով 4 տոկոսով և կազմելով 51.6 մլրդ ՀՀ դրամ [3] կազմել է նույն տարվա ՀՆԱ-ի 0.8%-ը [4]: 2019-ին այս ցուցանիշը աճել է ևս 1 տասնորդական կետով: Համեմատության համար հիշեցնենք, որ Ֆրանսիայում և Անգլիայում այս

ցուցանիշը հավասար էր համապատասխանաբար 127.2% և 123.63%, իսկ ԱՄՆ-ում 39.11% [5]:

Առաջին հայացքից ստացվում է այնպես, կարծես թե, համավարակը էական ազդեցություն չի թողնում ապահովագրական ընկերությունների տնտեսական գործունեության վրա, սակայն դա հստակ հասկանալու համար անհրաժեշտ է վերլուծությունը մասնավորեցնել՝ ըստ առանձին 6 մասնավոր ընկերությունների (Գծապատկեր 2): Ինչպես կարելի է նկատել, Գծապատկեր երկուսում պատկերված է, ըստ ընկերությունների 2019թ-ի առաջին կիսամյակի և 2020թ-ի առաջին կիսամյակի ակտիվների ծավալը և ինչպես բոլորս տեսնում ենք ընկերությունները չնայաց համավարակին այս տարի գերակատարել են նախորդ տարվա միևնույն ժամանակաշրջանի ցուցանիշը (ևս մեկ փաստարկ, որ ապահովագրականների գործունեությունը չի տուժել համավարակից): Համեմատության համար նշեմ, որ նախորդ տարվա ցուցանիշները առավելագույն չափով գերակատարած ընկերություններն են “Նաիրի Ինշուրանս”-ը և “Արմենիա Ինշուրանս”-ը, համապատասխանաբար՝ 22% և 19%:

Գծապատկեր 2. ՀՀ ապահովագրական ընկերությունների ակտիվների փոփոխությունը 2019թ-ի և 2020թ-ի առաջին կիսամյակի համար, հազար դրամ [6]



Ակտիվների ծավալի պահպանումը կամ աճը դեռևս չի նշանակում տնտեսական կայունության ապահովում կամ տնտեսական ներուժի արդյունավետ իրացում: Հասկանալու համար, թե ապահովագրական ընկերությունները որքանով են իրացնում իրենց ներուժը և ինչպես են ազդում երկրում տնտեսական կայունության ապահովման վրա, առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել նրանց կողմից իրականացվող ներդրումների ծավալները և ուղղությունները:

2019 թվականի դրությամբ ապահովագրական ընկերությունների կողմից կատարված ներդրումները ներկայացնենք Գծապատկեր 3-ի միջոցով: Գծապատկերներում ներկայացված տվյալներից հասկանալի է, ապահովագրական ընկերությունների ակտիվների ծավալների աճը ուղեկցվել է նաև նրանց կողմից իրականացվող ներդրումների աճով: Ապահովագրական ընկերությունների կողմից իրականացված ներդրումները 2020թ-ի հունիս ամսվա դրությամբ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ ավելացել են 23%-ով: Բոլոր ապահովագրական ընկերությունները ունեցել են ներդրումների ծավալի աճ, որոնց թվում կրկին առաջատար դիրքում են “Արմենիա Ինշուրանս” և “Նաիրի Ինշուրանս” ընկերությունները, համապատասխանաբար՝ 44% և 31.5% աճ գրանցելով:

Գծապատկեր 3. ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումները, 2019-2020թ., հազ. ՀՀ դրամ [7]



Հայաստանյան ապահովագրողների ներդրումային գործունեությունը և պորտֆելը համեմատելի չէ արտասահմանյան ընկերությունների փորձի հետ, որոնք ունեն բազմամյա փորձ և ապահովագրավճարների կայուն ներհոսք, ինչն ապահովում է ներդրումային մեծ պոտենցիալ: Մեծ դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերությունների ոչ մեկը չի զբաղվում կյանքի ապահովագրության ծառայությունների մատուցմամբ, ինչը ենթադրում է երկարաժամկետ ֆինանսական միջոցների առկայություն:

ՀՀ ապահովագրական ընկերություններն իրենց ակտիվները հիմնականում տեղաբաշխում են այնպիսի ներդրումային գործիքներում, ինչպիսիք են բանկային ավանդները, պետական, կորպորատիվ պարտատոմսերը, արժեղթերը, բաժնետոմսերը, կնքում են ռեպո

և հակադարձ ռեպո համաձայնագրեր, տրամադրում փոխառություններ:

Պետական պարտատոմսերում ներդրումները ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումների կարևոր ուղղություններից են:

Ինչպես գիտենք, ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդիսանում է ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի թողարկող: ՀՀ կենտրոնական բանկը, որպես ՀՀ կառավարության ֆինանսական գործակալ կազմակերպում է ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում [8]: Կենտրոնական բանկի կայքում հրապարակվում են պետական պարտատոմսերի աճուրդների վերաբերյալ նորությունները և հենց օնլայն համակարգով կազմակերպվում է աճուրդ: Աճուրդում առկա են կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պետական պարտատոմսեր:

ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի եկամտաբերությունը վերագնահատվում է ՀՀ ԿԲ կողմից ամեն օր և հրապարակվում կայքում եկամտաբերության կորի միջոցով: Ընկերությունը համաձայն կորի տվյալների՝ կարող է վաճառել պարտատոմսերը իրեն առավել շահավետ պայմանների առկայության դեպքում: Պարտատոմսերն ապահովագրական ընկերությանը ձեռնտու է վաճառել այն դեպքում, երբ դրանց եկամտաբերության կորն իջնում է, այսինքն եկամտաբերությունը նվազում է, ինչը բերում է պարտատոմսի գնի աճին:

ՀՀ ապահովագրական ընկերությունների մեկ այլ ակտիվ ներդրումային գործունեության ուղղություն է ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կնքումը:

Ռեպո գործարքը ֆինանսական գործարք է, որի ժամանակ մի կողմը արժեթուղթ է վաճառում մյուս կողմին և միաժանակ պարտավորվում է հետ գնել նույն արժեթուղթը որոշակի ժամանակ անց կամ մյուս կողմի պահանջով:

ՀՀ ապահովագրական ընկերությունները ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ են կնքում հիմնականում ՀՀ առևտրային բանկերի հետ: Ապահովագրողների ներդրումային պրակտիկայում առավել ընդունված է ռեպո գործարքների միջոցով միջոցների ներգրավումը: Ընդ որում, բանկերը կարող են առաջարկել տարբեր տոկոսադրույքներ ռեպո գործարքների կնքման համար:

Ապահովագրական ընկերությունները, ներգրավելով դրամական միջոցներ առևտրային բանկերից ռեպո գործարքների միջոցով, այդ միջոցները իրենց հերթին տեղաբաշխում են ներդրումային այլ ուղղություններում: Օրինակ, վերցված միջոցները տարբեր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որպես փոխառություն տրամադրելով կամ ներդնելով որպես բանկային ավանդ համեմատաբար ավելի բարձր տոկոսով՝ ապահովագրական ընկերություններն ապահովում են իրենց ներդրումային գործունեության արդյունավետությունը:

Շարունակելով վերլուծությունը՝ ներկայացնենք ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումների ուղղությունները 2019-2020թթ տվյալներով:

Գծապատկեր 4 ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումների ուղղությունները [9]



Ինչպես տեսնում ենք ժամանակավոր ազատ դրամական միջոցների տեղաբաշխման ամենատարածված ուղությունը ավանդներում ներդնելն է, որից հետո գալիս են պետական պարտատոմսերը, որոնց վերջին թողարկումը տեղի է ունեցել 03/08/2020թ-ին և առաջիկայում ևս ակնկալվում է [10]:

Քանի որ հնարավոր է տարբերակ, երբ ընկերությունները ունենային ակտիվների և կապիտալի աճ, իրականացնեին ակտիվ ներդրումային գործունեություն, սակայն կրեին ֆինանսական կորուստներ և զրկվեին շահույթ ստանալու հանարավորությունից, վեր-

ջին ցուցանիշները, որոնք ուսումնասիրվեցին այս հոդվածի շրջանակներում, ընկերությունների շահութաբերության ցուցանիշներն են:

Գծապատկեր 5 ՀՀ ապահովագրական ընկերությունների ներդրումային գործունեության եկամուտները 2019-2020թթ. համար, հազ. դրամ [11]



Գծապատկերից նկատելի է դառնում, որ “Ռոսգոսստրախ Արմենիա” ԱՓԲԸ-ն, չնայած մինչ այս ուսումնասիրած բացարձակ ցուցանիշներով առաջատարն էր, գործունեության մեջ գրանցած արդյունքներով ամենևին առաջատար դիրքեր չի գրավում: Բոլոր ընկերությունները 2020թ-ի իրենց վեցամսյա կուտակված շահույթի ցուցանիշը գերակատարել են: Առավելագույն արդյունք ունեցել է “Ինգո Արմենիա” ԱՓԲԸ-ն ապահովելով ավելի քան 968 մլն դրամի շահույթ՝ նախորդ տարվա սկզբից մինչև համադրելի հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջանի ցուցանիշը գերակատարելով 362%-ով: Եթե համեմատության համար վերցնենք 2020թ-ի ROA ցուցանիշները, ապա առաջատարը “Արմենիա Ինշուրանս” ընկերությունն է 14%-ով, որից հետո՝ “Նաիրի Ինշուրանս”-ը 9% և “Ինգո Արմենիա”-ն 7% արդյունքներով:

Այսպիսով իրականացնելով այս վերլուծությունը կարող ենք եզրակացնել, որ ՀՀ ապահովագրական համակարգը, արձագանքելով սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխություններին, ապահովում է տնտեսության կայունություն և ճկունություն՝ հանդիսանալով ճգնաժամային կառավարման արդյունավետ գործիք: Ընդ որում՝ ապահովագրական ընկերությունները չկորցնելով իրենց տնտեսական էֆեկտները կարող են ազդել և ազդում են ազգային եկամտի արդյունավետ վերաբաշխման վրա: Ապահովագրական ընկերությունների տնտեսական գործունեության վերլուծությունը ցույց տվեց, որ արտաքին շոկերի հանդեպ մեր ապահովագրական շուկան կայուն է, ունի ազատ դրամական զանգվածի արդյունավետ կառավարման մեխանիզմներ և կարող է հանդիսանալ տնտեսությանը աշխուժացնող հզոր լծակ: Ներկայիս համավարակը ևս մեկ անգամ ապացուցեց, որ ցանկացած ճգնաժամի պետք է պատրաստվել նախքան դրա սկսվելը, նախորոք պետք է ստեղծել վերահսկվող, կանխարգելիչ և պահուստային համակարգերը, որոնցում, անշուշտ մեծ է ապահովագրական ընկերությունների դերը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենք, 2007թ. հոդ. 80
2. Կենտրոնական Բանկի հայտարարած տվյալների հիման վրա https://www.cba.am
3. https://www.cba.am/am/SitePages/panalyticalmaterialsresearches.aspx
4. https://www.armstat.am/am/
5. Ցուցանիշը հաշվարկվել է օգտագործելով www.statista.com և http://www.oecd.org/ կայքերի տվյալները:
6. Ապահովագրական ընկերությունների 2019-2020թթ-ի միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:
7. Ապահովագրական ընկերությունների 2018 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա:
8. «Հայաստանի Հանրապետության պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության եվ երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման աճուրդի, հետգնման կազմակերպման եվ մարման սպասարկման» կարգը հաստատելու մասին ՀՀ ԿԲ Խորհրդի թիվ142-Ն որոշում, 07.06.2013
9. Ապահովագրական Ընկերությունների ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություններ (Ձև 6):
10. https://amx.am/am/34/information-centre/35/newsroom/item/2082/on-august-03-2020-amgt52028215-government-bonds-allocation-auction-took-place
11. Ապահովագրական ընկերությունների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (Ձև 5):

Сдана/Հանձնվել է՝ 24.08.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 28.08.2020
Принята/Ընդունվել է՝ 01.09.2020

Արժութային ճգնաժամեր, արժութային ճգնաժամերի ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա

Պետրոսյան Գ. Ս.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան (Երևան, Հայաստան)
gevorg.petrosyan307@gmail.com
Մինասյան Դ. Գ.
Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան (Երևան, Հայաստան)
davit.minasyan.1998@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *արժութային ճգնաժամ, սպեկուլյատիվ հարձակումներ, արժութային քաղաքականություն, փոխարժեքի կուրս, մոդելավորում*

Валютные кризисы. Влияние валютного кризиса на экономический рост РА

Петросян Г. С.
Армянский Государственный Экономический Университет (Ереван, Армения,)
gevorg.petrosyan307@gmail.com
Минасян Д. Г.
Армянский Государственный Экономический Университет (Ереван, Армения)
davit.minasyan.1998@gmail.com

Аннотация: В статье представлен суть валютного кризиса, причины по которым странам может грозить этот тип кризиса, а также последствия соответственно на экономический рост страны. Для моделирования влияния валютного кризиса на экономический рост были использованы данные из таких источников как Всемирный Банк и Статистический комитет Республики Армении. Были собраны данные с разрывом 24-х годов, с 1996-2018 гг. Также было использовано международный опыт моделирования валютных кризис. В конце для модели было выбрано 4 влияющих и 1 искусственно добавленный факторов на экономический рост РА. Была создана модель на основе метода наименьших квадратов(МНК). Результаты модели были показаны на темпы экономического роста. И по результатам самое большое влияние имеет рост населения- +11.8%.
Ключевые слова: валютный кризис, спекулятивные атаки, валютная политика, курс обмена, моделирование

Currency crises. Impact of currency crisis to Economic growth of RA

Petrosyan G. S.
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
gevorg.petrosyan307@gmail.com
Minasyan D. G.
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
davit.minasyan.1998@gmail.com

Abstract: The article presents the essence of the currency crisis, the reasons why countries may face this type of crisis, as well as the consequences of the crisis, respectively, on the country's economic growth. For modeling the impact of the currency crisis on economic growth, data from sources such as the World Bank and the Statistical Committee of the Republic of Armenia were used. Data were collected with a gap of 24 years, from 1996-2018. The international experience of modeling the currency crisis was also used. In the end, 4 influencing and 1 artificially added factors on the RA economic growth were selected for the model. The model is based on the least squares method (least squares). The results of the model were shown at the rate of economic growth. According to the results, the largest impact on Economic growth from the chosen factors has population growth : + 11.8%.
Keywords: Currency crisis, speculation attacks, currency policy, exchange rate, modeling

Համաշխարհային տնտեսության գլոբալացման և երկրների միջև սոցիալ-տնտեսական կապերի խորացման հետ համատեղ ավելանում են նաև ճգնաժամերի հաճախականությունը և նրանց ազդեցության մասշտաբները: Եթե անցյալ դարի կեսերին ճգնաժամերը կարող էին ունենալ կարճաժամկետ ազդեցություն առանձին երկրների վրա, ապա այժմ ազդեցության գոտիները կարող են ընդգրկել մի շարք երկրներ, ընդհուպ մինչև տարածաշրջաններ և պահպանել ազդեցությունը տարիներ շարունակ: Փոփոխություններ են տեղի ունենում ճգնաժամերի տեսակների մեջ և այժմ ամենահաճախ հանդիպող ճգնաժամերը հանդիսանում են արժութային ճգնաժամերը: Դրա մասին վկայում է արժույթի միջազգային հիմնադրամի աշխատանքային փաստաթուղթը, որտեղ նշվում է 151 բանկային ճգնաժամ, 236

արժութային և 74 պակասուրդային ճգնաժամեր:

Անցյալ դարի վաղ 90-ական թվականներից, եղել են արժութային ճգնաժամերի որոշ օրինակներ: Դրանք ազգային արժույթի հանկարծակի և կտրուկ արժեզրկումներն են, որոնք անկայուն շուկաների և ազգային տընտեսության նկատմամբ անվստահության հետևանք են: Երբեմն արժութային ճգնաժամը կանխատեսելի է, սակայն հիմնականում հանկարծակի բնույթ են կրում: Կառավարությունները, ներդրումները, կենտրոնական բանկերը կամ դրանց միավորումը կարող են պատճառ հանդիսանալ արժութային ճգնաժամերի: Եվ պատճառը մեծապես նույնն է լինում. բացասական պատճառները բերում են տնտեսական ճեղքվածքի և կապիտալի կորուստի: Այս հոդվածում մենք հետազոտում ենք արժութային ճգնաժամերի պատմական խթանները և բացահայտել նրանց պատճառները:

Արժութային ճգնաժամը համարվում է տնտեսական աղետների ամենավտանգավոր տեսակներից մեկը: Սպեկուլյատիվ հարձակումները վատ տնտեսական քաղաքականությունների հետ համատեղ արժութային ճգնաժամը պայմանավորող հիմնական գործոններ են: Արժութային ճգնաժամը այժմ հանդիսանում է լայն քննարկվող թեմա քաղաքական ու ակադեմիական բանավեճերի համար:

Բազմաթիվ արտասահմանյան ներդրողներ վերապրել են իրենց տնտեսական կյանքի որևէ փուլում արժութային ճգնաժամ: Մեքսիկայի, Արգենտինայի, Չինաստանի և այլ բազմաթիվ երկրների ազգային արժույթները բազմաթիվ տարբեր պատճառներով հանկարծակիորեն տատանվել են, որն էլ ամեն անգամ ունեցել է ազդեցություն այդ երկրների ներքին շուկաների վրա:

Արժութային ճգնաժամերի պատճառները պայմանավորող գործոնները սկսվում են կենտրոնական բանկի քաղաքականությամբ և ավարտվում զուտ շահարկումներով, և դրանք հաճախ դժվար է նախապես կանխատեսել:

Տնտեսագիտական գրականությունում առանձնացվում են արժութային ճգնաժամերի հետևյալ պատճառները՝ դրամավարկային անհավասարակշռությունը, վճարային հաշվեկշռի պակասը, արժույթի գերարժևորումը, արժութային ռեժիմների դերը, բանկային կորպորատիվ համակարգի կառուցվածքային թուլությունները [**13**]:

Առավել պակաս է խոսվում արժութային ճգնաժամերի հետևանքների մասին: Թեորետիկ և էմպիրիկ հետազոտություններում ուշադրություն են դարձվում առավելապես պատճառներին, այլ ոչ թե հետևանքներին: Սակայն կարելի է առանձնացնել մի քանի երևույթներ՝ արտադրության ծավալների կըրճատում, եկամտի փոքրացում, բարձր գործազրկություն, ֆինանսական հատվածի վերականգնման մեծ ծախսեր (Միլեսի-Ֆերրետտի և Ռազին 1998, Դաբրովսկի, 1999թ.), որոնք մեծանում են ու բարդանում ժամանակի հետ մեկտեղ:

Արժութային կամ այլ ֆինանսական ճգնաժամերի վերաբերյալ մի շարք հասարակական քննարկումների ժամանակ կարծիքների մեծամասնությունը ուղղված են ճգնաժամերի ծախսերին (Ստիգլից 1998թ.): Համաձայն այս տեսակետի՝ ճգնաժամերի անցանկալի երեվույթ են և պետք է խուսափել դրանից ամեն հնարավոր եղանակով: Սակայն նաև կարելի է այն կիրառել «պատժելու» համար կառավարությանը սխալ կառավարչական որոշումներ կայացնելու համար (Ռոդրիկ, 1996թ.): Սա կարող է կիրառելի լինել վերացնելու համար կաշառակերությունը միկրո և մակրո մակարդակներում:

2001 թվականին լեհ տնտեսագետներ Բլաշկեվիչը և Պաչինսկին փորձել են ներկայացնել արժութային ճգնաժամի ազդեցությունը տնտեսական աճի վրա ներկայացնելով Արևելյան Եվրոպայի՝ մասնավորապես նախկին ԽՍՀՄ երկրների տնտեսությունները [**13**]: Նրանք փորձում էին ներկայացնել արժութային ճգնաժամի հետևանքները՝ ներառելով քաղաքական փոփոխությունները: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվել են 41 երկրներ: 6 երկրներ՝ նախկին ԽՍՀՄ կազմից, 17 երկրներ, որոնք ինչ որ կերպ կախված են այլ երկրի տնտեսության փոփոխություններից, Հարավարևելյան Ասիայի երկրներ, որոնք կրել են վնասներ 1997 թվականին արժութային ճգնաժամի հետևանքով, ինչպես նաև Լատինական Ամերիկայի երկրներ:

Բլաշկեվիչը և Պաչինսկին առաջին հերթին ներկայացրել են որոշ մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխությունները մինչ ճգնաժամը և ճգնաժամից հետո: Սակայն այս աշխատանքում կներկայացվի միայն այդ ցուցանիշներից մեկի՝ տնտեսական աճի տեմպի վրա փոփոխությունը:

Ընտրված երկրների տնտեսական աճի տեմպերի մեդիանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որ ճգնաժամից դեռևս 3 տարի առաջ նկատվում է տնտեսական աճի տեմպի անկում և արդեն ճգնաժամի տարում այն հասնում է իր պիկին:

Լեհ տնտեսագետների հետազոտության արդյունքներով 3 տարի առաջ տեղի է ունեցել -1,5% ռեցեսիա և այն աստիճանաբար վերաճել է -6,5% ռեցեսիայի ճգնաժամի տարում: Սակայն ճգնաժամից հետո տնտեսությունները

կարողացել են կտրուկ վերականգնել ճգնաժամի հետևանքները և 1 տարի անց հասնել մինչճգնաժամյան մակարդակին: Այդ իսկ պատճառով շատ երկրներ կարող են օգտագործել այստեսակ ճգնաժամը որոշակի տնտեսական կամ քաղաքական խնդիրներ լուծելու համար:

Հետևելով լեհ տնտեսագետների հետազոտությանը, առ այն, որ ներկայացվել է արժութային ճգնաժամի ազդեցությունը տնտեսական աճի վրա, այս աշխատանքի նպատակն է եղել իրականացնել մոդելավորում ցույց տալով ՀՀ տնտեսական աճի վրա արժութային ճգնաժամերի ազդեցությունը:

Տնտեսական աճի տեմպը ընտրվել է որպես կախյալ փոփոխական, իսկ որպես անկախ փոփոխականներ ընտրվել են՝ կյանքի տևողությունը, ֆիզիկական կապիտալը, բնակչության աճի տեմպը, արժութային ճգնաժամը նկարագրող սպեկուլյատիվ ճնշումների ինդեքսը և մոդելի դասական պայմանները պահպանելու նպատակով հաշվարկված ցուցանիշ, որը ցույց է տալիս դիտարկվող տարվա ՀՆԱ աճի տեմպի կապը նախորդ տարվա ՀՆԱ-ի աճի տեմպի հետ:

Կոռելյացիոն մատրիցից կարող ենք նկատել, որ անկախ փոփոխականների միջև կապը մեծ չէ, որն էլ թույլ է տալիս շարունակել վերլուծությունը և կառուցել մոդելը:



Աղյուսակ 1. Գործոնների կոռելյացիոն մատրիցը (Հեղինակների հաշվարկներ)

Կիրառելով Eviews վիճակագրական փաթեթը և Python ծրագրավորման լեզուն կառուցվել է մոդելը, որն ունի հետևյալ տեսքը՝

Dependent Variable: GDP_PER_CAPITA_GROWTH__ANNUAL___ECONGROWTH
Method: Least Squares
Date: 06/28/20 Time: 15:53
Sample: 1999 2018
Included observations: 20

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
GDP_PER_CAP_FIRST_LAG	0.544796	0.068717	7.928157	0.0000
CCRISIS	-0.757668	0.425613	-1.780180	0.0968
LIFE_EXPECTANCY	8.967669	5.941441	1.509342	0.1534
PHYSICAL_CAPITAL	0.817631	0.204946	3.989505	0.0013
POP__GROWTH	11.81088	6.349580	1.860104	0.0840
C	-2.624840	1.519002	-1.728003	0.1060

R-squared	0.843882	Mean dependent var	-0.159528
Adjusted R-squared	0.788126	S.D. dependent var	7.019917
S.E. of regression	3.231254	Akaike info criterion	5.426942
Sum squared resid	146.1740	Schwarz criterion	5.725662
Log likelihood	-48.26942	Hannan-Quinn criter.	5.485256
F-statistic	15.13517	Durbin-Watson stat	1.795050
Prob(F-statistic)	0.000032		

Գծապատկեր 1. Գնահատված մոդելի արդյունքները (Տվյալները հավաքագրվել են՝ Համաշխարհային Բանկի տվյալների բազայից և ՀՀ վիճակագրական կոմիտեից)

Մոդելի գծային տեսքը հետևյալն է՝

ECONGROWTH=-2.62-0.76CCRISIS+8.97LIFEEXP+0.82PHYSCAP+11.81POPGROWTH+0.54Y(-1)

Գծային տեսքի մեկնաբանությունը կայանում է հետևյալում, որ եթե բոլոր ընտրված գործոնների տեմպերը չփոփոխվեն, ապա մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի տեմպը կնվազի 2.62 տոկոսային կետով: Մոդելի արդյունքների մեկնաբանման համար կիրառվել է ՓՔ մեթոդը: Մոդելի բնույթից ելնելով դիտարկվել են գործոնների աճի տեմպերը:

Այնուհետ արդեն ներկայացված է արժութային ճգնաժամի ազդեցությունը: Սպեկուլյատիվ հարձակումների ինեղեքսի աճի տեմպը 1 տոկոսային կետով ավելանալիս, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի տեմպը կնվազի 0.76 տոկոսային կետով: Սպասվելիք կյանքի տևողության աճի տեմպի 1 տոկոսային կետ ավելացումը կբերի կախյալ փոփոխականի 8.97 տոկոսային կետ ավելացման, ֆիզիկական կապիտալի դեպքում կախյալ փոփոխականի աճի տեմպը կավելանա 0.82 տոկոսային կետով և ամենամեծ ազդեցությունը կունենա բնակչության թվի աճի տեմպը 1 տոկոսային կետով ավելանալիս, որը կբերի 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի տեմպի 11.81 տոկոսային կետ աճի:

Իսկ GDP_PER_CAP_FIRST_LAG կամ որ նույնն է Y(-1) փոփոխականը ցույց է տալիս այն, որ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ի աճի տեմպը կախված է իր նախորդ ժամանակաշրջանի աճի տեմպի ցուցանիշից: (Y(-1)=0.54)

Մոդելի կառուցման համար ընտրված գործոնները նշանակալի են 90% վստահելիության մակարդակում, բացի սպասվող կյանքի տևողություն գործոնից, սակայն այն ներառվել է մոդել իր սոցիալական բնույթի համար:

Մոդելի որակը կազմում է 79%, այսինքն ընտրված գործոնները 79%-ով բացատրում են կախյալ փոփոխականը:

Prob(F-stat)~0 գործակիցը ցույց է տալիս, որ բոլոր գործոնների միաժամանակյա 0 լինելու հավանականությունը մոտ է 0-ի:

Եվ վերջապես Դարբին-Ուոթսոնի վիճակագինին, որը մոտ է 2-ի, ցույց է տալիս մոդելում ավտոռեգրեսիայի քիչ առկայության մասին, որը կիրառելի է ժամանակային շարքերով մոդելների համար:

Այն հաշվարկվում է հետևյալ մեթոդաբանությամբ՝

$EMPIc,t = (\alpha \times \%\Delta ec,t) + (\beta \times \Delta(ic,t - id,t)) - (\gamma \times (\%\Delta rc,t - \%\Delta rd,t))$,

որտեղ e-ն անվանական փոխարժեքն է, i-ն տոկոսադրույքն է, r-ը միջազգային պահուստների մակարդակը, c–ն հետազոտվող երկիրն է, իսկ d-ն այն երկիրն է որի նկատմամբ կշռված է տվյալ երկրի փոխարժեքը: α, β և γ կշիռներ են, որոնք համապատասխան փոփոխականների ստանդարտ շեղումների հակադարձ մեծություններն են:

Արժութային ճգնաժամը սահմանվում է, որպես վերոնշյալ ցուցանիշի էքստրեմալ արժեք, և արժութային ճգնաժամ բացահայտվում է այն ժամանակ, երբ EMPI գերազանցում է իր ընդհանուր միջին արժեքի 1.5–պատիկի և ստանդարտ շեղման գումարին, նույնն է թե՝

$CCi,t = 1$ եթե $EMPIi,t > 1.5 \times \delta EMPI + \mu EMPI$, երբ արժութային ճգնաժամ կա,

$CCi,t = 0$ այլապես, արժութային ճգնաժամը բացակայում է,

որտեղ δEMPI և μEMPI համապատասխանաբար EMPI մեծության պարզ միջինը և ստանդարտ շեղումն են [3]:

Ըստ Էյչենգրինի մեթոդի ՀՀ-ում արժութային ճգնաժամեր են արձանագրվել 1996, 1997, 1998, 2005, 2006, 2007 և 2013 թթ–ին՝ պայմանավորված արժույթի գերարժևորմամբ, և ընդգնաժամայինին մոտ իրավիճակ՝ 2014–թ ին:

Մոդելի արդյունքների մեկնաբանությունից պարզ դարձավ որ արժութային ճգնաժամերը բավականաչափ մեծ ազդեցություն ունեն երկրի տնտեսական աճի վրա և դրա ճիշտ ժամանակին հայտնաբերելն ու կանխարգելելը կարևոր նշանակություն ունի երկրի տնտեսությունը առողջացնելու համար: Սույն մոդելում արժութային ճգնաժամերի ազդեցությունը դիտարկելու համար ՀՀ-ի համար հաշվարկվել է սպեկուլյատիվ հարձակումների ինդեքսը և դրա հիման վրա բացահայտել են ՀՀ-ում տեղի ունեցած արժութային ճգնաժամերը ըստ Էյչենգրինի մեթոդի: Ստացվում է որ այս ցուցանիշի կիրառումը միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս նաև լուծել մեր առջև դրված մյուս խնդիրը՝ երկրում ճգնաժամային իրավիճակի առկայությունը և դրա ուժգնությունը բացահայտելը:

Հետևյալ աշխատանքը առաջին հերթին արդիական է իր բնույթով և միաժամանակ միակը իր տեսակով ՀՀ-ում: Այն կարող է կիրառելի լինել արժութային և այլ տեսակ ճգնաժամերի ազդեցությունների գնահատման և հետևանքների վերացման համար: Աշխատանքում կիրառվել են բազմաթիվ աշխատությունների օրինակներ և դրանք համապատասխանեցվել են ՀՀ տնտեսությանը:

Օգտագործվող գրականության ցանկ

1. **Anderson T., H. C.** (1981). Estimation of dynamic models with error components. . *Journal of the American Statistical Association*.
2. **Dornbusch**. (2001). A Primer on Emerging Market Crises. *NBER Working Paper No. 8326*.
3. **Eichengreen B., R. A.** (1995). *Exchange market mayhem: The antecedents and aftermath of speculative attacks. Economic Policy* .
4. **Eicher T., M. J.** (2009). *International economics.*
5. **Krugman**. (1979). A model of balance-of-payments crises. . *Journal of Money, Credit and Banking*.
6. **Kupper, J.** (2019). What is currancy crises? How Central Banks and governments get it wrong. *The Balance*.
7. **M., O.** (1994). The logic of currency crisis. *NBER Working Paper, No. 4640.*
8. **N., M.** (2009). Macroeconomics. *New York: Worth Publishers.*
9. **P., U.** (2015). *Factors affecting economic growth in developing countries. Major Themes in Economics.*
10. **RADCLIFFE, B.** (n.d.). What is currancy crises. *Investopedia*.
11. **Siwinska, J.** (2000). Currency Crises and Fiscal Imbalances: The Transition Countries Perspective. *Center for Social and Economic Research*.
12. **Stephen W. Salant, a. D.** (1978). *Market Anticipations of Government Policies and the Price of Gol*
13. Currency crises in Emerging-Market Economies: Causes, Consequencies and Policy Lessons, M. Blaszkiewicz, W. Paczynski, Warsaw 2002

Сдана/Հանձնվել է՝ 07.07.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 12.07.2020
Принята/Ընդունվել է՝ 15.07.2020

ОБРАЗОВАНИЕ

Կրթության լոգիստիկ շղթա

Սարգսյան Հ. Գ.
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, Հայաստան)
hasmikgs@gmail.com

Վճռորոշ բառեր՝ *կրթության լոգիստիկա, լոգիստիկ շղթա*

Логистическая цепочка образования

Саргсян А. Г.
Армянский государственный педагогический университет (Ереван, Армения)
hasmikgs@gmail.com

Аннотация: Внедрение логистики как возможности для науки в области управления образованием может привести к развитию механизмов социально-экономического развития образования. Как мы предлагаем вести понятие «образовательная логистика», для которого предлагается следующее определение в качестве рабочего определения? Логистика образования-это область создания образователь ных услуг, управления материальными, техническими и финансово-сервисными потоками, связанными с образованием, управления ими, их доставки потребителям, а также эффективного экономического планирования и контроля.
Ключевые слова: логистика образования, логистическая цепочка

Logistics Chain of Education

Sargsyan H. G.
ASPU (Yerevan, Armenia)
hasmikgs@gmail.com

Abstract: The introduction of logistics as an opportunity for science in the field of education management can lead to the development of mechanisms for the socio-economic development of education. How do we propose to introduce the concept of "educational logistics", for which the following definition is proposed as a working definition? Education logistics is the area of creating educational services, managing material, technical and financial-service flows related to education, managing them, delivering them to consumers, as well as effective economic planning and control.
Keywords: logistics education, logistics chain

ՀՀ-ում հանրակրթական դպրոցների աշակերտների և շրջանավարտների միջև փոխկապվածությունը փորձել ենք արտահայտել լոգիստիկ շղթայի միջոցով: Կրթության տնտեսագիտական մոդելը համեմատենք լոգիստիկ շղթայի հետ, ապա ակնհայտ է դառնում, որ դրանք լիարժեքորեն համադրելի են: Կրթությունն ունի ապրանքի ընտրության օղակ, այն յուրահատկությամբ, որ կրթության տնտեսագիտության մեջ այդպիսի ապրանք հանդես է գալիս «կրթական ծառայությունը», որը առարկայական չէ, անքակտելի է արտադրողից, արտադրվում և սպառվում է միաժամանակ, դրա արժեքը մշտապես փոփոխվում է: Ինչ վերաբերում է լոգիստիկ շղթայի կենտրոնում տեղակայված օղակներին, դրանք բնորոշ են ցանկացած բնույթի տնտեսական համակարգի, այդ թվում և կրթությանը: Կրթության համակարգում առկա են լոգիստիկայի բոլոր հոսքային ուղղությունները՝ նյութական, տեղեկատվական, ֆինանսական և ծառայությունների [**1**]: Ի վերջո, կրթության բնագավառի արդյունավետ կառավարման համար բարձր կիրառելիություն կարող են ունենալ լոգիստիկայի համակարգային մոտեցման, բացարձակ ծախսերի, գլոբալ օպտիմալացման, կոորդինացիայի և ինտեգրման, փոխզիջումների տեսության, սպասարկման զարգացման, ենթահամակարգերի անհրաժեշտ համալիրի մշակման, որակի համընդհանուր կառավարման, հումանիզացիայի, կայունության և ադապտիվության սկզբունքները [**3**]:

Ի վերջո, կրթության բնագավառի արդյունավետ կառավարման համար բարձր կիրառելիություն կարող են ունենալ լոգիստիկայի վերևում բերված համակարգային մոտեցման, բացարձակ ծախսերի, գլոբալ օպտիմալացման, կոորդինացիայի և ինտեգրման, փոխզիջումների տեսության, սպասարկման զարգացման, ենթահամակարգերի անհրաժեշտ հա-

Հանրակրթական դպրոցի աշակերտների և շրջանավարտների թվի փոխկապվածություն 2004-2018 թթ.

Ցուցանիշներ և արդյունքներ	
$\hat{y}_{1t} = -40453 + 0{,}193x_{t-2}$ $(t_{b1} = 5.8)$, $R = 0.868$, $R^2 = 0.755$, $F = 33.9$	$\hat{y}_{2t} = -60204 + 0{,}221x_{t-2}$ $(t_{b1} = 3.6)$, $R = 0.742$, $R^2 = 0.551$, $F = 13.5$
$t_{crit(\alpha=0.05;k=11)} = 2.2$, $F_{crit(\alpha=0.05;k1=1,k2=11)} = 4.84$	
